

299

Մ. ԶԱՌԱՔՅԱՆ ՅԵՎ Ա. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ ≡

ՅԵՎ

≡ ԱՇԽԱՏԱՆԲ

*Բնագիտության դասավանդման մեթոդական յեվ գործնական  
ցուցմունքներ ուսուցիչների համար*

5(075)

2-30

Խ. Զ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

20 MAY 2010

5(075)

9-30

24 MAY 2005

Մ. ԶԱՌԱՔՅԱՆ ՅԵՎ Ա. ԱՐԱՐԱՏՅԱՆ

30

ԲՆՈՒԹՅՈՒՆ ≡

ՅԵՎ

≡ ԱՇԽԱՏԱՆՔ

Բնագիտության դասավանդման մեթոդական լեզվ գործնական  
ցուցմունքներ ուսուցիչների համար



Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

12 APR 2013

### ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Աշխատանքային դպրոցի ծրագիրն ունի յերեք հիմնական սյուներ՝ քննություն, աշխատանքի հարուստ մատերիալն է, իսկ աշխատանքն՝ ալդ նյութը բազմակողմանի ուսումնասիրելու և ոգտագործելու միակ զինքը:

Բնություն ուսումնասիրելու անխոնջ աշխատանքով է, վոր պիտի բարելավենք մեր կյանքը և դուրացնենք հասարակության հարաբերությունների բարդ գործը: Ահա այս յերեք միաձուլ սյուների վրա չե կառուցված աշխատանքային դպրոցի շենքը, վորի զլխավոր առանցքը դարձյալ աշխատանքն է: Աշխատանքի բեղմնավոր արդյունքը պայմանավորված է կիրառվող մեթոդի ճշմարիտ և ուղիղ լինելուց: Ուստի մեզ համար ամենակարևորն է գտնել այն ճշմարիտ ուղին, վորով պիտի ընթանա ազատ, ուրախ, թեթև և բեղմնավոր աշխատանքը: Ահա այս է այն մեծ խնդիրը, վոր այսօր դրված է ամբողջ աշխարհի աշխատավոր մարդկության առաջ: Աշխատանքային դպրոցի նպատակն էլ հենց այդ է, վոր կյանքը կառուցող այնպիսի մարտիկներ պատրաստի, վորոնք աշխարհն ուսումնասիրելու և նրան փոփոխելու մեթոդները տիրապետած լինեն: Գլխավորը լինումն պեղանաները չեն կյանքն ստեղծողը, այլ այն պարզ ուղեղները, վորոնք կարողացել են ճշմարիտ մեթոդներով առաջնորդվել: Աշխատանքային դպրոցի ուսուցչին իր այս ծանր աշխատանքում ոգնություն ցույց տալու անկեղծ ցանկությունն է չեղել մեր այս մեթոդական և գործնական ցուցմունքների գիրքը հրատարակելու շարժառիթը: Այստեղ հիշված աշխատանքի ձևերն աչքի առաջ ունենալով պետք է ուսուցիչն ոգտագործի մեր մյուս գիրքը «Բնություն և աշխատանք» աշակերտների համար: Ի հարկե, մենք համոզված ենք, վոր մեր գրքում գրված նյութերը չեն կաշկանդի ուսուցչին. նա միշտ ազատ է այլ աղբյուրներից և հենց բնության հարուստ աղբյուրից իր նյութն ընտրելու, միայն այստեղ ցույց տված մեթոդն ու աշխատանքի նախագծերը պիտի ոժանդակեն նրան և նրա աշխատանքը դուրացնեն:

Ինչ վերաբերում է լայնարատորիայի կանափորման և փորձի տեսնիկայի վերաբերյալ մեր առաջադրած միջոցներին՝ մենք հավակնություն չունենք կարծելու, վոր մեր այս ձեռնարկով նյութն ամբողջովին սպառել ենք: Մենք միայն մի շարք տարիների փորձից ոգտվելով՝ աշխատել ենք այդ գործնական խնդիրների մասին ընդհանուր գծերով տալ խորհուրդների այն նվազագույնը, վորի բացն այնքան զգալի չե մեր մանկավարժական գրականության մեջ: Այն ինչ վոր հարմար կլինի մի տեղի համար, կարող է անհարմար կամ անիրագործելի համարվել մի այլ տեղի համար: Ուստի մեզ առանձնապես պարտավորեցրած կլինեն տեղերում աշխատող ընկեր գասատուները, չեթե ժամուկի կամ մասնավոր գրագրության մի-



24347 - 59

Գրանցվար № 259 բ.

հ. 577

Տիրած 3000

Պատերազմի չեղրորդ տպարան Յերևանում—660.

Նոցով հայտնեն իրենց գիտողութունները, վորով մեզ հնարավորութիւն տված կլինեն մեր թերին ուղղելու և ապագայում ավելի լրիվ աշխատանք կազմելու:

Իսկ նրանք՝ վորոնք կը ցանկանային ավելի բաղմակողմանի ծանոթութիւն ձեռք բերել հիշյալ խնդիրների մասին՝ խորհուրդ ենք տալիս ծանոթանալու ստորև հիշած աշխատութիւնների հետ, վորոնք և չեղել են մեր աշխատութեան գլխավոր աղբյուրները:

1. Проф. В. Н. Верховский. „Техника и методика химического эксперимента в школе“ часть первая.

2. К. П. Ягодецкий. «Летные занятия по естествознанию».

3. Проф. К. Шеффер. «Опыты над живой природой».

4. С. П. Аржанов, А. П. Пинкевич и К. П. Ягодовский—«Природа и труд», книга для учителя:

Մ. Զ. չեվ Ա. Ա.

### Ա. ՇԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Ժամանակակից դպրոցի ձգտումը պետք է լինի չերեխայի բոլոր աշխատանքներին տալ հետազոտական բնույթ: Նախ և առաջ բերենք այն մտախնայերը, թե ինչու այս մեթոդին այնքան կարևորութիւն ենք տալիս, հետո քննութեան կառնենք նրա ելութիւնը և մեր դպրոցներում կիրառելու հնարավորութիւնը:

Ժամանակակից դպրոցի հիմնական խնդիրն է՝ չերեխային պատրասել կյանքի համար: Յերեխան վնչ թե պիտի իմանա և հիշի, թե այս ինչ կամ այն ինչ հարցի մասին, այս ինչ կամ այնինչ ավտորիտետն ինչ է ասել, այլ նրանից մենք պիտի պատրաստենք մի առողջ մարդ, վորը գիտենա խորը գիտելի, շրջապատող կյանքի բոլոր մտմանները գնահատել, իր ամբողջ ելութեամբ մասնակից լինել նրան, աշխատանք փնտռել և նրա մեջ հաճույք և չերջանկութիւն զգալ, մի խոսքով մարդ՝ վոր կռիվ մղի աշխատանքի արատութեան և սոցիալիզմի կառուցման համար: Ահա թե ում է պատրաստելու ժամանակակից դպրոցը:

Այս նորագուն նպատակները դպրոցից պահանջում են դպրոցական աշխատանքի նորանոր ձևեր: Յեվ իսկապես, միթե կարելի չէ հին դպրոցի մեթոդները հարմարեցնել մեր նպատակներին: Սակայն չպետք է ուրանանք, վոր հին դպրոցի ազդեցութիւնը մեր վրա շատ խորն է և հիմա չեմք մեզանից շատերը նորի և հնի համեմատութիւնն անելիս զժվարանում են նրանց մեջ չեղած ներհակութիւնը նկատել: Հաճախ կլսեք այսպիսի հարցեր. միթե նախկին դպրոցն աշխատանքային չէր. միթե այնտեղ քիչ աշխատանք կար կամ աշխատանքային պրոցեսներ:

Ի հարկէ կար, բայց միթե հին դպրոցը չերեխաներին զգացնել էր տալիս աշխատանքի հաճույքը: Աշխատանքն այնտեղ ստրկի տանջանք էր, վոր կատարել էլին տալիս պատժի չերկուղի տակ: Յեվ այդ ստրկական աշխատանքը խարազանի միջոցով դաստիարակում և ստեղծում էր ստրկական հոգեբանութիւն: Ամեն մի աշակերտ միայն չերագում էր, թե յերբ պետք է ազատվի, վերջապես, դպրոցից: Վորովհետև դպրոցն իր սիստեմով դաստիարակում և մշակում էր մի չուրատեսակ վերաբերմունք դեպի աշխատանքը: Աշխատանքը չերեխայի համար մի ծանր ու դառն պարտականութիւն էր, աշխատանքն անեծք էր, աշխատանքը նրա համար կատարյալ դժբախտութիւն էր: Յերջանկութիւնն էլին համարում կամ բոլորովին աշխատանքի բացակայութիւնը կամ գոնե մինիմում աշխատանքը: Այսպիսի արամադրութիւնից էր բխում և հին դպրոցն ավարտող մեր պատանեկութեան ամբողջ աշխատանքայինը: Այդպիսի արամադրութեամբ էլ նրանք մտնում էլին կյանք կամ բարձրագուն դպրոց: Մասնագիտութիւնն ուղեկցեալ ընտրում էլին վորոշ հաշիվներով—վորտեղ քիչ աշխատանք լիներ և շատ փող:

Ամբողջ կյանքն այս սկզբունքի վրա չեր կառուցված, այդտեղից ել բղխում եր արհամարհանք դեպի աշխարհայտնի դասը, ձգտում դեպի շահագործումը և սուտ ու դորթով ստեղծվում եր անաշխատ — միսիմուս աշխատանքով կյանք:

Յեւ յեթե մենք ուզում ենք այժմ նոր դպրոց ստեղծել, ամենից առաջ պետք է հոգանք, վոր նա ազատված լինի նման «աշխատանքից»: Մենք պետք է չերեխալին տանք իսկական և հաճելի աշխատանք: Աշխատանք վոր նա կատարի խաղալով: Մեզ համար դպրոցական իդեալական աշխատանքն այն է, վորտեղ չերեխան հնարավորութիւն կունենա իր հոգեկան և ֆիզիքական ուժերի մաքսիմումը հրապարակ բերել և այն ել վոչ թե կողմնակի հարկադրանքի կամ պատժի չերկյուղի տակ, այլ աշխատանքի պրոցեսներէրէր բղխող ներքին ապրումներէր մղուով: Միմիայն այդ ճանապարհով կհասնենք աշխատանքային դաստիարակութեան և չերեխային հնարավորութիւն կտանք աշխատանքի մեջ չերջանկութիւն և ուրախութիւն զգալու:

Հայտնի կենսաբան և մանկավարժ պրոֆ. Պ. Բ. Լեպպաֆտը միջափազանց ընդունելի թեորիա ունի: Նա ասում է. «յեթե առողջ ու նորմալ որդանիւզնի որդաններին անհրաժեշտ աշխատանք չի ստանում, նա սկսում է տանջվել: Յեթե այդ մոմենտին նրան տաք վորեւ աշխատանք, նա պատիւ դրութիւնից կանցնի ակտիւ դրութեան և ուրախութիւն կզգա: Այդ ուրախ զգացումը կշարունակվի մինչև այն մոմենտը, չերք եներգիւցի պաշարը հատնելու և հոգնելու հետեանքով նորից կզգա տանջանք և նեղութիւն: Յեթե այդ ժամանակ աշխատանքն ընդհատեք, որդանիւզը հանգստի թեթեւացնող ուրախութիւն կզգա»:

Յերեխայի որդանիւզնի ել վորոշ զարգացման հասնելուց հետո պահանջում է աշխատանք, չեթե այդ աշխատանքը չկա՝ նրան տանջում է պատիւ դրութիւնը: Այդպիսի մոմենտներին չերեխան լարված փնտռում է մի օրչեկա, վորի վրա իր զարգացող ուժերն ու ընդունակութիւններն աշխատեցնի: Ահա թե ինչո՞ւ նա հարձակվում է ամեն մի նոր պատահած առարկայի վրա և դարձնում խաղալիք—մանկական աշխատանքի առարկա: Ահա, թե ինչո՞ւ չերեխան խաղի մեջ միշտ զգում է ուրախութիւն, նրա հոգեկան ապրումները բարձրանում են և որդանիւզը դնում ակտիւ վիճակի մեջ: Ուրեմն մենք կարող ենք այստեղից չեղրակացնել, վոր չեթե չերեխային մի վորոշ մոմենտի, վորոշ նյութ տանք, նա նրանով կզբաղվի, նրան կուսումնասիրի և մեծ բովականութիւն կզգա: Յեթե մենք նրան տանք նրա ձգտումներին համապատասխան աշխատանք, նա կհարձակվի նրա վրա և կսկսի ուսումնասիրել, ինչպես ուսումնասիրում է իր ձեռքն ընկած ամեն մի նոր իր կամ խաղալիք:

Յերք վոր մենք ասում ենք ուսումնասիրել, զննել, շատերին տարորինակ և թվում, թե ինչպես կարող է չերեխան ինքնագլուխ մի բան զննել և հասկանալ: Մեկը պետք է, վոր նրան թելադրի և հասկացնի: Ահա, հենց այստեղ է, վոր մենք պիտի պարզենք հետազոտական մեթոդի ելութիւնը: Վորպեսզի մեզ համար հասկանալի լինի, վոր թելադրանքը հիշյալ մեթոդի մեջ չի կարող դեր ունենալ, վոր նա տրամագծորեն հակառակ է նրան՝ ամենից առաջ պետք է վճռենք այս հարցը, թե կյանքի մեջ վորն է ամենակարեւորը—գիտնալը թե կարողանալը: Վերցնենք մի վորեւ պրոֆեսսորնալ

աշխատանք: Որինակ վիրահատ-բժշկի կամ մանկավարժի աշխատանքը, վորպես աշխատանքների ամենարարդ տեսակը և ատաղձագործի կամ հյուանի աշխատանքը, վորպես համեմատարար ավելի պարզ աշխատանք և տեսնենք, թե վոր մոմենտին և վոր դեպքում ինչ աստիճանի գիտութիւն և կարողութիւն է պահանջվում: Յերք բժշկի մոտ գալիս է հիվանդը, նա նրան քննում է, լսում է (պետք է նուրբ լսողութիւն ունենա, վորպեսզի գանազան ձայներն իրարից տարբերի—հարկավոր ելել կարողանալ), զննում է (պետք է տեսնել կարողանա, թե չե կարող է ամենակարեւոր փաստերն աչքաթող անել) սկսում է շոշափել (մկանային զգացողութիւն), հաճախ հոտ է քաշում, չերքեմն ճաշակում է և այլն: Ինչպես տեսնում ենք, այստեղ ամենից առաջ անհրաժեշտ է, վոր նա կարողանա տվյալ մոմենտին ուշադրութիւնը կենտրոնացնել, լավ զգայարաններ ունենալ և նրանց ոգտագործել իմանալ և ապա թե մասնագիտութիւն: Յերք այժմ բոլոր հարկավոր նյութերը հավաքել է, նա պետք է նրանց սխտեմի վերածի և իրեն պատկերացնի, թե որդանիւզնի վոր տեղը լավ չի աշխատում: Այս բանի համար, իհարկե հարկավոր է արդեն մասնագիտական պատրաստութիւն, բայց այդ գիտութիւնները նրան չեն ոգնի, չեթե նրա չերեխայութիւնը զարգացած չէ, այսինքն այստեղ ել հարկավոր է հավաքած փաստերի և գիտութեան տվյալների հիման վրա կարողանալ չերեխայել հիվանդ որդանիւզնի իսկական պատկերը: Սա ամենապատասխանատու մոմենտն է: Լավ դիակնոստը ամենից առաջ պետք է լավ չերեխայութեան տեր լինի: Յեթե շարունակենք հետեւել բժշկի մյուս աշխատանքներին, կտեսնենք, վոր այնտեղ ել անհրաժեշտ է սուր գիտողութիւն, ճիշտ և խիստ դատողութիւն և այլն. մի խոսքով՝ առաջին հերթին հարկավոր է վարժութիւն և կարողութիւն, իսկ գիտութիւնները ներածյալ տարրն են կազմում: Յեւ այժմ վոր միայն այդպիսի բարդ աշխատանքի մեջ, այլ փականագործն ել, հյուան ել, կառապաններն ել իրենց պրոֆեսսորնալ պարտականութիւնները կատարելիս ամենից շատ կարիք ունեն նախ՝ կարողանալու և ապա մասնագիտական գիտութիւններին:

Յերք մենք չերեխայութեան պես է պատրաստենք կյանքի համար, ամենից առաջ պես է նրանց մեջ գաւսխարակենք ունակութիւն չեւ կարողութիւն: Ժամանակ է վերջապես, վոր խոստովանենք, թե ունակութիւն և կարողութիւն դաստիարակել կարելի չէ միմիայն աշխատանքի պրոցեսում: Վոչ մի տաղանդավոր դասախոսութիւն կամ գաս մեզ չեն կարող սովորեցնել դիտող լինել, լավ տեսնել, պարզ ու խելացի մտածել, չեթե ինքնեք չենք դիտող, տեսնող և մտածողը: Իսկ կարող է չերեխան բոլորովին ինքնուրուշ տեսնել, լսել, դիտել և գտնել: Կարող է և շատ լավ կարող է: Թող այս բանում կասկածողները հիշեն, թե իրենք վոր հասակում են սովորել, թե գիրքը կամ մի վորեւ առարկա սեղանի վրայից բաց թողնելիս՝ վալը է ընկնում: Իհարկե, հենց այն ժամանակից, չերք ձեզ վոչ վոր չեր սովորեցնում: Մենք այդ բաները սովորել ենք մեր սեփական գիտողութիւնների ժամանակ. բայց չե՞ վոր այդ գլուտը չափազանց նշանավոր գիտական մի որենք է—ձգողութեան որենքը, վորի բանավոր ձեւակերպութիւնը մենք սովորել ենք անհամեմատ ավելի ուշ, միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում: Մենք կարծում ենք, այսքանն ել բավական է հասկանալու համար, վոր չեթե չերեխան բոլորովին ինքնուրուշն ճանապարհ

հով կարողացել է բազմաթիվ փորձերից ֆիզիկայի որենքներ հանել, սերեմն ուսուցչի զեկավարութեամբ, առանձին չեքվալիթների լեզվ փաստեթ ուսումնասիրութեանը կարող ենք նա անոք սալ:

Ինչ վերաբերում է գիտութեաններին, այսքանը միայն կարող ենք ասել: Վոր փորձեցենք ձեր սեփական իմացածները վերհիշել և կհամոզվեք, վոր շատ լավ գիտեք այն՝ ինչ վոր ինքներդ հետազոտել և վերամշակել եք և վոր թե այն՝ ինչ վոր ձեզ սովորեցրել են:

Իհարկե, հեշտ է ասելը, թե ամեն ինչ տվեք չեք իտայի ձեռքը, թողեք, վոր նա ինքը ուսումնասիրի: Բայց այնքան էլ հեշտ չէ— անելը: Յերը չեք իտան սկսում է ծանոթանալ իր շրջապատի ուսուցչի յերևույթների հետ, նա կատարում է իսկական հետազոտական սշխատանք և նրա ամեն մի շարժումը վորոշ յեզրակացութեան է հանգում: Յերը առաջին անգամ նրա ձեռքը շաքար էք տալիս, նա շոշափում է իմանում է, վոր կոշտ է, տանում է քթի մոտ է իմանում է, վոր հոտ չունի, դնում է բերանը և իմանում է, վոր քաղցր է— այսպիսով նա տվյալ առարկան ուսումնասիրեց: Բայց զըպրոցական հասկում, չեք նա դպրոց է գալիս, իր շրջապատն ուսումնասիրած է լինում այնքան, վորքան նրա համար մատչելի յե չեղել: Յեթե նրա առաջ դնում ենք մի կտոր խիճ և ասում ենք «ուսումնասիրիր», նա խհարկե, առաջի մոմենտին չի հասկանա, թե ինչ պետք է անի: Նա դիտե, վոր խիճը դժվարութեամբ է կտորվում, վոր կտորվելուց հետո նա խայտաբղետ գույն ունի, վոր վերև ձգելիս շատ լավ թռչում է, համ և հոտ չունի է այլն, այս բոլորն իհարկե, գիտե ամեն մի յերեխա, վոր խիճերի հետ խաղ է արել, բայց չափազանց դժվարին կացութեան մեջ կընկնի, յեթե մենք նրան առաջարկենք «ուսումնասիրիր»: Նա ամենից առաջ չի իմանա, թե ինչ պետք է անի: Հարկավոր է նրան սովորեցնել, թե ինչպես պետք է ուսումնասիրի: Պես է ուսումնասիրելու ուղեկութեան լեզվ կարողութեան սեղծել: Ահա, սրանում է կայանում հետազոտական մեթոդի նշանակությունը:

Վորպեսզի կարողանանք հետազոտել սովորեցնել, պետք է պարզ և ճշգրիտ կերպով բնորոշենք հետազոտելու ելութեանը: Վերցնենք մի որինակ:

Յենթազոտենք, թե յերեխաների հետ միասին գնացել ենք Դիլիջանի կամ Ղարաբլիխայի անտառներն եքսկուրսիայի և մի շարք հարցեր ու նախագծեր ունենք առաջուց կազմած: Մեր այդ աշխատանքների ընթացքում հանկարծ մեզանից մեկը ճկատում է, վոր բոլոր ծառերը վոր թե ուղղահայաց գիրքով են, այլ թեքված են դեպի արևելք: Ուրիշներն էլ վորոնց նա ցույց է տալիս, սկսում են գիտե և հաստատել, վոր իսկապես, այդպես է: Մինչև այդ մոմենտը՝ բոլորը նայում էին, բայց ուղղութեան չեղին զարձրել, իսկ այժմ, յերը վորոշ նպատակով են նայում, այդ մոմենտից սկսվում է դիտելու աշխատանքը: Մենք շրջում ենք անտառի մեջ, անցնում ենք մեկ բլուրից մյուսը, չափում ծառերի թեքութեան անկյունները, նկարում, լուսանկարում և այլն: Յերեկոյան հավաքվում ենք և միասին մըտքերի փոխանակություն կատարում մեր որվա դիտածների մասին: Բոլորի կարծիքներն էլ այն է, վոր ծառերն ուղղահայաց գիրքով չեղին, այլ զգալի կերպով թեքված էին դեպի արևելք: Փաստն արդեն ճշտված է: Բայց բավական չէ փաստը հաստատել, այլ պետք է նաև նրա բացատրությունը տալ: Յերը մի վորոշ յերևույթ դիտում ենք՝ հարկավոր է նաև նրա զըպրոց-

պատճառն իմանալ: Ինչպես իմանանք: Բոլորս էլ մտածում ենք պատճառը վորոնելու մասին... վերջապես մեզանից մեկը մի հավանական յենթադրութեան՝ հիպոթեզ է անում— գուցե այստեղ մտապես փչում են արևմտահայաց քամիներ, այդ պատճառով ծառերը թեքված են դեպի արևելք: Բայց դա միայն հավանական յենթադրութեան է— հիպոթեզ: Նա կարող է լեզվ ճիշտ լինել լեզվ սխալ: այժմ պետք է մի հնար մտածենք այդ յենթադրութեանն ըստուգելու, քննութեան յենթարկելու:

Յեթե առաջադրած հիպոթեզը ճիշտ է, այն ժամանակ քամիներից լավ պաշտպանված տեղերում պետք է ծառերը բուսած լինեն ուղղահայաց: Հետևաբար պետք է վորոնել այդպիսի տեղեր և տեսնել, թե այստեղ ծառերն ինչպես են բուսած: Բացի այդ՝ յեթե այդ հիպոթեզը ճշմարիտ է, այն ժամանակ պետք է, վոր այդ կողմերում ուժեղ արևմտյան քամիներ լինեն, ուրեմն անհրաժեշտ է մշտական դիտարաններ կազմակերպել, վորպեսզի այդ քամիների ուղղութեանն ու ուժը դիտենք:

Ինչպես տեսնում եք այդ հիպոթեզն ստուգելու համար մենք պետք է զբաղվենք հատուկ դիտողութեաններով:

Յեվ իսկապես մի վորոշ ժամանակից հետո յերը անցանք հետևյալ բլուրներն ու մտանք այնպիսի փոս տեղեր, վորոնք պաշտպանված էին քամիներից, այնտեղ ծառերն ուղղահայաց գիրք ունեցին: Ուրեմն հիպոթեզն արդար սցավ: Յեվ յեթե ամբողջ տարվա դիտողութեաններից կպարզվի, վոր մեր դիտած վայրում տարվա յերեք քառորդն ուժեղ քամիներ են փչում արևմուտքից, այն ժամանակ մենք իրավունք կունենանք մեր հաշվեմատյանում արձանագրելու հետևյալը. «Մշտապես փչող արևմտյան ուժեղ քամիների հետևանքով, տվյալ վայրի ծառերի մեծ մասը խիստ կերպով թեքված են դեպի արևելք»:

Այժմ տեսնենք, թե ինչ ճանապարհով մենք յեկանք այդ յեզրակացութեան, վորի ճշմարտութեան մասին այժմ կասկածել չի կարելի: Մկըքում մենք միայն նայում էինք և տեսնում ուղղակի բազմաթիվ ծառեր, հետո մեզանից մեկը մասնագետեց մի վորոշ յերեխայի, հետո սկսեցինք գիտե և փաստը հաստատել, վերջինս բացատրելու համար հիպոթեզ առաջարկեցինք, այնուհետև աշխատեցինք այդ հիպոթեզն ստուգել (հատուկ դիտողութեան) և վերջապես յեկանք վորոշ յեզրակացութեան: Մենք հետազոտողութեան կատարեցինք տվյալ յերևույթի վերաբերմամբ:

Վերցնենք մեկ ուրիշ որինակ... Յերը միկրոսկոպը գտնվեց, շատ գիտնականներ սկսեցին ուժեղ մեծացումով գննել ինչ վոր պատահում էր, ի միջի այլոց նաև սիրիբախտ կոչված հիվանդութեան ժահրը: Ինչ վոր տեսնում էին, բարեխղճորեն նկարագրում և նկարում էին: XIX դարում Ֆլորանսիայի հայտնի գիտնական Լ. Պաստյորը ուղղութեանը դարձրեց, վոր սիրիբախտի վերքերն ուսումնասիրողները բոլորն էլ միևնույն բացիլնեն են տեսնում: Նա սկսեց ուսումնասիրել ուրիշ հիվանդութեանների վերքերից ծորոզ ժահրերը և համոզվեց, վոր սիրիբախտի վերքերում միշտ միևնույն տեսակի բակտերիաներն են, վորոնք ուրիշ հիվանդութեանների վերքերի վրա չեն պատահում: Դիտողութեանը հաստատեց մի վորոշ փաստ և մի վորոշ յերևույթ: Պաստյորը մի հիպոթեզ արեց. սիրիբախտի պատճառը տվյալ տեսակի բակտերիաներն են: Իր հիպոթեզն ստուգման յենթարկելու համար կատարած վորոնումների ժամանակ հետևյալ յեզրակացութեան յե-

կամ. յեթե հիպոթեզը ճիշտ է, ուրեմն այդ բակտերիաներն առողջ կենդանու մեջ տեղափոխելիս կենդանին պետք է հիվանդանա սիրիրախտով. բայց վորպեսզի այս բանում վոչ մի կասկած չմնա, պետք է գուտ այդ բակտերիաները լինեն: Պատասխանը այդ նպատակի համար զանազան միջոցներով գուտ սիրիրախտի բակտերիաներ բազմացրեց և հետո փորձ (եքսպերիմենտ) կատարեց, այդ բակտերիաներն առողջ կենդանու մեջ սրսկելով... նոր այն ժամանակ Պատասխանը չեկավ վորոչ **չեզրակացուքաց**—սիրիրախտն առաջ է գալիս այսինչ բակտերիաների պատճառով:

Այսպես ուրեմն յերկու որինակների մեջ էլ նախ՝ հավաքում ենք **առանձին փաստեր**, այդ փաստերից գաղափար ենք կազմում այն **չեբեվույթի մասին**, վորի գոյութունը հաստատում ենք **գիտություններ** անելով. յերևույթի բացատրութունը տալու համար անում ենք **հիպոթեզ**. վերջինս հաստատում ենք առաջին զեպքում **հասուկ կրկնակի գիտություններով**, իսկ յերկրորդ զեպքում՝ **եքսպերիմենտով**, նոր հետո՝ հանում ենք **չեզրակացություն**:

Ընդհանուր սքեմատիկ գծերով այս է հետազոտության ճանապարհը: Շատ հասկանալի չէ, վոր դպրոցական աշխատանքի մեջ հետազոտության կիրառումը գուտ այս ձևով հնարավոր չէ: Յեթե նույն իսկ մեր աշակերտները հանձարներ լինեյին, դարձյալ նրանք անընդունակ կը լինեյին դպրոցական մի քանի տարիների ընթացքում կրկնել այն ընդ որ հետազոտությունները, վորոնք կատարվել են մեզանից հազարավոր տարիներ առաջ, հազարավոր հետազոտողների ձեռքով: Հասկանալի չէ, վոր մենք պետք է յերեխաներին ոգնենք վորոչ չափով, բայց այնպես՝ վոր հետազոտական աշխատանքի ամենակարևոր մոմենտներն աշակերտները կատարեն ինքնուրույնաբար: Հետազոտական մեթոդի էությունն էլ հենց նրանումն է կայանում, վոր ոգնության այնպիսի անհրաժեշտ միջոցներ գտնենք, և հնարավորություն յեզածին չափ չը խանդարենք յերեխայի ինքնուրույնությունը:

Մեր ոգնությունը պետք է արտահայտվի նախ նյութ ընտրելու մեջ... —նյութը պետք է համապատասխանի յերեխայի ուժերին, ընդունակություններին և հետաքրքրությանը: Բայց այդպիսի նյութերն էլ չափազանց շատ են: Մենք պետք է բազմաթիվ հարմար յերևույթներից ջոկենք ամենագնահատելին, թե գաստիարակչական և թե գիտության տեսակետից: Այնուհետև այդ նյութը պետք է յերեխային առաջարկենք վորոչ սխտեմով: Այսպես որինակ. այդ սկզբունքի հիման վրա՝ աստիճանի գպրոցի յերեխաներին չենք կարող այնպիսի հարցեր առաջադրել, ինչպես մոլեկուլյար թեորիան է, կամ հյուսվածքների հետազոտությունը մանրագիտակով և այլն: Ամենաարժեքավոր նյութն, ի հարկե, կենդանական և բուսական սակավաթիվ որինակներից կարող ենք վերցնել, իսկ նյութը վորոչ սխտեմի վերածելու ժամանակ պետք է մի սկզբունք ի նկատի ունենանք—գալառագիտական, կոմպլեքս, համազրական թեմաներ և այլն:

Վորպեսզի պարզ պատկերացնենք, թե դարձյալ ինչու մ պիտի լինի մեր մասնակցությունը հետազոտական մեթոդով գրված աշխատանքի ժամանակ, վերցնենք մի կոնկրետ որինակ...:

Յենթադրենք, վոր անհրաժեշտ է մեր խմբերից մեկում գրազվել ամխաթթվական գազի խնդրով: Մենք ուզում ենք ամխաթթվական գազի վերամշակումը հանձնել յերեխաներին՝ հետազոտական մեթոդով կատարելու: Ի

հարկե ամխաթթվական գազի մասին գաղափար կազմելու համար յերեխաները շրջապատի կյանքից, առանց ղեկավարի՝ առանձին փաստեր հավաքել չեն կարող: Հետևաբար, մենք պետք է առաջնորդենք: Որինակ. մենք կարող ենք նրանց խորհուրդ տալ, վոր փորձ անեն հեշտայնոի խողովակի վրա մի մոմ կամ լուցիկի այրել, կամ ուղղակի կավճի վրա թթու ամելով ամխաթթվական գազ ստանալ և փորձել նրա մեջ մի բան այրել, կամ հավաքել արտաշնչած ողը և նրա մեջ նույն փորձը կատարել և այլն: Բայց այս յերևույթները յերեխաները չեն կարող ինքնուրույնաբար գտնել, բայց մեր ցուցմունքներով կատանան: Հետազոտական աշխատանքի սովոր մարդու համար ամխաթթվական գազի հարցը դրանով սպառված չի լինում. բայց աշակերտը կարող է բավարարվել վերև հիշած փաստերով, վոր հեշտայնոի խողովակի կամ կավճի վրա թթու ամելուց ոտացած և մեր արտաշնչած ողի մեջ՝ մոմը չի այրվում: Վորպեսզի մեր աշակերտն ավելի հեռուն գնա, մենք պետք է ցույց տանք, վոր նրա սկսած գործը չի վերջացել և պետք է շարունակել: Շարունակությունը կարելի չէ կատարել հարցմունքների ճանապարհով: Ներկա զեպքում մի շարք հարցերով կարելի չէ աշակերտի ուղղությունը հրավիրել նրա առաջ կատարված յերևույթներից բխող մի քանի մանրամասների վրա և նրան հիպոթեզ անել տալ, վոր դա ող չէ, այլ մի ուրիշ նյութ, վոր ողի նմանություն ունի: Բայց ինչպես գտնենք այդ հիպոթեզը ստուգելու ճանապարհը:—Մեր սկսնակ հետազոտողը նույնպես չի կարող գտնել և մենք դարձյալ պետք է զիմենք մի շարք ոժանդակ հարցերի ոգնության կամ ուղղակի նրան ցույց տանք, թե ինչպես պետք է ստեղծել մի ուրիշ այնպիսի յերևույթ, վոր նրա հիպոթեզը հաստատի կամ հերքի: Այդ յերևույթներին հետևելով աշակերտը վորոչ չեզրակացություն կը հանի: Այսպես ուրեմն. հետազոտական մեթոդը, մասնավանդ սկզբում, յերբ պետք է զեպի յերևույթը հետազոտական մոտեցման ունակություն ստեղծի, անխուսափելիորեն կապված է ղեկավարի ոգնության հետ: Իսկ ի՞նչ է քնում աշակերտի արամազրության տակ:—Վորպեսզի գրված հարցին վորոչ պատասխան տանք, բերենք մի այլ որինակ, վոր գրադրոցական աշխատանքի մեջ լիովին իրագործելի չէ:

Ոմբերից մեկին կտանք ուսումնասիրելու սպիրտի ճրագը և նրա հետ կապված այն հարցը, թե բոցի վոր մասն ավելի բարձր բարեխառնություն ունի և վորն՝ ամենացածր: Ուրիշ խոսքով՝ բոցի վոր մասն ավելի ձեռքեսու չէ մի բան քերտացնելու համար: Տեսնենք այս հարցն ինչ ձևով է աշակերտի առաջ գրվում և նրա մշակումով աշակերտն ի՞նչ ունակություն է ձեռք բերում—գաստիարակչական իմաստով վերցրած,

**Առաջադրույթուն**

Հանեցեք կափարիչը, պատրուզը գուրս քաշեք 1 1/2 սանտիմետր և նրա մագիկների վորոքը յետ բացարեք և ցրեք զանազան կողմ:

**Վերալեակում**

Տվյալ խոսքերի հիման վրա յերեխան պետք է բոլորովին վորոչ և ճշտորեն կատարի այդ աշխատանքը (շինարար յերևակացության աշխատանք): Այս աշխատանքի մեջ մասնակցում են—աչքը, շոշափելիքը, մկանները և միաժամանակ կատարվում է ձեռքի փոքր մկանների խիստ համազորձակից շարժում:

Կտրենք լուցկու գլուխը 1<sup>1</sup>/<sub>2</sub> սան-  
տիմետր չերկարութեան և մտցրենք  
պատուէջի մեջ՝ գլուխը դեպի վերև  
(նկ Ա 2):

Վտոնք կրակը և աշխատեք չը  
փչել, վորպեսզի բոցը չը տատանվի:

Ի՞նչ եք տեսնում:

Փչեք բոցի վրա այնպես՝ վոր  
նա ծովի դեպի մի կողմ:

Նորից խոսքի համաձայն աշխա-  
տանք (շինարարական չերևակա-  
յություն). նորից մասնակցում են  
աչքը, շոշափելիքը, մկանային զգա-  
յարանները և ձեռքի փոքր մկան-  
ների համադրժակից շարժում: Նը-  
կար կարգալու վարժություն:

Նորից շինարար չերևակայութեան  
աշխատանք. սովորական վարժու-  
թյուն շարժողական որդանների և  
զգայարանների. կամքի արագե-  
տութեան ուժով շնչառութեան զըս-  
պում:

Այս հարցը ստիպում է նրանց  
լարված ուշադրութեամբ նայել և  
փնտռել: Ուշադրութեանը կենտրո-  
նանում է. լուցկու գլուխը բոցի  
մեջտեղումն է և չի վառվում: Փաս-  
տըն այնքան բացատրիկ է, վոր ան-  
միջապես տեղիք է տալիս մի շարք  
մտածումների և հիպոթեզների: Մենք  
այդ գաղտնիքը չենք բաց անում,  
այլ անմիջապես տալիս ենք դար-  
ձյալ դիտելու մի այլ նյութ:

Աշակերտը կատարում է լարված  
ուշադրութեամբ, աշխատելով՝ վոր  
վոչ մի մանրամասնութուն աչքից  
բաց չը թողնի. նա արդեն դիտե-  
թե վորտեղ պետք է հատկապես  
իր ուշադրութեանը կենտրոնացնի  
(ինչ պիտի կատարվի լուցկու հետ):  
Լուցկին բռնկվեց:—Մի նոր փաստ  
է ավելանում ստեղծված հիպոթեզի  
շուրջը և ավելի վստահություն է  
ներշնչում մոտենալու նրա լուծ-  
մանը: Մենք կարծում ենք, վոր հե-  
տազոտական ունակութուն նոր ձեռք  
բերող չերեխայի համար այդ շատ  
զվար է, ուստի նրան ոգնութեան  
ենք հասնում այսպիսի ցուցմունք-  
ներիով:

Աշակերտն ինչ հիպոթեզներ էլ  
վոր անի, ի հարկե, բոլորը պետք է

Թողնք բոցը դարձյալ հանդարտվի  
և դուք ուշադրութեամբ դիտեք

աչն մութ մասը, վորտեղ լուցկին  
վառվեց: Նկարեցեք սպիրալի ճրագի  
բոցը և նրա մութ մասը գծերով  
սևացրեք:

կենտրոնանան սպիրտի ճրագի բոցի  
հատկութունների շուրջը: Տված  
ցուցմունքները նրան կը հարկա-  
դրեն հատկապես ուշադրութեամբ  
դիտելու բոցի կազմութեան մանրա-  
մասները, իսկ նկարելու պահանջը  
կստիպի նրան հաշվի առնել վոչ  
միայն չերևութի վորակական այլ և  
քանակական կողմը, այսինքն, բո-  
ցի մութ և լույս մասերի չափն ու  
դիրքը:

Նկարն իր բոլոր պարզութեամբ  
նյութ կտա մի շարք որդանների և  
մի շարք ընդունակութունների  
վարժութեան: Այստեղ չափազանց  
բաղձազան և նուրբ աշխատանք կա  
աչքերի և ձեռքերի համար և միե-  
նույն ժամանակ լարված ուշադրու-  
թյուն, չերևակայութուն, բաղդա-  
տութուն և այլն:

Ի՞նչ կարող եք ասել բոցի մութ  
և լույս մասերի բարեխառնութեան  
մասին:

Այս հարցն աշակերտի բոլոր մըտ-  
քերն ու հիպոթեզիկ կառուցումնե-  
րը կը կենտրոնացնի մի կետի վրա:  
Մտածողութեան այն պրոցեսսը, վոր  
զանազան չերեխաների մոտ կարող  
էր զանազան ուղիներով ընթանալ,  
այս հարցը կստիպի մի կետի հան-  
գել—բոցի բաբխառուութեան: Յե-  
թե մի քանի չերեխաների միտքն  
այլ ուղղութեամբ էր գործում, ար-  
ված հարցը նրան կստիպի ամեն  
ինչ արժեքավորել և գալ վորոշ յեղ-  
րակացութեան. ի հարկե այս դեպ-  
քում ամեն ինչ պետք է վերաբերի  
բոցի բարեխառնութեանը: Յե՛վ այս  
մտավոր աշխատանքը, կը հանգի  
մի չեզրակացութեան, վորը և կը  
ձևակերպվի: Բաց մենք հետախու-  
զական մեթոդ ենք սովորեցնում,  
այդ պատճառով՝ մենք աշակերտին  
չենք թույլ տալիս, վոր հանգստա-  
նա, այլ հետևյալ առաջադրութեամբ  
նրան ցույց ենք տալիս, վոր նրա  
հանած յեզրակացութեանը գեռ կա-  
րիք ունի ստուգման՝ կրկնակի դի-  
տողութունների միջոցով:

Վերջերք ձեր ձեռքի մեջ չերկա-  
թալարը և նրա ծայրը բռնեք ըս-  
պիւրտի ճրագի պատուպից քիչ հե-  
ռու և պահեք մինչև նրա կարմ-  
րելը (շիկանալը): Նրա վեր մասերն  
են շիկանում և ինչո՞ւ:

Այժմ յերկաթալարը բռնեք բո-  
ցի վերի մասի վրա: Հիմա ինչպես  
և շիկանում լարը:

Ուրեմն բոցի վեր մասում ավելի  
ձեռնառու յե բռնել՝ առարկան տա-  
քացնելու համար:

Ահա ձեզ մի փոքրիկ աշխատանք, վոր ընդամենը 15—20 բոցի չե  
տեսում: Ղեկավարը բանավոր ցուցմունքներով և հարցերով աշակերտին ոգ-  
նում և և չի թողնում բազդի բերմունքին. նա ուղղութիւնն է օտլիս. բայց  
միեւնոյն ժամանակ ստիպում է ամբողջ ժամանակ աշխատել վորոշ ուղղու-  
թյամբ: Աշակերտն իր գրքի մեջ նշանակած առաջադրութիւնը կարդալիս  
արդեն գիտե, թե աշխատանքի ժամանակ ինչ հարցերի հետ պիտի գործ  
ունենա, ինչ նպատակի պիտի ձգտի: Արդեն նրա ամբողջ հետաքրքրու-  
թիւնն ու ուշադրութիւնը գրավում են իր առաջ գրած գիտողութիւն-  
ները և զարթեցնում նրա միտքը: Աշխատանքի պրոցեսի ժամանակ այդ  
չերեւելիքների օճամանում նա բոլորովին ինքնուրույն է. զեկավարող ցուց-  
մունքներն ու հարցերը նպատակ ունեն նրան ոգնելու այն մոմենտներին,

Սկզբում շինարար չերեւակալու-  
թյան աշխատանք, հետո բոլոր որ-  
գանների, վորոնք մասնակցում են  
ստեղծած պատկերը վերարտադրե-  
լուն, այնուհետև լարված ուշա-  
դրութիւն, մտքի լարված աշխա-  
տանքի հետ միասին, վորով նա  
ձգնում և գտնել, թե ստեղծված  
փաստերի հարաբերութիւնից ինչ  
չերեւելիք պիտի ստացվի: Տված  
հարցն ոգնում է ուշադրութիւնը  
կենտրոնացնելու մի վորոշ կետի  
վրա և ստիպում է առաջուց գիտած  
բոլոր փաստերը միմյանց հետ բազ-  
դատել և ավելի վստահ խոսել գրա-  
նից առաջ հանած յեզրակացութիւն  
մասին: Այն, բոցի մուկ և լույս մա-  
սերը տարբեր բարեխառնութիւն  
ունեն:

Իսկապես չերեւելիք արդեն ուսում-  
նասիրված է, բայց անհրաժեշտ է վո-  
րոշ գործնական չեզրակացութիւն-  
ներ անել: Տրված հարցերը հարկա-  
գրում են նրան մի նոր չերեւելիք յե-  
րևան բերել և վորոշ գործնական  
հետեւութիւններ անել—այն և ա-  
ռարկան տաքացնելիս պետք է բո-  
ցի վերի մասում բռնել: Վորպեսպի  
այս աշխատանքի գործնական նշա-  
նակութիւնն ու անհրաժեշտութիւ-  
նը հասկանալի լինի, ուշադրութիւն  
գարձրեք, թե առհասարակ ինչպես  
են ոգտվում սպիրտի ճրագից տնա-  
լին պետքերի ժամանակ:

յերը մենք յենթադրում ենք, թե մեր տված առաջադրութիւնը նրա ուժե-  
րից վեր է կամ չերը նկատում ենք, վոր նա գրած նպատակից շեղվում է:  
Հենց մեր բերած որինակի մեջ. ամբողջ ժամանակը աշակերտը պետք է  
խոսքերին պարզ և չափած-ձեւած պատկերացում տա. չեթե այդ աշխա-  
տանքը բավականաչափ լավ չը դուրս չեկավ, նրա մյուս ետապն արդեն  
անհնարին է. աշակերտն անկարող կլինի իրականապես վերարտադրել և  
կատարել այն՝ ինչ վոր լրել կերպով չի պատկերացնում: Յեվ վոչ թե  
գուք, այլ նրա հետաքրքրութիւնն հետ կապված իր աշխատանքը՝ նրան  
կստիպի վերագառնալ և նորից լավ կատարել այդ աշխատանքը: Հագիվ  
թե կարելի չե մեկ ուրիշ ավելի կատարյալ միջոց գտնել ուշադիր և գիտա-  
կից ընթերցանութիւն: Բերանացի ցուցմունքների հիման վրա կառուցած  
և ինքնուրույն կերպով գիտակցած պատկերացումը նորից պետք է վերար-  
տադրի. նորից կակվի լուրջ աշխատանքի մոմենտը, վորի ընթացքում կը  
գործակցեն նրա զգայարանները, շարժողութիւնն որդանները, գիտակցու-  
թիւնն կենտրոնը և կամքը: Այդ աշխատանքի հետևանքը կը լինի այն յե-  
րեւելիքը, վոր պահանջում է գիտողութիւն, իսկ չեթե այդ ժամանակ նը-  
րան հաճախ ցուցմունքներ է տրվում, այդ նրա համար է, վոր աշակերտի  
ուշադրութիւնը մի վորոշ կողմի վրա ուղղվի: Բայց ինքը, գիտելու պրո-  
ցեսը և նրան հետևող գիտակցելու և առաջուց գիտած չերեւելիքների հետ  
բազդատելու պրոցեսը՝ ըլխում են բոլորովին ինքնուրույնաբար, բացա-  
ռութեամբ այն մի քանի առանձին մոմենտների, վորոնց մասին չերեւում  
խոսեցինք:

Կարող են ուրիշներն առարկել, վոր սա հետազոտական աշխատանք  
չե, վորովհետև նրա մեջ շատ բան ինքնուրույնաբար չի արվում: Այդ  
գեպքում վոչ մի սկսնակ գիտնականի աշխատանք չը պետք է համարենք  
հետազոտական: Նոր սկսող հետազոտողների մեծ մասը սկզբում կրկնում  
և իրենց նախորդների աշխատանքները, ոգտվելով ամենամանրակրկիտ  
ցուցմունքներից, շատ անգամ ամենայն մանրամասնութեամբ, քան ինչ  
վոր մենք արեցինք մեր բերած որինակի մեջ: Համենայն դեպս մենք այդ  
աշխատանքները համարում ենք հետազոտական:

Հետազոտական մեթոդի բնորոշումը տալուց հետո, մենք ուզում ենք  
ձեր ուշադրութիւնը հրավիրել մի շատ կարևոր մոմենտի վրա: Մեր բերած  
աշխատանքը կատարելիս աշակերտը գնում է հետազոտական ուղիով, ճըշ-  
մարիտ է, վոչ այն բարդ և խճողված ուղիով, վորով մարդկութիւնը գնացել  
է իր առաջ գրած վորեւ հարցի լուծման ընթացքում, այլ մեր կողմից բավա-  
կանաչափ հարթված ուղիով: Ամենից առաջ, հենց իրա մեջ է այդ աշխա-  
տանքի ամենազլխավոր արժանիքը, վորովհետև նրա պրոցեսում յերեխան  
հաղորդակից և լինում այն ուրախութիւնն ու չերջանկութիւնը, վոր տա-  
լիս է մարդուն սեղծագործական աշխատանքը: Հետո ապագայում, այս մեթոդից համաչափ ոգտվելու ժամանակ,  
նրա մեջ կը զարգանան աշխատանքային դաստիարակութիւնն ամենակա-  
րևոր մոմենտները **հարգանք, ձգտում յեվ սեր զեպի աշխատանք:**  
Հետազոտական մեթոդից լավ ոգտվելու գեպքում, նա գտնում է գո-  
րեղ խթան, նույն իսկ, զեպի աշխատանքի այնպիսի ձևերը, վո-  
րոնք սովորաբար վոչ թե հրապուրիչ են, այլ նույն իսկ վանող: Մենք  
բոլորս էլ գիտենք, վոր մեխանիքական աշխատանքը, սովորաբար, յերե-

խաներին շուտ ձանձրացնում ե. նրանք գործը չը վերջացրած դեն են ձգում՝ կիսատ գործած կողովը կամ կիսաշինած աթոռը և այլն: Յեթե այս կամ նման աշխատանքներին հետադոտական բնույթ տանք, բոլորովին այլ հետևանք կը ստանանք: Յենթադրենք, թե ընթացիկ աշխատանքի համար յերեխային հարկավոր ե փորձանոթների շտատիվ, առանց փորի նա իր աշխատանքը կատարել չի կարող, փորովհետև յերեք փորձանոթ դնելու տեղ չունի: Այդ դեպքում նա հաճույքով իր աշխատանքը մինչև վերջը կը կատարի, փորովհետև դրա խթանը՝ իր մյուս աշխատանքի հետևանքն ե: Սկզբում նրան կը գրավի, գուցե, նոր նյութը, աշխատանքի նոր ձևը, բայց յերբ թե մեկից և թե մյուսից կշտոցավ, կը շարունակի իր աշխատանքը վերջացնել, փորովհետև նա նրան հարկավոր ե, նա առանց նրան չի կարող շարունակել այն գործը՝ փորին իր ամբողջ էությունը ձգտում ե:

Բնագիտական առարկան ավելի արժեքավոր հիմքերի վրա դնելու համար մեթոդիկական վաղուց առաջ եր քաշել զատավանդուկյան մի ձև, վորին հետադոտական մեթոդից տարբերելու համար անվանում են ցուցադրական մեթոդ: Յեթե ուսուցիչն իր դասի ընթացքում իր բոլոր ասածները հաստատում ե փորձով, պրեպարատներ, պատկերներ, տախտակներ և մոդել ցույց աալով—այդ լինում ե ցուցադրական (իլյուստրատիվ) մեթոդ: Ի հարկե, այդպիսի գասից աշակերտները պարզ և ճշգրիտ պատկերացում ստանում են ուսուցչի ասածի մասին, բայց այդտեղ միայն ինքը ուսուցիչն ե ակտիվ, իսկ աշակերտը, վորի ամբողջ որգանիզմը ակտիվություն ե պահանջում, միայն գիտողի դերի մեջ ե, միայն լսում ե ուսուցչի յեզրակացությունները:

Ահա, այդ մեթոդների թերություններն աչքի առաջ ունենալով, մենք գալիս ենք այն յեզրակացություն, վոր հետադոտական մեթոդն ե միայն, վոր կարող ե ծառայել զպրոցի նպատակներին և յերեխայի շահերին: Այժմ գտնանք հետադոտական աշխատանքի ձևերին:

## Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐ

### 1. ԱՄՖՈՐԱՏՈՐԱԿԱՆ ԴԱՍ

Աշխատանքի այս ձևը համարում ենք ամենակարևորը, այդ պատճառով ամենից առաջ ձեր ուշադրությունը հրավիրում ենք նրա վրա: Մի-միայն լաբորատորական աշխատանքի ժամանակ ե, վոր աշակերտը կարող ե յերևույթների վրա հետադոտություն կատարել: Ձե՛ վոր բնական գիտություններն առաջին անգամ սկսեցին դարգանալ հենց այն մոմենտից, յերբ մարդը բնություն ամենասովորական յերևույթները բերեց լաբորատորիա և քննություն յինթարկեց: Մեր բոլոր քաղաքակրթական նվաճումները լաբորատոր, եքսպերիմենտալ հետադոտության արդյունք են: Առանց հողի լաբորատորական ուսումնասիրության՝ յերկրագործության մեջ հաջողություն ունենալ չեյինք կարող. արդյունաբերական նվաճումների գաղափար—նույնպես: Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու բոլոր հաջողությունները մենք պարտական ենք ամենից առաջ այն հանձարեղ մտքերի եքսպերիմենտներին, վորոնք կատարվում եին լաբորիատորիաներում վարակ պարածող բակտերիաների վրա: Մի խոսքով մեր ամբողջ կյանքը և ամբողջ շրջապատը միայն ան դեպքում մեզ հասկանալի կը լինի, յեթե պարզենք, թե ի՞նչ ե եքսպերիմենտալ մեթոդը և ի՞նչ դեր ե խաղացել նա ժամանակակից քաղաքակրթության մեջ: Յե՛վ յեթե մենք ձգտում ենք մեր ժամանակակից յերեխային տալ կյանքի զաստիարակություն, ամենից առաջ պետք ե նրան մատչելի դարձնենք այն մեթոդը, վոր ժամանակակից կյանքի և քաղաքակրթության հիմքն ե կազմում: Բացի այս ընդհանուր նկատառումներից, մենք պետք ե ընդունենք, վոր աշխատանքի ուրիշ վոչ մի ձև չի կարող այնքան խորը և բազմակողմանի բնագրկել յերեխայի ամբողջ էությունը, վորքան լաբորատորական դասերի սիստեմատիկ կատարումը: Բոլոր զգայարանները, ամբողջ շարժողական համակարգը, յերեակայությունը, գիտողականությունը, խիստ հետախո զակսն մտածողությունը, կամքը—այս բոլորը շարունակ աշխատում և վարժվում են, հետևվարար, զարգանում լաբորատորական աշխատանքների ժամանակ:

Սովորաբար լաբորատորիայի հակառակորդները գտնում են, վոր դրպրոցում լաբորատորիա ստեղծելը չափազանց արհեստական և կյանքի հետ առնչություն չունեցող մի բան ե: Որինակ, գյուղի յերեխա և հանկարծ—սպիրտայրոց, փորձանակ, ապակե խողովակներ և այլն: Ծիշտ ե, գյուղի յերեխան այդ իրերը չի տեսնում վոչ իր խրճիթում և վոչ ել գուբսր. բայց յեթե զպրոցի նպատակն ե և պարտականությունը նրան գտնե մի փոքր հաղորդակից անել ժամանակակից քաղաքակրթությանը, ապա ուրեմն վոչ միայն ծիծաղելի, այլ նույն իսկ վայրենի բան որ լինի յեթե մենք նրան չը ծանոթացնենք շրջապատի բնության ուսումնասիրության համար գոր-



ծաղրվող ամենատարրական միջոցների հետ: Մի՞թե ժամանակակից զպրոցի գերը կայանում է նրանում, վոր չերեխային պահենք կյանքի այն բնական պայմանների մեջ, ինչ պայմաններում վայրենին է ապրում:

Մինչև անգամ այնպիսի խուլ անկյուններում, վորտեղ չը գիտեն ինչ բան է ելեքտրականություն, բժիշկ, դեղատուն, այնտեղ էլ չերեխաների համար լաբորատորիան արհեստական չի լինի. նրանք կարողում ու լսում են այդ բոլորի մասին և նրանք խիստ պահանջ են դրում ամեն ինչ իմանալու և հասկանալու:

Ինչպես վոր քաղաքակրթության պատմության մեջ լաբորատորիան հարկավոր է չեղել, վորպեսզի բնության յերևույթները հասկանան և հետազոտեն, իսկ հետո ձեռք բերված հետևանքներով վերադարձել են նորից նույն բնության մեջ, կամ ձեռք բերված տվյալների հիման վրա վորևե արգելուարերություն կազմակերպել՝ այնպես էլ զպրոցի լաբորատորական հետազոտությունները պետք է միջնորդի դեր կատարեն: Մենք մեկ անգամից չենք վերցնում ողը և նրա հատկություններն ուսումնասիրում, այլ սկզբում դիտում ենք կյանքի և բնության մեջ մի շարք յերևույթներ, վորոնք չենք հասկանում. որինակ. մենք ամեն որ տեսնում ենք, թե ինչպես փչում է քամին և նրա փոփոխությունների հետ փոխվում է չեղունակը, բայց մենք միայն կատարվածն ենք տեսնում, իսկ թե ի՞նչ պ է կատարվում և ինչո՞ւ—այդ հասկանալ չենք կարող: Ամեն որ վառարանը վառելիս գիտենք, վոր հարկավոր է խողովակը բաց անել, բայց ինչո՞ւ, ի՞նչ է կատարվում այնտեղ, ինչո՞ւ փակ խողովակով վառարան վառել անկարելի յե—այդ բանը չենք հասկանում: Ահա, այսպիսի նման յերևույթները մեկ մեկու վրա բարդվելով մենք ավելի և ավելի համոզվում ենք, վոր մեր շուրջը կա մի բան, վոր շատ կարևոր դեր է խաղում և այդ բանը կոչվում է ող և այլն: Այս բոլորից հետո բոլորովին բնական կը լինի այդ անձանոթ «բան»-ը լաբորատորական քննության չենթարկել: Մի առ ժամանակ հեռանում ենք մեզ շրջապատող անմիջական դիտելի փաստերից. այդ ողը դնում ենք արհեստական պայմանների մեջ և ուսումնասիրում ենք նրա բոլոր հատկությունները, վորքան վոր մեր միջոցները թույլ են տալիս: Բայց մեր ձեռք բերած հետևանքները չենք թազցնում, նրանք մեզ շատ հարկավոր են, վորպեսզի այժմ իմանանք, ինչ բան է քամին, ի՞նչ պատճառներից է նա առաջանում, վորտեղից է նա փչում, ինչո՞ւ վորոշ պայմաններում անձրև կամ յերաշա է բերում և այլն, և միևնույն ժամանակ վորպեսզի ստացած գիտությունների և դիտած յերևույթների հիման վրա կարողանանք մտաավոր գուշակություններ անել յեղանակների վերաբերմամբ: Ճիշտ այնպես էլ այժմ իմացանք, թե ինչու վառարանը վառելիս պետք է խողովակը բաց անել. այդ գիտություններով դիմված այժմ մենք կարող են ասել. ինչպես անենք, վոր վառարանի ջերմությունը հիմնավորապես ոգտագործենք, տուն շինելիս վառարանը վորտեղ դնենք և այլն:

Այսպես ուրեմն կյանքից յեվ բնությունից գեպի լաբորատորական աշխատանքները—իսկ լաբորատորական աշխատանքներից—նորից գեպի բնություն յեվ կյանք:

Ի՞նչպես իրականացնենք լաբորատորական դասը:

Շատ հասկանալի յե, վոր չի կարելի չերեխային տանել յերևույթի մոտ, ասել «ուսումնասիրիր» և թողնել նրան բազդի քմահաճույքին: Մենք

արդեն տեսանք, վոր դրանից բան չի դուրս գա: Մենք պետք է չերեխային ոգնենք: Բայց այդ ոգնությունն էլ պետք է իր վորոշ ձևն ունենա: Որինակ, շատ անգամ ուսուցչի ոգնությունը լինում է հետևյալ ձևով, վոր մի ժամանակ գերմանական մանկավարժներին շատ էր վողևորում: Վերցնում է մի թեմա. ասենք կրաքար: Բոլոր աշակերտների ձեռքը տալիս է մի մի կտոր գրանիտ, ավազաքար և կավ. այդ քարերը լավ տեսնելուց հետո տալիս է մի մի կտոր կրաքար և հարցնում—

— Յերեխաներ, ձեր ձեռքինն ի՞նչ է:

— Գորշագույն քար:

— Ինչո՞ւ յեք դրան քար անվանում: Վճրտեղ եք տեսել: Այդ քարի իսկական անունն ի՞նչ է:

— Կրաքար:

— Ինչո՞ւ է դա տարբերվում սեղանի վրա դրված մյուս քարերից:

Յերեխաները համեմատում են քարերն արտաքին տեսքից. հետո նրանց առաջարկում է այդ բոլոր քարերի վրա մի մի կաթիլ թունդ քացախ կամ վորևե թթվուտ կաթեցնել:

— Ի՞նչ տեսար:

— Քացախի կաթիլը գրանիտի, ավազաքարի և կավի վրա վոշ մի փոփոխություն շատաջայրից, իսկ կրաքարն սկսեց թշշալ և բշտիկներ արձակել:

Այդ բշտիկներն ի՞նչ են ապացուցում:

— Վոր այնտեղից ինչ վոր գաղ է դուրս գալիս:

— Այժմ կարելի յե հեշտությունը ասել, թե դա ի՞նչ գաղ է:

— Այժմ չի կարելի:

— Ինչո՞ւ:

— Ինչպես իմանանք, թե ի՞նչ գաղ է:

Յեվ այսպես շարունակ հարց ու պատասխաններով ամբողջ դասարանը ուսուցչի ցուցմունքների համաձայն կատարում է միևնույն աշխատանքը: Ի հարկեյա յե հետազոտական մեթոդի ձեռքից մեկն է: Յերեխաներին սկզբից վոչինչ չի ասվում. վոչինչ չեն պատմում, իրենք են ստեղծում յերևույթը, ինքնուրույն կերպով դիտում, ինքնուրույն յեզրակացություններ հանում և այլն...: Բայց այս ձևի աշխատանքի մեջ կան մի շարք խոշոր բացասական մոմենտներ. 1. Յերեխաները մի շարք ձեռքի աշխատանքներ են կատարում առանց իմանալու թե գեպի ող են գնում. նրանք աշխատանքի հեռանկար չունեն. 2. Հարցերն այնքան մանրամասնացրած են, վոր յերեխաներին ինքնուրույն շատ քիչ բան է մնում անելու. 3. Ուսուցչի հարցերն այնքան արագ են հաջորդում իրար, վոր յերեխան հնարավորություն չունի կանդ առնելու, շուրջը նայելու և մտածելու դիտելի յերևույթի մասին. 4. Ուսուցչի հեղեղի նման իրար յետևից թափվող բազմաթիվ հարցերին բոլոր աշակերտները չեն պատասխանում. վորքան էլ վոր ուսուցիչն աշխատի բոլոր աշակերտներին հրապուրելի գեպի աշխատանքը, միևնույն է բազմաթիվ հարցերին միայն ավելի սկիտիվները կպատասխանեն, նրանք, վոր դիտած փաստերը հեշտությունը չուրացնում են, արագությունը ըմբոնում և հեշտ մտածում, իսկ ավելի պասսիվները միայն լսում են և ասածները կրկնում:

Վերել հիշած աշխատանքի ձևի բացասական մոմենտներից խույս տալու համար ամենահարմար միջոցն այն կլինի, վոր բանավոր ցուցմունք-

ների և հարցերի փոխարեն աշակերտի ձեռքը արվի մի գիրք, վորտեղ գրավոր կերպով մատնացույց ե արվում աշխատանքի ընթացքը և այն հարցերը, վորոնց պատասխանները տալու պիտի աշխատի աշակերտը:

Ուսուցիչը հայտարարում է, վոր այսօր պիտի կատարենք «Բնություն և աշխատանք» գրքի №... աշխատանքը: Յերեխաները լավ կարգում են այդ աշխատանքի նկարագրությունը: Այն ժամանակ չերեխաները կիմանան, թե ինչու են աշխատանքի ելությունը և բոլոր անհրաժեշտ պարագաները վերցնելով անցնում են աշխատանքի: Մեր գրքի մեջ նման աշխատանքները կազմելիս աշխատել ենք, վոր թելադրանքներ չանենք, այնպիսի ցուցմունքներ չտանք, վոր տվյալ հասակի համար ավելորդ լինի, վորքան հնարավոր է աշխատել ենք կարճ լինի և ավելորդ հարցեր չտանք: Այն աշխատանքները, վորոնց մեջ մեզ հաջողվել է հիշյալ նպատակները կիրառել, այնտեղ աշակերտը կգտնի այն ամեն անհրաժեշտ միջոցները, վորոնցով նա ինքնուրույն կարող է արված հարցը հետազոտել: Մենակ կամ խմբերով (2 կամ 4 մարդ) կը կատարեն այդ աշխատանքը և վերամշակման համապատասխան գրավոր պատասխան կտան բոլոր հարցերին: Վերպետի ավելորդ տեղը հարցերը նորից չարտագրի, աշակերտն իր ատարակի մեջ կը նշանակի հարցի համարը և նրա պատասխանը: Յեթե աշակերտը մի բան չի հասկանում կամ մի վորևէ բանում դժվարանում է—կը հարցնի ձեզ և դուք ծանոթանալով թե բանն ինչու է, ըստ այնմ էլ կվարվեք, դուք ե հարկավոր կլինի մի վորևէ բանում ցուցմունք տալ, չերբեմն կարող է պատահել, վոր մի հարցով էլ խնդիրը կլուծվի, յեթե, ասենք, այդ հարցը նրան կհիշեցնի մի փաստ կամ յերևույթ, վոր թյուրիմացությունը կպարզի և այլն: Ուսուցչի մանկավարժական տակտից է կախված, թե նա վեր գեպում ինչպիսի վերաբերմունք ցույց կը տա:

Իհարկե, մենակ է աշխատում աշակերտը թե ընկերների հետ՝ աշխատանքը չի կարող միշտ միաժամանակ վերջանալ: Ինչ անենք այդպիսի դեպքերում: Ինչ անենք նրանց՝ վորոնք աշխատանքը շատ վաղ են վերջացնում և նրանց՝ վորոնք չափազանց ուշանում են: Հետևեցեք առաջիններին. կարող է պատահել, վոր նրանց մեջ լինեն այնպիսիները, վորոնք աշխատանքը շուտ են վերջացնում, վորովհետև կատարում են չափազանց մակերեսորեն: Յուրջ ավելք նրանց աշխատանքի թերությունները և ասացեք, թե ինչպես պետք է նույնը մշակեն: Հետևեցեք նաև չերկրորդներին...: Շատ հաճախ աշխատանքից ուշանում են վոչ թե թուլները կամ աշխատանք չիմացողները, այլ նրանք, վորոնք ուզում են դիտել չերեվույթի մեջ խորը թափանցել. խորը մտածողները, վորոնք աշխատանքի պրոցեսում բռնվել են մի շարք հետաքրքիր մոմենտներով և մուսուներից չեա մնացել: Հաճախ հենց նրանք են իսկական հետազոտողները: Քննեցեք այդ խնդիրը: Թուլներին ոգնեցեք բայց ոգնեցեք այնպես՝ վոր աշխատանքի ընթացքում նրանց ինքնուրույնությունը չը աստի: Ուժեղներին ցույց տվեք, թե ինչպես պետք է զբաղվեն իրենց հետաքրքրող մոմենտներով և խրախուսեցեք, վոր աշխատանքը վերջացնեն և խմբին սպասեցնել չտան: Այդպիսի միջոցներով դուք պետք է շատ առաջ վազողներին մի փոքր չեա պահեք, իսկ չափազանց հետամնացներին առաջ հրեք. թեև միշտ էլ դուք կունենաք շատ վերջացնող խմբեր: Այդպիսիները համար լրացուցիչ աշխատանքի պաշար ունեցեք: Այդպիսի դեպքե-

րում սովորաբար, լավ կլինի տալ նույն հարցը վերամշակելու, տարբեր նյութի վրա:

Այստեղ կարող է հարց ծագել, թե ինչն է ստիպում մեզ, վոր անպատճառ ամբողջ խումբը միաժամանակ վերջացնի միևնույն աշխատանքը: Ինչու ամեն մեկին չթողնենք, վոր ամբողջ տարվա ընթացքում կամ թեկուզ ամբողջ խումբն անհատապես աշխատի չերք կամենա:

Նախ աշխատանքի այս ձևը կուլիկտիվ գործունեություն ունակություն կզարգացնի: Յերկրորդ՝ լաբորատորական դասերը պետք է ընդհատվեն եքսկուրսիաներով ու զբույցներով: Այդպիսի դեպքում վոչ միայն կարևոր է, այլ և անհրաժեշտ է, վորպեսզի ամբողջ խումբը վորոշ նյութ, վորոշ ժամանակամիջոցում վերամշակի: Ասենք, թե մենք ունենք մի այսպիսի նախագիծ,—կավե աման (տանը դիտելու), կավը բնության մեջ (էքսկուրսիա), կավի հետազոտությունը (մի շարք լաբորատորական դասեր), կավի ոգտագործումը (էքսկուրսիա կավարդյունաբերություն վայրերը, աղյուսի գործարան, բրուտանոց), կավի նշանակությունը մարդու կյանքի մեջ (զբույց վոչ միայն ժամանակակից, այլ և քաղաքակրթության պատմություն հետ կապված հարցերի մասին): Շատ հասկանալի չե, այսպիսի մի նախագիծ վերամշակել հնարավոր է միայն ամբողջ խմբի միաժամանակ աշխատելու պայմանում:

### II. ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ ԴԱՍ

Հնարավոր չե միշտ և ամեն տեսակ հարցեր լաբորատոր դասով լուծել: Այսպես որինակ, կարող եք դուք ջերմաչափի մասին լաբորատոր դաս կազմակերպել: Գուցե ձեզանից շատերն ասեն, թե կարիք էլ չկա: Ի հարկե, հարցին այդ կերպ մոտենալը շատ սխալ կը լինի. վոչ միայն ջերմաչափի, այլ և ջրհան մեքենայի, էլեքտրական լապտերի մասին էլ պետք է առաջին աստիճանի դպրոցի չերեխան ճիշտ պատկերացում ունենա: Քանի վոր վոչ մի հնարավորություն չունենք մի նման չերևույթ ամեն մի աշակերտի ուսումնասիրություն նյութ գարձնելու, մեզ միայն մի չեք է մնում, ամբողջ դասարանին ջերմաչափի կազմությունը ցուցադրել: Ի հարկե, այսպիսի պարագմունքը հետազոտական բնույթ ունենալ չի կարող:

Ուսուցիչն ամենից առաջ պետք է հոգ տանի, վոր ցուցադրելի չերեվույթը միանգամայն մատչելի և դուրըմբոնելի լինի ամբողջ խմբի համար: Այդ պատճառով դասարանում ցուցադրվող փորձի ժամանակ գործադրվող բոլոր պարագաներն ամենայն մանրամասնությամբ պետք է ծանոթ և հասկանալի լինեն ամեն մի աշակերտի համար: Հենց այդ նպատակով էլ չը պետք է դասարան բերել արդեն առաջուց պատրաստված ու հավաքած գործիքն և ուղղակի փորձ անել: Ամենաուսանելին և նպատակահարմարն այն կը լինի, վոր փորձի գործիքները պատրաստվեն անմիջապես աշակերտների մասնակցությամբ. վորպեսզի ամբողջ խմբի համար պարզ ու հասկանալի լինի աշխատանքի ամեն մի մանրամասնությունը: Յեթե գործիքը, փորձը կամ ցուցադրելի չերևույթն աշակերտներն իրենց տեղից լավ չեն տեսնում կամ ըմբռնում, պետք է նրանց կանչել ուսուցչի սեղանի մոտ և շուրջ կանգնեցնել այնպես, վոր փոքրերը լինեն առաջ, իսկ մեծերը չեա: Բայց այս միջոցն էլ կարող է իր նպատակին չը ծառայել, յեթե խումբը մեծ է: Այդ-

պիտի զեպքում լավ կլինի խումբը խմբակների բաժանել և ամեն մեկ խումբակին առանձին-առանձին ցուցադրել փորձը:

Յեթե ձեր ցուցադրելիք փորձի նկարագրութունն աշակերտի գրքում կա, այն ժամանակ դասը պետք է տանել սովորական լաբորատոր ձևով: Յերեխաներն առաջ կարդում են աշխատանքի նկարագրութունը, հետո լուս հետևում են ցուցադրվող յերևույթի ընթացքին, վոր անմիջապես ներանց առաջ կատարվում է և պատասխանում այն հարցին, վորոնք տրված են աշխատանքի նկարագրութուն մեջ:

Իսկ յեթե ձեր ցուցադրելի դասն աշակերտի գրքում չը կա, այն ժամանակ, ի հարկ է, գիտելի յերևույթի զարգացման ընթացքում ինքներդ հետևողաբար հարցերը կուղղեք ամբողջ դասարանին և ցանկալի չե, վոր նման աշխատանքի արդյունքն արձանագրվի աշակերտների տետրակներում: Այդ պատճառով պետք է միշտ պահանջել նրանցից, վոր միշտ նկատեն հետազոտվող յերևույթի անհրաժեշտ մանրամասները և գրի առնեն գոնե այն յեզրակացութուններն ու հետևումները, վոր փորձից հանում է խումբը:

Շատ հասկանալի չե, վոր ցուցադրական դասի կրթական արժեքը լաբորատորական դասի արժեքից շատ բաներով ցածր է: Յերեխաների ակտիվութունը և ինքնուրույնութունն այստեղ չեն կարող լրիվ չափով մասնակցութուն ունենալ: Այդ պատճառով աշխատանքի այս ձևը պետք է գործադրել ծայրահեղ և բացառիկ դեպքերում: Ուսուցիչն ամեն ջանք պետք է թափի լաբորատորական դաս ստեղծելու և յեթե այդ բոլոր ջանքերը ցանկալի հետևանք չունեցան, նոր միայն կարելի չե յերևույթն ամբողջ խմբակին ցուցադրելու միջոցին դիմել:

Սակայն, ցավելով պետք է ասել, վոր մեր դպրոցների մեծ մասն այնպիսի պայմաններում են գտնվում, վոր ցուցադրական դասն անգամ իդեալ պետք է համարել: Լավագուցն դեպքում, մի նկար են ցուցց տալիս կամ մի հասարակ փորձ կատարում աշակերտների առաջ և դա համարում են գործնական պարագմունք: Մնացած ժամերն անց են կացնում ուսուցչի պատմածը թուլթակի նման կրկնելով կամ գրքից անգիր արած մի նկարագրութուն պատմելով: Խոսք կարճից և լինել, վոր այսպիսի պարագմունքն ստեղծագործութունից գուրկ լինելով հանդերձ՝ ձանձրույթ և ահաճութուն կարող է զարգացնել յերեխայի մեջ: Այս ձևի աշխատանքի առջև, ի հարկ է, ցուցադրական դասի արժեքը բարձր է:

III. Ե Ք Ս Կ Ո Ւ Ր Ս Ի Ա

Հետազոտական աշխատանքների ժամանակ եկակուրսիաների տեղը տարբեր գնահատութուն ունի: Շատ անգամ եկակուրսիան և հետազոտական աշխատանքը հոմանիշ են դառնում: Շատ հարցեր, բնականաբար, մշակվում են, բացառապես եկակուրսիաների ժամանակ: Որինակ. թոչունների չուն, նրանց բնակալումը, գետի հոսանքի արագության չափերը, վարած հողի խորության ուսումնասիրութուն և այլն, այս բոլորն սկզբից մինչև վերջը պիտի վերամշակվեն եկակուրսիաների ժամանակ: Վերջիններ մի այլ նյութ—կրաքարերը: (Ի հարկ է, յեթե տվյալ վայրում այդ քարերից կան): Եքակուրսիայի ժամանակ մենք կդիտենք կրաքարերի շերտերը:

հետո կը հավաքենք նրանցից բազմատեսակ որինակները և կը բերենք դպրոց: Այնուհետև մեզ համար կսկսվեն լաբորատոր աշխատանքներ: Մեծ խնամքով և յերկար կուսումնասիրենք նրանց հատկութունները և ապա նորից կը գնանք եկակուրսիա, վորպեսզի ուսումնասիրենք, թե մարդիկ ինչպես են ոգավում մեզ արդեն ծանոթ կրաքարերից և կյանքում ինչ բաների համար են գործադրում:

Յեթե մեր նպատակն է բնութայունը ճանաչել իր յերևույթների միջոցով, իսկ կյանքը՝ իր աշխատանքների, այն ժամանակ ուսումնասիրության միակ ճշմարիտ ուղին եկակուրսիան է: Եկակուրսիայի միջոցով մենք անմիջական հաղորդակցության մեջ ենք մտնում բնության հետ, և մեկնույն ժամանակ—կյանքի հետ: Մի շարք յերևույթներ, վորոնց հետ մենք պիտի հանդիպենք այս կամ այն եկակուրսիայի ժամանակ, կարող է պատահել, վոր հենց տեղն ու տեղն էլ ուսումնասիրենք ու վերջացնենք: Բայց մեծ մասամբ եկակուրսիաները մեզ տալիս են միայն նյութ և հարցեր, վորոնք ավելի մանրամասն և փորձնական ուսումնասիրության պիտի յինթարկվեն լաբորատորիաներում: Վերջիններս ինչպես առաջ էլ արդեն ասացինք, այս դեպքում դառնում են մի միջանկյալ մոմենտ, վորովհետև լաբորատորիական աշխատանքից հետո, մենք զինված կը լինենք անհրաժեշտ գիտելիքներով և նորից կուղևորվենք դեպի բնութայուն կամ կյանքը:

Հետազոտական եկակուրսիան, ինչպես վոր մեզ պատկերացնում ենք՝ պետք է բոլորովին նույն բնույթն ունենա, ինչ վոր լաբորատորական-հետազոտական դասը: Վոչ թե ուսուցչի պատմութուն և ցուցադրական պատկերավոր յերևույթներ, այլ յերևույթների ինքնուրույն գիտողութունը, իրերի ինքնուրույն և գիտական ճանաչումը, ինքնուրույն հետևանքներ ու յեզրակացութուններ դուրս բերելը—ահա, սրանք պիտի լինեն եկակուրսիայի հիմքերը: Այս բաներին հասնել կարելի չե կամ ուսուցչի կողմից տված հարցերի ճանապարհով կամ նախնապես ծրագրած ու մշակված թեմաներով: Շատ դժվար է եկակուրսիայի բազմազան նյութը դնել մի չոր ու սեղմ շրջանակի մեջ, բայց նրա հիմնական մոմենտներն, համենայն դեպս, կարելի չե յերևակայության մեջ պատկերացնել գոնե, այս չափով:

1. Յերեխաները պետք է իմանան, թե ուր և ինչու չեն դնում: Այդ պատճառով մի նախապատրաստական զրույցով պետք է նրանց պարզաբանել եկակուրսիայի նպատակն ու թեման: Ի հարկե, թեման պետք է բղխի, վոչ թե արհեստական կամ հենց այնպես, պատահական ձևով, այլ բնականապես յերեխաների բոլոր աշխատանքներից, պետք է կապ ունենա այն բոլոր հարցերի հետ, վոր տվյալ մոմենտին նրանց համադրական աշխատանքների թեման է յեղել: Այսպես որինակ. յենթադրենք, վոր նրանց վերջին զբաղմունքի տարկան յեղել է «բնակարան»-ը, բնականաբար, այս խնդրից կը բղխեն հարցեր շինարարական նյութերի շուրջ: Այս դեպքում բոլորովին բնական է եկակուրսիա պնակ ազդուսի գործարանը: Յեթե ասենք, քաղաքի դպրոցում մշակվում է քաղաքի և գյուղի կապը—թեման, բոլորովին բնական կը լինի յերեխաներին տանել շուկա կամ յերկաթուղու կայարան, վորպեսզի դիտեն, թե ինչ մթերքներ են ստացվում գյուղից: Աշխատանքի պրոցեսի ընթացքում յերեխաները կը մոտենան ուսուցչին այս կամ այն հարցով, իսկ ուսուցիչը նրանց ուշադրութունը

կը հրավիրի այս կամ այն դիտելու արժանի նյութի վրա, վորպեսզի իրենք վորոնեն այդ հարցի պատասխանը կյանքի կամ բնութիւն մեջ: Այս աշխատանքներից ել բնականաբար կը բղխեն այն մյուս հարցերը, վորոնք պիտի վորոշեն եկեղեցւորացի նպատակը.— թե ինչո՞ւ չենք գնում շուկա, ինչո՞ւ ենք գնում անտառ, դպրոցի բանջարանոցը և այլն: Այդ հարցերն իրենք չերեխաները պետք է ձևակերպեն կամ գուցե և գրի առնեն և ապա նոր խումբը կուղեորվի դեպի եկեղեցւորացի:

2. Յերևույթների դիտելն եկեղեցւորացի ժամանակ: Հաճախ այդ չերեցութիւններն այնպես են, վոր չերեխաներն իրենք կարողանում են փնտնել և հետազոտել. որինակ. գլուղական մթերքների արտադրութիւնը քաղաքի շուկայում: Այսպիսի դեպքում ուսուցչին մնում է միայն դիտողի դերում լինել և հետևել, վոր չերեխաներն ուղիղ ըմբռնեն և ուշադրութիւնները կենտրոնացնեն ամենակարևորների վրա: Բայց յերբեմն, որինակ բուսերի գոյութիւն կովի հարցը, այնքան ել հեշտ դիտելի չերեցութիւն չէ, այդպիսի դեպքերում ուսուցիչը չերեխաներին առաջնորդում է ոժանդակող հարցերով և մտակեցնում նման չերեցութի իմաստն ըմբռնելու:

3. Յերբեմն դիտելի չերեցութիւնների վերլուծումն այնքան պարզ ու տարրական է լինում, վոր ուսուցչի միջամտութիւն կարիքը բոլորովին չի պահանջում: Բայց շատ անգամ ել չերեխաներն իրենց շատ վորոշակի տեսած փաստն ինքնուրույն կերպով վերլուծելու անընդունակ են լինում: Որինակ. չերեխաներն ամեն որ տեսնում են, վոր խատուտիկները մեծ մասամբ ճանապարհների վրա յեն լինում, իսկ նույն ճանապարհի կողքին գտնված մարգագետնում գրեթե վոչ մի հատ չկա: Յերբ վոր դուք նրանց ուշադրութիւնը հրավիրում եք տվյալ փաստի վրա, նրանք հետևում են, ձեր ասածը հաստատում բազմաթիւ նման փաստերով, բայց այդ չերեցութիւն մեկնաբանել կամ նրա իմաստն ըմբռնել, առանց ձեր ոգնութիւն, չեն կարող: Ահա, այսպիսի դեպքերում ուսուցչի ոժանդակող հարցերն անհրաժեշտ են: Իսկ թե ինչպես պետք է այդ անել՝ մենք համապատասխան տեսչում ցույց կտանք: («Բնութիւն և աշխատանք» աշակերտների համար):

4. Նման եկեղեցւորացիներից հետո, յերբ ուսուցչի ոգնութիւնը չերեցութիւնները վերլուծվել և վերամշակվել են, շատ տեղին կը լինի չերեխաներին առաջադրութիւններ տալ, վոր ինքնուրույն կերպով վորոնեն նման չերեցութիւններ և ինքնուրույն կերպով վերլուծման չենթարկին: Այսպես, որինակ յենթագրենք թե չերեխաները դիտել և ուսումնասիրել են կարտոֆիլի պալարները և կարտոֆիլի բազմանայու չերեցութիւն պալարների միջոցով: Շատ նպատակահարմար կը լինի նրանց առաջարկել, վոր նրանք գնան վորոնեն և գտնեն այնպիսի բույսեր, վորոնք նման ձևով են բազմանում: Այդպիսի աշխատանքը մի շարք ոգնութիւն կունենան.— 1) չերեխաներն ինքնուրույն կերպով կփնտնեն նման չերեցութիւն բազմաթիւ փաստեր. 2) վորոնած չերեցութիւն վրա ինքնուրույն դիտողութիւն կատարելով, անմիջապես բազմաթիւութիւն կանեն հենց նոր հանած չերեցութիւնների հետ և 3) կը համոզվեն, վոր բազմացման նման ձևը, վոչ թե միայն կարտոֆիլին է հատուկ, այլ դա գոյութիւն կովի մի միջոց է մի շարք այլ բույսերի համար, և այլն:

5. Բոլոր եկեղեցւորացիները պետք է վերջանան մի աշխատանքով, վորի նպատակը պիտի լինի եկեղեցւորացի ժամանակ կատարածները մի

հայտարարի բերելը: Այդ աշխատանքը պետք է կատարել դասարանում: Համարյա ամեն եկեղեցւորացից հետո աշակերտին տրվում են մի շարք հարցեր, վորոնց նա պետք է գրավոր պատասխանի:

Մի նախազգուշացում անհրաժեշտ է ընկեր ուսուցչիչներին, վոր արտադրական վայրերն եկեղեցւորացի գնալիս— աղյուսի գործարան, բրտանոց կամ ձեթ-ոճառ գործարան և այլն— չը պետք է եկեղեցւորացի դեկը տալ վարպետի կամ բանվորի ձեռքը, վորովհետեւ նրանք կսկսեն պատմել և այնպիսի բացատրութիւն տալ, վոր եկեղեցւորացի հետազոտական բնութիւնը կը կորսվի: Նախապես պետք է անձամբ գնալ բանվորի կամ վարպետի ոգնութիւնը արտադրութիւն հետ մանրամասն ծանոթանալ և ապա եկեղեցւորացի դեկավարել հետազոտական խիստ սկզբունքներով:

Այս հանգամանքի վրա առանձնապես կանգ առանք նրա համար, վոր անձամբ շատ անգամ սկանառես ենք յեղել դպրոցական եկեղեցւորացիներին, յերբ ուսուցիչը մի կողմ քաշված՝ դեկավարութիւնը տրվել է մի պատահական բացատրողի ձեռքը: Աշակերտների հետաքրքրութիւնը սահման չը կա, բայց պատահական հարցերի և նրանց հաջորդող անսխտեմ պատասխանների տարափը քանդում են հետազոտական մեթոդի հիմքերը: Եկեղեցւորացի կորցնում է իր նպատակը և դառնում է մի սովորական զբոսանք: Մինչդեռ նա պետք է լինի **հետազոտական աշխատանք:**

IV. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԻՔ

Յեթե ձեր դպրոցում չերեխաների հետ կազմակերպում եք բանջարանոցային աշխատանք, ձեր նպատակը չպետք է լինի այս կամ այն քանակութիւնը կարտոֆիլ, գազար, բոդկ և այլն ստանալը, այլ այդ աշխատանքը ել պետք է կրի զճու հետազոտական բնութիւն: Այսպես որինակ, մի վորոշ տարածութիւնը հող պարարտացնում եք մոխրով և ցանում եք մի վորեն բույս, ապա նույն տարածութիւնը մի այլ հող առանց պարարտացնելու ցանում եք նույն բույսը և կատարում համեմատութիւն, թե վոր հողը ինչ արդյունք տվեց: Ի՞նչ բերք կ'ստացվի յեթե բոլոր հատկութիւններով նման չերեցութիւն հողերի մեջ ցանում ենք խիտ, իսկ մյուսի մեջ նոսր: Ի՞նչու կազմաբը, բարրիջար, տոմատը և այլն, սածիլներով ենք աճեցնում: Ի՞նչ արդյունք կ'ստացվի, յեթե կազմաբն ել այնպես բուսցնենք մարգերում, ինչպես գազարը, բոդկը և այլն: Ի՞նչու կարտոֆիլը բուկ ենք տալիս, ինչ արդյունք կունենար յեթե հակառակը վարվեցինք: Ի՞նչ պիտի արդյունք կ'ստացվի չերեցութիւն հողաբաժիններից, յեթե մեկում ցանենք ջոկած, ընտրովի սերմեր, իսկ մյուսում՝ սովորական, չջոկած և չընտրած սերմեր:

Բանջարանոցային աշխատանքների մեջ չերեխաների համար ամենաձանձրային քաղհան անելն է: Քաղհանելու մեխանիքական աշխատանքը վերածեցեք մոլախոտերի կլանքի և նրանց զարգացման ուսումնասիրութիւն դասի և դուք այնպիսի հետեանքների կհասնեք, ինչ վոր ցանկալի չէ աշխատանքային դպրոցի համար:

Յեթե արտադրական տիպի աշխատանքներից մի քանիսին զժվար և սոսի հետազոտական բնութիւն, այն ժամանակ նրանց միացրեք ուրիշ հետա-

զոտական աշխատանքների հետ: Մի լերկու-լերեք դազգահ կամ ատաղ-  
 ձագործական գործիքներ ունենալու դեպքում, լերեխաներին աթոռներ ու  
 շրջանակներ մի պատրաստել տաք, այդ բանը ին աստիճանի դպրոցի ա-  
 շակերտները բավականութամբ չեն սնի, այլ լերեխաների ուժը գործա-  
 դրեցեք այնպիսի փաշտե իրեր պարաստելու, վորոնք նրանց անմիջապես  
 պետք պիտի Կան եքսկուրսիաների կամ լաբորատորական աշխատանքների  
 ժամանակ, որինակ. եկկեր, զանազան շատտիվներ, պատվանդաններ, փայտի  
 ցցեր, համարակալած տախտակներ՝ բանջարանոցի մարգերի համար գործա-  
 ծելու և այլն:

Ի հարկե, վերև հիշած բոլոր աշխատանքների մեջ կարող են պատա-  
 ճել և այնպիսիները, վորոնք հետազոտական սկզբունք չունենան: Որինակ՝  
 կարող ե պատահել, վոր գուք ուզում եք ձեր դասարանը զարգարող նկար-  
 ների համար շրջանակներ պատրաստել կամ պլակատների համար՝ վահա-  
 նակներ և այլն: Բայց ընդհանուր առմամբ լերեխաների արտադրական աշ-  
 խատանքների հիմքը, ցանկալի չե, վոր լինի ցայտուն կերպով լերե-  
 վացող հետազոտական մոմենտը:

**Վ. ԿՅԱՆՔԻ ՅԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ  
 ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Ինչքան ել վոր պարզ և տարրական լինի այն նյութը, վորը դուք  
 ուզում եք ոգտագործել դասերի ընթացքում, լերեք չհիմնվեք այն բանի  
 վրա, թե լերեխաները շատ լավ դիտեն կամ ճանաչում են: Յերկրագնդի  
 վրա բոլոր լերկերներում բազմաթիվ փորձերով ապացուցել են, վոր շատ և  
 շատ լերեվույթներ, վորոնց հետ մենք ամեն որ հանդիպում ենք, չափա-  
 զանց անստույգ կամ անորոշ ըմբռնում ունենք նրանց մասին: Շատ հա-  
 ճախ մենք չենք իմանում, թե մեր ժամացույցի ցիֆերբլատը հուսովեական,  
 թե արաբական թվով ե գրված, մինչև վոր հատկապես այդ նպատակով ու-  
 շագիր չհայտնեք: Շատ անգամ չենք կարողանում ասել, թե ինչ նկարներ  
 կան կախված այն սենյակում, վորտեղ մենք ամբողջ որն աշխատում ենք.  
 վերջապես պատաստի գույնը, լուսամուտների ձևն և այլն, և այլն: Այս  
 փաստերը գալիս են մեզ պնդելու, վոր չի կարելի լերեխաների հետ խոսել  
 շուկայի, կառվի, աքաղաղի և այլ ծանոթ համարված առարկաների մասին,  
 մինչև վոր այդ իրը կամ մի նման նյութ հատուկ տեսողության առարկա  
 չգանա:

Նման դիտողություններ կատարվում են նաև եքսկուրսիաների և լա-  
 բորատորական դասերի ժամանակ: Բայց ժամանակի տնտեսություն և լե-  
 բեխաներին ինքնուրույն դիտողություններ կատարելու և նյութեր հավա-  
 քելու մեջ վարժեցնելու նպատակով, նրանց ձեռքը տրվելիք գրքում գրել  
 ենք այնպիսի աշխատանքներ, վորոնք լերեխաներից պահանջում են ինք-  
 նուրույն դիտողություն: Այս բանը մեծ նշանակություն ունի և այն տե-  
 սակետից, վոր շատ անգամ ուղղակի անհնարին ե բոլոր աշխատանքը դա-  
 սարանում և բոլորի մասնակցությունը կատարել: Որինակ. գուցե հնարա-  
 վոր լինի դասարան բերել կատու, հավ, շուն և՛ բոլորի աչքի առաջ ուսում-  
 նասիրել, թե նրանք ինչպես են շարժվում, կերակրվում և այլն, բայց ինչ-  
 պես վարվել ձի, կով և այլ խոշոր կենդանիների հետ: Յեթե ամբողջ

խումբը հավաքենք այդ կենդանու շուրջը, ելի լերեխաները պիտի դժվա-  
 րանան նրան մանրամասնորեն ուսումնասիրել: Ահա, այդպիսի դեպքում՝  
 միակ նպատակահարմար միջոցն ե, լերեխաներին տալ վորոշ ցուցմունք-  
 ներ, թե ինչպես պետք ե նրանք դիտեն այս կամ այն լերեվույթը, վոր-  
 պեսզի լերը նրանցից ամեն մեկն իր անհատական դիտողությունների ճա-  
 նապարհով հավաքած նյութերն ի մի հավաքի, հետո ընդհանուր զրույցի  
 միջոցով հնարավորություն ունենա ընդհանրացումներ անելու: Նման ձևի աշ-  
 խատանք կարելի չե անել և այն դեպքում, լերը հարկավոր ե գուտ կենսական  
 բնույթ կրող անհրաժեշտ նյութեր հավաքել:

**Վ. ԶՐՈՒՅՑ**

Հետազոտական մեթոդի մեջ ել շատ անգամ անհրաժեշտ ե լինում  
 զրույց մտցնել: Մենք այդ կանխահնք—**ՃԱԽԱՎԱՍՏԱՍԱԿԱՆ ԿԱՄ ՃԵՐԱ-  
 ԾԱԿԱՆ ԳՐԱՅԳ:** Ամեն մի ներ հարց կամ համադրական թեմա պետք ե  
 սկսել նախապատրաստական զրույցով: Բայց դա նյութի մշակում չե, այլ  
 նրա նպատակը բոլորովին ուրիշ ե: Անհրաժեշտ ե լերեխաների ուշա-  
 դրույթունը զրավել դեպի լերեվույթների մի վորոշ կարգ. անհրաժեշտ ե  
 նրանց մեջ հետաքրքրություն կարգացնել, անհրաժեշտ ե պարզել, թե լե-  
 բեխաներն ինչ աստիճանի ճիշտ և հստակ պատկերացումներ ունեն տվյալ  
 թեմայի շրջանակում, անհրաժեշտ ե գոտարանի հետ միասին մշակման ու-  
 դիներ վորոշել: Այդ զրույցի ժամանակ պետք ե թեմայի բազմակողմանիու-  
 թյունը ցույց տալ: Ահա այն հիմնական մոմենտները, վորոնք նախապատ-  
 րաստական ցրույցի բնույթը պիտի վորոշեն:

Վորոշ հարցի վերամշակությունը վերջացնելուց հետո անհրաժեշտ ե  
 լեզրափակման գրույց կատարել: Առանց այդ զրույցի լերեխաների ձեռք  
 բերած նյութերը թերի և անսխտեմ բնույթ կունենան: Ահա, այս և յեղ-  
 րափակման զրույցի հիմնական իմաստը: Մանավանդ կարևոր ե մի այդպիսի  
 զրույց ունենալ առանձնապես մեծ թեմաների վերամշակումից հետո: Այդ  
 թեմաների առանձին կողմերն ուսումնասիրելուց հետո, լերեխաները շատ  
 անգամ դժվարանում են նրանց ամբողջական կապը և կախումը պատկերաց-  
 նել: Յեղրափակման զրույցի ժամանակ ե, վոր պետք ե այդ բանն անել:  
 Միայն կանոնավոր և ուղիղ զրույցով կարելի չե կատարված աշխատանքի  
 նշանակությունը լերեխաներին ցույց տալ և ստացված հետևանքները նը  
 բանց առաջ դնել:

Նպատակի տեսակետից՝ լեզրափակման զրույցների շարքին կարող ենք  
 դասել նաև այն զրույցները, վորոնք անհրաժեշտորեն կազմակերպվում են  
 մի վորոշ հարցի շուրջը, լերեխաների ինքնուրույն ջանքերով հավաքած  
 դիտողություններից ու նյութերից հետո: Յենթադրենք, վոր մենք շաբաթ-  
 վա մեջ խմբին տվել ենք կովի վրա դիտողություններ կատարելու մի  
 խնդիր, վորոշ ծրագրով ու պլանով: Մի շաբաթից հետո յուրաքանչյուր ա-  
 շակերտ բերում ե իր հավաքած դիտողությունները: Այդ դիտողություն-  
 ների ստուգումն ու անհատական տեղեկություններից մի ամբողջական լեզ-  
 րակացություն հանելը պետք ե կատարվի զրույցի ճանապարհով:

Վերեվ հիշած բոլոր դեպքերում զրույցը չպետք ե հակասի հետազո-  
 տական մեթոդի պահանջներին, իսկ զրա համար ուսուցիչը պետք ե խույս

տա ամեն բան բացատրելու, բնդհանրացնելու և մը հայտարարի բերելու աշխատանքն իր վրա վերցնելուց: Զրուցյցի ժամանակ ուսուցչի դերը կաշտանում և նրանում, վորնա լավ մտածված հարցերի միջոցով ընդդժում և յերեխաների գիտակցութեան մեջ այն մոմենտները, վորոնք դրդում են նրանց հարցերի վճիռներն ինքնուրույնաբար կատարելու: Զրուցը նույնպես պետք և հետազոտական պայծառ բնույթ արտահայտի: Նա պետք է յեռանդ և ձրգտում առաջացնի յեզրակացութունները ու հետևումները խելացի կերպով կազմելու:

VII. ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ձևերի մեջ սա չիլ իր գլխավոր տեղն ունի: Իսկապես, մեզ կարող են բոլորովին արդարացի կերպով մեղադրել այն բանում, թե մեր ներկայացրած աշխատանքի ձևերը յերեխային վարժեցնում են միմիայն պատրաստի տված հարցերին պատասխանել: Իսկապես, թե դասագրքերում, թե զրուցյցների ժամանակ միմիայն հարցեր են տված, վորոնք պատասխաններ են պահանջում: Վերջապես չէրը և վճրտեղ պետք և աշակերտը վարժվի և կրթվի պարզ, կարճ և խելացի կերպով իր մտքերն արտահայտելու և իր ապրումներն ու գիտեցածը տալու: Չե վոր հատուկ այդ վարժութունն և կյանքում ամենակարևորը և վոչ թե դրված հարցերին պատասխան տալը:

Այս բոլորը ճշմարիտ են: Մենք ուսուցչից պահանջելու չենք, վոր այս չափազանց կարևոր մոմենտն իր ուշադրութունից չը վրեպի: Յեզրափակման զրուցը, բացի ուսուցչի ոժանդակ հարցերից, իր մեջ պիտի պարունակի կատարված գիտողութունների և այս կամ այն յեզրակացութուններին հանգելու միջոցների մասին մի կարակցական նկարագրութուն: Այսպես, որինակ, ասենք թե ջերմաչափի մասին նվիրված զրուցիցի մեջ յերեխաները կապակցական նկարագրութեան ձևով պատմում են, թե ինչպես և ինչ գործիքների ոգնութեամբ նրանք իմացան, վոր ջերմութունից մարմինների ծավալն ընդարձակվում է, իսկ սառցնելիս ընդհակառակը — սեղմվում: Թող նկարագրեն ուրիշ փորձեր և գրատաստակի վրա նկարեն, թող իրենց բոլոր աշխատանքներն այդ ձևով տան: Դա շատ ոգտակար է վոչ թե այն տեսակետից, վոր նրանք խոսելու ընդունակութուն ձեռք կը բերեն, այլ և այն տեսակետից, վոր դուք հնարավորութուն կունենաք ստուգելու, թե նրանք վճր աստիճանի գիտակից են վերաբերվել այդ բոլոր հարցերը մշակելիս: Մենք անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, վոր այդ նկարագրութուններին շատ լուրջ ուշադրութուն դարձնեք և չը բավականանաք միմիայն նրանով, վոր փաստացի նյութը ձիշտ և ուղիղ շտրագրված լինի, այլ ուշադրութուն դարձնեք լեզվի և արտահայտութեան կանոնավորութեան վրա: Մենք դեռ ավելի հեռու կը գնանք. մենք չափազանց ոգտակար ենք համարում վերամշակած նյութերից գրավոր շարադրութեան թեմաներ տալը: Ի հարկե, չը պետք է շատ հրապուրվել ընդարձակ թեմաներով: Ասենք թե դուք վերամշակել եք «գետ» համադրական թեման: Յեթե դուք հենց այդ թեման ևլ առաջարկեք աշակերտներին իբրև շարադրութեան նյութ, յերեխաներն անկարող կը լինեն նույն իսկ յերեկակայել, թե ինչպես պիտի այդ բոլորն իրենց շարադրութեան մեջ մտցնեն: Աշխատանքի կեսից արդեն նրանց մտքերը կը ցրվեն և կապակցութեան

թելը կը խճճվի: Իսկ մեզ համար բոլորովին այլ բան և հարկավոր կյանքի պահանջն է, վոր մարդ իր տեսածը, փորձածը, վերամշակածն ու իմացածը կարողանա պարզ, կարճ և խելացի կերպով արտահայտել: Այդ պատճառով մեր լավագույն խորհուրդն այն է՝ վոր նման աշխատանք տալիս բնորոշ փոքր, նեղ և բոլորովին վորոշ թեմաներ:

VIII. ՊԱՏԿԵՐ ՅԵՎ ՆԿԱՐ

Անհրաժեշտ է յերեխաներին վարժեցնել գրաֆիկ գրագիտութեան, այսինքն, պատկերներ և նկարներ «կարգալ»-ու ունակութուն ձեռք բերելու, դիագրամների և նկարների միջոցով իրենց մտքերն արտահայտելու: Մենք բոլորս շատ քիչ բացառութեամբ այդ տեսակետից անգրագետ ենք, այդ պատճառով չենք զգում նրա խիստ կարևորութունը: Չե վոր շատ անգամ մի քանի դժվար հասկանալի յերեխաները չարող եք փոխարինել մի փոքրիկ նկարով, ի հարկե, յեթի գործ ունեք գրաֆիկ-գրագետ մարդու հետ: Իսկապես, վորքան ժամանակ և աշխատանք է հարկավոր, վորպեսզի գրավոր կամ բերանացի կարողանաք հասկացնել յերեխային այն հասարակ գործիքի մասին, վորով ցույց են տալիս յերկաթալարի ընդարձակելը ջերմութունից, այն ինչ մի փոքրիկ նկար և մի քանի վերտառութուն ավելի հեշտ և շուտ կարտահայտեն ձեր ցանկացածը: Այս պատճառով հենց սկզբից յերեխաներին սովորեցրեք գործիքներ, սերմեր, պտուղներ, ցողունի կտրվածքներ նկարել, փոքրիկ դիագրամներ կազմել, բարեխառնութեան կտր գծեր գծագրել և այլն: Պատկերների, նկարների և դիագրամների ընթերցումը պետք է նույնպես մեր առաջադրած աշխատանքների ձևերի մեջ կարևոր տեղ ունենա: Դիագրամների պատկերավոր գծագրումները յերեխաների հիշողութեան մեջ անմոռանալի կերպով կը տպավորվեն:

IX. ՈՐ Ա Գ Ի Ր

Դասարանական կյանքի բոլոր անց ու դարձերը պետք է արձանագրվեն դասարանի որագրի մեջ: Կարևոր է, վոր աշխատանքների ժամանակ կատարված բնութեան կամ կյանքի վերաբերյալ բոլոր գիտողութուններն այս կամ այն ձևով արձանագրվեն: Բնութեան մի շարք յերևույթներ վորոշ նշանակութուն են ստանում և հասկանալի յեն դառնում միմիայն յերկարատե դիտողութուններից հետո: Որինակ. չի կարելի մի վորոշ մոմենտում թե ձյան կազմութունը և թե նրա վրա կատարված փոփոխութունները գննել: Նույնպես և մի վորոշ ժամանակաշրջանում անկարելի յե ողի բարեխառնութեան փոփոխումները դիտել և հարմարեցնել տարվա յեղանակներին, և այլն, և այլն: Նման բոլոր դեպքերում անհրաժեշտ է ամենորյա դիտողութուն և ամենորյա գրանցում որագրի մեջ:

Որագրերը պետք է լինի ամբողջ խմբի նախաձեռնութունը: Թե ինչպես կազմակերպել, դա արդեն կախված կը լինի խմբի կազմից: Որինակ հնարավոր է այսպիսի կազմակերպութուն մտցնել: Ամեն շարաթ խումբն ընտրում է յերկու կամ յերեք հոգի և նրանց վրա պարտականութուն է գնում, վոր որագրի մեջ անցկացնեն բոլոր գիտողութունները: Միայն նրանք ամբողջ խմբի ստացած առաջադրութունների կատար

բողոքներն են: Յեթե ձեզ մոտ ամեն որ ողի բարեխառնութեան, ամպամածութեան, քամիների ուղղութեան և այլ յերևութիւնների մասին գրի յեք առնում, այն ժամանակ այդ աշխատանքն ավտոմատ կերպով խմբակային դիտողները կը մտցնեն որագրի մեջ, բայց ամեն որ կարող են այդ դիտողութիւններինց դուրս ուրիշ դեպքեր ել պատահել, այսոր գետը բացվեց, այսոր տեսանք կուունկներ յերամ, այսոր առաջին անգամ ձյուն չեկավ և այլն: Վորպեսզի նման բոլոր յերևութիւնները որագրինց դուրս չը մնան, անհրաժեշտ է այսպիսի որևէք սահմանել: Խմբի ցրվելուց յերեք կամ հինգ բոպե առաջ հարց է տրվում, թե այսոր ի՞նչ ունենք որագրի մեջ մտցնելու: Թող բոլոր յերեխաներն ասեն ինչպիսի ուղղութեան արժանի բան կա, իսկ դասարանի դիտողները մի քանի բոպե մնան զըպրոցում և այդ բոլորը մըտցնեն որագրի մեջ:

Ի հարկե որագիրը պետք է կազմած լինի հաստ ու դիմացկուն տետրակից, վորպեսզի ամբողջ տարին բավականանա: Բայց որագրինց դուրս անհրաժեշտ է և ուրիշ ձևի գրութիւններ պահել: պատի վրա պետք է ունենայ մի թերթ, վորտեղ ամեն որ նշանակվի ջերմաչափի թվանշանները և բարեխառնութեան կոր-գիծը: Մեկ ուրիշ թերթի վրա ամպամածութեան և տեղումների պայմանական նշանները: Այս թերթերն ել որագիր են, միայն այլ ձևի: Թե որագիրը և թե թերթերը տարվում են զուգահեռ: Կարող է պատահել, վոր մի քանի դիտողութիւններ (բարեխառնութիւն, ամպամածութիւն, տեղումներ և այլն) թե տետրակում գրվեն և թե պատի տախտակի վրա գծվեն—կոր գծի ձևով:

Յեթե յերեխաներինց մի քանիսը կուզենան նման գրանցումներ կատարել իրենց տանը, թող անեն:

Տ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ահա աշխատանքի մի ուրիշ ձև, վոր թե կրթական և թե դաստիարակչական լավ հետեանքներ է խոստանում: Ամեն մի ուսուցիչ պետք է հոգ տանի, վոր յերեխաները պարբերաբար նամակագրութիւն ունենան ուրիշ դպրոցի յերեխաների հետ: Յերբ ձեր դպրոցը քաղաքումն է, կազմակերպեցեք այնպես, վոր նրանք գրագրութիւն ունենան գյուղի դպրոցի հետ, իսկ յեթե ձերը գյուղումն է, — ընդհակառակը: Յեզ դուք կը տեսնեք, թե վորքան գնահատելի տեղեկութիւններ կը հազորդեն միմյանց փոխադարձաբար գյուղը — քաղաքին և քաղաքը — գյուղին:

Այսպիսի թղթակցութեան նշանակութեան մասին խոսելն ավելորդ է: Բաղաքի յերեխաները շատ բաների մասին տեղեկութիւն չունեն, ինչ վոր գյուղի յերեխաների համար սովորական է և ամենուրեք, նույնը կարելի չէ ասել և գյուղի յերեխաների համար: Սակայն բոլորովին այլ տպավորութիւն է թողնում, յերբ յերեխան տեղեկութիւններն և ստանում իր դպրոցական քաղաքի ընկերոջից կամ «իսկական» գյուղի ընկերոջից: Այդ տեղեկութիւնները չափազանց կը մոտեցնեն յերեխաներին և նրանց հետաքրքրող խնդիրները կը կոնկրետացնեն:

Միմյանց թղթակցող յերեխաները մի գործունյա հարաբերութիւն կստեղծեն մարդկային յերկու խմբերի, յերկու կուլտիւրների մեջ: Նրանց ուղխատանքն արդեն ինքնին, մենակ դրանով կը լրջանա և նրա նշանա-

կութիւնն անչափ կը բարձրանա նրանց աչքում: Յերեխաները կը նկատեն, վոր իրենց աշխատանքն արդեն իրապես **հասարակակաճ** շահավետ գործի բնույթ ստացավ: Վերջապես վոչ վոր այնպես կենդանի կերպով չի կարող նկարագրել գյուղի և քաղաքի կապը, վորքան այդպիսի գրագրութիւնը: Բաղաքի յերեխան կը հասկանա, թե ինքը վորքան պարտական է գյուղին և գյուղի յերեխան կիմանա քաղաքի մեծ աշխատանքը:

Մենք կարծում ենք այսպիսի նամակագրութիւնն ավելի իմաստալից կը լինի, յեթե ուսուցիչը մասնակցի, ուղղութիւն տա, յերբեմն նույն իսկ դրգի, բայց չը «կառավարի»: Այս գործի մեջ վորքան կարելի չէ կառավարական միջամտութիւն քիչ պետք է լինի, վորպեսզի յերեխաները հասարակական ինքնագործունեցութեան վարժվեն: Միայն պետք է ուղղորդ լինեք, վոր քաղաքի և գյուղի մեջ կատարվող գրագրութիւնը վատասողջ «պատրիոտիզմ»-ի չը վերածվի:

Մենք կարծում ենք, վոր գրագրութեան ամենալավ ձևն այն կը լինի, յեթե այս կամ այն երակուրսիան, այս կամ այն աշխատանքը կամ հաշվետվութիւնը, յերեխաների ձեռքով կատարված համապատասխան նկարագարներով, պատկերներով, գծագրութիւններով, դիագրամներով, մի խոսքով ինչ վոր աշխատանքի տեսակին անհրաժեշտ է, նամակի ձևով ուղարկվի մյուս դպրոցի ընկերների հասցեով, իսկ պատասխանը լինի մի նույնպիսի աշխատանքով մյուս դպրոցին:

### Գ. ԴԱՍԱՐԱՆ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՓՈՐՁԻ ՏԵԽՆԻԿԱՆ

Վոչ մի բնագիտական մեթոդ, մանավանդ լաբորատորական-հետազոտականը՝ առաջադրած խնդիրները բավարար լուծել չի կարող յեթե նյութական պայմաններ չկան:

Յերբեմն ուսուցիչը մի նկար կամ արկղի մեջ սիրուն սարքած մի առարկա չե բերում դասարան և այդ դեմոնստրացիայի վրա կառուցում իր գրույցը: Այդ առարկային ընդհուպ մոտենալ, նրան մոտիկից դնել, մկաններով և կաշվով զգալ, ձևափոխել չի թույլատրվում. իրը կարող է փշանալ: Դա հետազոտական մեթոդ անվանել չի կարելի. լավագույն դեպքում դա հին տիպի իրազննական դաս է: Նման զմուտած առարկաների հետ հետազոտական մեթոդը գործ չունի:

Հետազոտական աշխատանքի ժամանակ իրը պիտի տրվի աշակերտի ձեռքը և վերջինս հնարավորություն պիտի ունենա իր հայեցողությամբ կամ դեկավարի ցուցմունքներով վարվել նրա հետ: Այստեղից պարզ է, վոր ամեն մի առարկայից պիտի ունենալ այնքան հատ, չորքան աշակերտ կա խմբում. ուրեմն նյութը պիտի առատ և մատչելի լինի: Այսպես որինակ, պարապմունքի ժամանակ ամեն մեկն իր տրամադրություն տակ պիտի ունենա, նայած թեմային, մի կտոր կրաքար, մի սրվակ աղաթթու, ուռնու ճշուղ, մի բզեզ կամ մի այլ իր: Անհրաժեշտ առարկաները պետք է կանխապես հավաքված և արկղներում դասավորված լինեն:

Ձմեռը կենդանի նյութեր ունենալու համար պետք է պահել ծաղկամաններ, ակվարիում, տերրարիում: Սակայն բույսերի և կենդանիների վերապի վիճակի հարմար և աշնան և գարնանը գիտողություններ կատարել. լերը նրանք առատ և ավելի մատչելի չեն:

Ի հարկե, ի նկատի պիտի ունենալ, վոր իրերի վորոշ մասը պարապմունքի ժամանակ կփչանա: Հավաքածուները պարբերաբար պիտի նորոգվեն: Պիտի նույնիսկ վորոշ ավելցուկ էլ պահել, մանավանդ վոր տարեց տարի աշակերտների թիվը փոխվում է, և այն՝ ինչ վոր այս տարի բավարարում եր քան և հինգ հոգու, մի այլ տարի արդեն քիչ կը լինի քառասունի համար:

Անտեղի չփչանալու և չերկար գործածվելու համար իրերը պիտի պահել խնամքով: Նրանց համար պետք է պահարաններ, դարակներ, արկղներ, սեղաններ և, վորտեղ դա հնարավոր է, նաև հատուկ սենյակ ունենալ: Իրան կից կան մի շարք պարագաներ, վորոնք թեև անմիջապես փորձի մեջ չեն մտնում, բայց վերին աստիճանի անհրաժեշտ են: Այդ պարագաներն են՝ լվացարան, դուլլ, սրբիչներ, սապոն, խոզանակ, առաջին ոգնութչան միջոցներ (զանազան դեղեր) և այլն:

Այս բոլորը փող արժե և միանգամից այդպիսի կահավորում ձեռք բերելը քառամյակի ուժից վեր է:

Դպրոցական լաբորատորիա կազմելու խնդրի գործնական լուծումը կախված է չերկու նախադրյալից՝ նյութական միջոցներից և կազմակերպչից:

Յեթե նույնիսկ ամեն բանում «յոլլա գնալու» սկզբունքը դրվի, այնուամենայնիվ անհրաժեշտագուցնը ձեռք բերելու համար դրամական միջոցների վորոշ նվազագուցն է հարկավոր: Դատարկ ձեռքերով վոչինչ անել չի կարելի:

Սակայն նյութականը ավելի խնդրի միայն արտաքին պայմանն է. կա մի ավելի ելական պայման, վոր ներքին պիտի համարվի և վորից կախված է ամբողջ գործը, նրա թափն ու ուղղությունը. այդ վճռական պայմանն՝ ինքն ուսուցիչն է: Շարքային ուսուցիչն է իրական խորհրդային դպրոցի կառուցողը. նա միայն կարող է լինել նաև հետազոտական մեթոդի անցկացնողը ու լաբորատորիա կազմակերպողը:

Աշխատանքի դպրոցի լաբորատորիան, յեթե նա վոչ մի կահավորում չունի կամ, համարյա, չունի, կարող է ունենալ զարգացման հետևյալ շրջանները:

Ա.) **Ձրի ձեռք բերովի իրերի օրջան:** Այս շրջանումն է հիմնվում լաբորատորիան: Իրերը ձեռք են բերվում ձրիաբար՝ աշակերտների, նրանց ծնողների, ծանոթների միջոցով: Այդ իրերն են՝ գործածած շշեր, դեղի ամաններ, խցաններ, մեխեր, արկղներ, տուփեր, ճեղքված բաժակներ, պահածոների և այլ թիթեղյա տուփեր, տախտակի կտորներ, յերկաթալար, լավագույն դեպքում մի քանի բաժակ, սպիտե, քաղցրեղենի մեծ անոթ (բանկա), լայնվիզ սրվակներ, մոմի կտորներ, թուղք քացախ, մի քանի կճուճ և տնտեսութչան մեջ գործածական այլ նման իրեր: Այստեղ կարիք չկա ասելու, վոր բնութչունից ձեռք բերովի իրերը միշտ էլ ձրի չեն ու ձրի՝ կրաքար, հող, կավ, թերթաքար, լեռնային այլ սեսակներ, միջատներ, վորդեր, բույսեր և այլն: Նույնպես ձրի կարելի չէ ձեռք բերել նաև մի շարք կարեւոր և անհրաժեշտ իրեր՝ գործարանների ու արհեստանոցների թափթփուկներից: Այս ձեռով հավաքված իրերով ու նյութերով քառամյակի ծրագրի նախատեսած գործնական աշխատանքների մի զգալի մասը կարելի չէ կատարել: Որինակ՝ օձխաթթվական գազ ստանալու համար հարկավոր են կրաքար կամ կավիճ, մի սրվակ, մի ճեղքված բաժակ, ցորենի ձղնոտ ապակյա խողովակի փոխարեն, ողը բաժակի մեջ արտաշնչելու համար և մոմի մի փոքր կտոր: Այսքանը հավաքել և գործի դնել կարող է չուրաքանչյուր փոքր ի շատե չեռանդուն ուսուցիչ, անգամ առանց նյութական նվազագուցն միջոցների:

Բոլոր հավաքած իրերը կարելի չէ պահել նկուղում կամ տանիքի տակ, իսկ արժեքավորները և հաճախ գործածվողները՝ դասարանում: Այս շրջանում արդեն կարող են հանդես գալ առաջին գնովի իրերը՝ մի քանի ապակյա խողովակ, մի քիչ սպիրտ կամ խարտոց:

Բ) Ամենաանհրաժեշտ գնովի իրերի օրջան: Այս շրջանում դպրոցն իր տրամադրութան տակ դրամական միջոցներ ունի և կարող է այդտեղից վորոշ մաս հատկացնել լաբորատորիային: Առաջին հերթին ձեռք են բերվում մի շարք անհրաժեշտ պարագաներ տախտակից, ստվարաթղթից և թիթեղից՝ մի շարք ինքնաշեն գործիքներ կառուցելու համար: Դրանք են՝ սղոց, դանակ, ուրագ, ունեկիներ, թիթեղի կամ հասարակ մկրատ, մուրճ, ռանդա և այլն: Այնուհետև մի շարք անփոխարինելի ամաններ և նյութեր՝ ապակյա և ռետինե խողովակներ, ռետինե և կեղևի խցաններ, ձագարներ, փորձանակներ, կտրասներ, աղաթթու, բերտոլիտյան աղ, սպիրտ, Չերմաշափ, կողմնացույց: Սպիրտայրոցը չի մտնում այստեղ. հաջողութամբ կարելի չէ ինքնաշենը պատրաստել:


Գ) Ծաղկման օրջան: Այս շրջանում արդեն կարելի չէ դրամ չխնայել նաև սպիրտայրոցի համար: Ձեռք են բերվում ավելի թանկարժեք անհրաժեշտ իրերը՝ ծանրաչափ, կշեռք, մենզուրներ, ակվարիում, վորոշ կարասիներ: Այս շրջանը շատ առաձգական է և կարելի չէ անվերջ ծավալել: Ի վերջո բոլոր կոպիտ կերպով պատրաստած գործիքները փոխարինվում են մաքուր շինված լավ գործիքներով: Լաբորատորիայի շինքը (սենյակը) մեծացվում է. բոլոր հին ձեռի կարասիները հիմնովին փոխվում են:

Մեր քառամյակների մի սովոր մասը գտնվում է արդեն 2-րդ շրջանում, կան նույնիսկ 3-րդ շրջանը թևակոխողները: Առհասարակ այժմ մեր դպրոցները նյութապես ի վիճակի չեն տանելի լաբորատորիա սանդղելու:

1. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՅ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ՉԵՎԵՐԸ

Ա. Սպիրտայրոց

Սպիրտայրոցը լաբորատորիայում պատվավոր տեղ է գրավում: Նա շատ հարմար է քառամյակի բոլոր փորձերի համար. ունի բավական բարձր Չերմաստիճան, չի ծխում, հեշտ վառվում է:




Նկ. 1 Սպիրտայրոց

Գնելիս պետք է ընտրել լայնանիստ, գլանաձև պահեստանոթով, 100 խորանարդ սանտիմետր տարողությամբ սպիրտայրոց:

Սպիրտայրոցի բոցը կազմված է յերեք մասերից՝ պատրույզի մոտ մութ կոն, միջին լուսատու

կոն և արտաքին տժգույն պատյան: Ամենաբարձր Չերմաստիճանն այս վերջին մասումն է (մոտ 1000°): Ներքին մութ կոնը սառն է: Յեթե

սպիրտայրոցի պատրույզի վրա լուցկու գլուխ դնենք և կամաց կողքից վառենք, լուցկին չի բոցավառվի: Սակայն բավական է մի փոքր փչել, վոր բոցը թեքվի, լուցկին կշիվի արտաքին կամ միջին մասին և կբոցավառվի: Սպիրտը հեշտ գոլորշիացող հեղուկ է և ոգի թթվածինի հետ պայթուցիկ խառնուրդ է տալիս: Դժբաղդ դեպքերից զգուշանալու նաև սպիրտայրոցը լավ ոգտագործելու համար գործածելիս միշտ պիտի հիշել և անշեղ կիրառել հետևյալ կանոնները.



1. Տաքացնել բոցի վերին մասով.
2. Վոշ մի դեպքում փչելով չհանգցնել, այլ կափարիչը կողքից մոտեցնել և արագ ծածկել:
3. Գործածելուց հետո սպիրտայրոցը պահել միշտ ծածկած: Հակառակ դեպքում սպիրտն ապարդյուն կգոլորշիանա: Բացի այդ՝ պատրույզի վրա կմնա սպիրտի մեջ լեղած ջուրը, վորը հետևյալ անգամ վառելիս կխանգարի:
4. Տաքացած ապակին չկպցնել պատրույզին, կարող է ձեղքվել, վորովհետև պատրույզը սառն է:
5. Յերբեք վառած սպիրտայրոցի մեջ սպիրտ չլցնել. կարող է հրդեհ առաջանալ: Պետք է ծածկելով հանգցնել և ապա սպիրտ ածել:
6. Յերբ սպիրտը վերջանում է և բոցը թուլանում, պիտի իսկույն հանգցնել և սպիրտ ավելացնել (չեթե պետք է):
7. Սպիրտայրոցի հետ վարվել շատ զգուշ, շուտ չտալ, չզցել, չկտրել. իսկ լեթե համենայն դեպս դա կատարվեց, անմիջապես սրբիչով բոցը ծածկել կամ ջուր ածել: Սպիրտը լուծվում է ջրի մեջ, նոսրանում է և դադարում վառվել:
8. Յեթե աշխատանքի ժամանակ պատրույզի վրա աղ կամ ջուր թափվի, ծածկելով հանգցնել, պատրույզը բարձրացնել և կտրել: Կարճ պատրույզը փոխարինել նորով կամ լերկարեցնել (բամբակի թել կապել ծալրից):
9. Պատրույզը շատ խիտ չպիտի մտնի խողովակի մեջ, սպիրտի ծըծվելուն կխանգարի:
10. Համաձայն աշխատանքի, կարելի չէ բոցի մեծութունը և ձևը փոխել: Յեթե մեծ բոց է հարկավոր, պատրույզ  $1\frac{1}{2}$ —2 սանտիմետր գուրս քաշել և վորոքը չեռ բաց անել: Յեթե փոքր բոց է հարկավոր, ընդհակառակը՝ ներս քաշել և թելերը վորտրելով հավաքել: Վորոշ աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է լինում տափակ և լայն բոց (որինակ ապակյա խողովակ ծուխիս). դրա համար պատրույզը պետք է գուրս քաշել  $1\frac{1}{2}$ —2 սանտիմետր և տափակացնել: Ամեն անգամ պատրույզի ձևը և մեծութունը փոխելիս, հանգցնել, ձևը փոխել և նորից վառել:
11. Սպիրտով լի ամանները դնել կարելույն չափ կրակից և վառարանից հեռու:

Դնովի սպիրտայրոցը հաջողութամբ կարելի չէ ինքնաշենով փոխարինել: Շատ հարմար են թանաքի ցածր շշերը կամ փոքր լայն վիզ սրվակները: Պիտի թիթեղից մի խողովակ շինել պատրույզն անցկացնելու համար: Առաջին դեպքում խողովակն ամրացնել շշի նեղ վզի մեջ, իսկ յերկրորդ

դեպքում խցանի մեջ: Վորպես կափարիչ գործածել գինու բաժակ կամ նույն չափի մի լաճնվիզ սրվակ: Յերկրորդ դեպքում խցանի վրա չերկու անցք պիտի անել՝ մեկը պատրույզի խողովակի համար, մյուսն ավելի նեղ, ոչ ձձելու համար: Յերկու դեպքում ել պատրույզը պատրաստում են բաժակից հյուսած թելերից կամ բաժակի կտորից:

Սպիրտաչրոցը կարելի չե փոխարինել նավթի լամպով՝ նավթաչրոցով կամ պրիմուսով:

Քաղաքացիական կովի ծանր տարիներին, յերբ վոչ սպիրտ եր ճարվում և վոչ ել նավթ, վորոչ տեղերում սպիրտաչրոցի փոխարեն պահածոների թիթեղյա տուփերից շինած կրակարաններ եյին գործածում, վորոնց մեջ ածուխ եյին այրում: Յերբեմն ել ձեթի ճրագ են գործածել: Բարեբախտաբար այժմ մենք կարիք չենք գգում նրանց կառուցվածքը այստեղ նկարագրել<sup>1)</sup>:



Նկ. 3 Ինքնաշեն սպիրտ աչրոց

Սպիրտաչրոցի բոցին ցանկացած ձևը տալու և ջերմաստիճանը բարձրացնելու համար կարելի չե գործածել զողիչ խողովակ: Մա ծնկաձև ծռած մի խողովակ ե: Յերկար ծռակը մոտ 25—30 սանտիմետր և ավելի լայն և քան կարճ մասը, վոր 5—6 սանտիմետր չերկարություն ունի. առաջինի լայնությունն և 5—12 և ավել միլիմետր, իսկ կարճինը 3—5 միլիմետր: Կարճ մասի ծայրը սուր ե: Կարելի չե հեշտությունը նմանը շինել: Դրա համար պետք և ճարել 3—5 միլիմետր տրամագծով պղնձի կամ դեղնապղնձի խողովակ: Ծայրը մի փոքր տափակացնել, ապա արանքում մի ասեղ դնել և մուրճով կամ ունելիով մոտեցնել փեղերը և իրար ամրացնել: Բերանը փակելուց հետո ասեղը հանել, ամրացնել չերկար խողովակի վրա, և զողիչը պատրաստ ե:



Նկ. 4 Ինքնաշեն զողիչ խողովակ.

Կարելի չե ամբողջովին ապակյա խողովակից պատրաստել: 30 սանտիմետր չերկարություն ունեցող խողովակը ձուել ուղիղ անկյան տակ և ծայրը ձգելով բարակացնել:

Զողիչ խողովակի կարճ մասի ծայրը մոտեցնում են սպիրտաչրոցի բոցին կամ մտցնում նրա մեջ դանազան չափով և չերկար մասի ծայրից փչելով բոցին ուղած ձևը տալիս:

Փչել պիտի վոչ թե թոքերից արտաշնչած, այլ զբսից ձձած ողը:

**Բ. Ա. մ ա ճ ե ղ ե ճ**


Լաբորատոր աշխատանքներից շատերը վորոչ ամանեղեն են պահանջում: Ամենից առաջ պիտի հավաքել ինչպես վերևում հիշեցինք ամեն տիպի, կարգի և մեծություն շիշեր՝ գինու, դեղի, ոձանեղիների և այլն: Չպետք և

մերժել նաև ճեղքվածները, կարելի և վերցնել նայել խեցիներ, յեթե նրանց մեջ ջուր, հող կամ ավազ կարելի չե պահել:

Բոլոր ամանեղենները լավ մաքրել տալ: Աշխատանքի ընթացքում դրանք բոլորն ել պետք կգան: Անհրաժեշտ և ձեռք բերել նաև զանազան բաժակներ, թեյի և այլ ափսեներ, և այլն:


Ինչ վերաբերվում և ճեղքված շիշերին և բաժակներին, կարելի չե ճեղքված մասը կտրել և զանազան ձևի ու մեծություն բաժակներ և ձագարներ ստանալ:

Ապակեղեն կտրելու մի շարք ձեեր կան: Պետք և նախ վարժվել բարակ պատ ունեցող նեղ շիշերի վրա, ապա անցնել ավելի հաստապատ և մեծ շիշերին: Նախ շիշ վրա յեռանկյունի կամ քառանկյունի խարտոցի կողով պետք և ցանկացած տեղում խազ անցկացնել: Այդ ինչպես և հետևյալ աշխատանքը հեշտացնելու համար կարելի չե գործածել փայտից շինած հատուկ պատվանդան: Այդ պատվանդանի վերին անկյունը կազմող յերկու յերեսը թիթեղապատ են, ծայրին ունեն մի տախտակ. շիշ հատակը հենում են այդ տախտակին, խարտոցը հարմարեցնում, ապա շիշը համաչափ պտտեցնելով խազում: Յեթե շիշը հաստ պտտեր ունի, ապա արժե խարտոցը նույն տեղով մի քանի անգամ անցկացնել: Այնուհետև շիշը նույն պատվանդանի վրա պտտեցնելով, զողիչ խողովակով սպիրտաչրոցի բոցը (կարելի և սովորական մոմ վերցնել) ուղղում են խազած տեղը և համաչափ պտտեցնում: Սովորաբար մի քանի պտտոցից հետո շիշը խազած տեղով ճեղքվում և յեթե շիշ ճեղքվում կարելի չե մի քիչ ջուր կաթեցնել: Ի հարկե շիշերը կարելի չե առանց պատվանդանի ոգնություն ել հաջող կտրել, պատվանդանը հեշտացնում և սկսնակի գործը:



Նկ. 5 Շիշ կտրել բոցով.

Կարելի չե և այսպես կտրել: Նախապես խարտոցով խազած շիշ վրա խազի չերկու կողմից բավականի հաստ թղթե ժապավեններ են կապում: պարան են վերցնում, մի ծայրը կապում դռան կոթից, սյունից կամ մեխից, մյուսը մեջքից: Պարանը մեկ շրջան փաթաթում են շիշ վրա կտրվելիք տեղով և ձգելով հեռ ու առաջ շարժում: Թղթե ժապավենները պինդ պիտի լինեն կապած, վոր պարանը մի կողմ չասհի: Շփումից ապակին տաքանում և և խազի ուղղությունը ճեղքվում: Յեթե շիշը տաքանում և բաց չի ճեղքվում պետք և մի քիչ սառ ջուր կաթեցնել կամ ավելի լավ և վրձինով քսել:



Նկ. 6 Շիշ կտրել պարանով

Առաջին փորձը միշտ ել կարող և անհաջող լինել. սակայն աստիճանաբար վարժվելով կարելի չե ավելի խոշոր և հաստ պատերով շիշերն անգամ հաջողությամբ կտրել: Կտրված տեղն ապակին բազմաթիվ ցցվածքներ և սուր չեզր և ունենում, վորոնք կարող են ձեռքերը կտրակ: Դրա առաջն առնելու համար ինքնաշեն բաժակի կամ ձագարի կտրված չեզրերը պիտի հարթել: Դրսի յեզրը հարթելու համար գործ են ածում

1) Տես Проф. В. Н. Верховский „Техника и методика химического эксперимента в школе“, часть первая յերես 40—41.

տափակ կողով խարտոց, իսկ ներսի գոգավոր յեզը՝ կլոր խարտոցով: Այդ աշխատանքը զգուշությամբ պիտի կատարել, վոր փշուրները կաշվի մեջ չմտնեն բաժակը չճեղքվի: Ուղղակի գործածելիս խարտոցը շատ շուտ մաշվում է և փչանում. խարտոցը պետք է թրջել 1 մասը քաֆուրի (Camphora) և 3 մաս ֆրանսիական սկիպիտարի (Oleum therebenthinae gallicum) խառնուրդով: Այդ նյութերը չեղած դեպքում պետք է գոնե նավթով կամ ջրով թրջել: Եշերի կտորները և զանազան մասերը կարելի է նկուղուս պահել, իսկ պատրաստի ձագարները և բաժակներն արդեն լաբորատորիայի պահարանում<sup>1)</sup>:

Հաստ պատեր ունեցող ամանների մի խոշոր պակասութունն այն է, վոր կրակի վրա դնել չի կարելի, կճեղքվի:

Վորեկ հեղուկ տաքացնելու համար պետք է թիթեղի տուփեր գործածել, իսկ զբանց կափարիչների վրա հող կամ այլ նյութ այրել:

Յեթե ամանեղեն գնելու հնարավորութուն կա, ապա առաջին հերթին փորձանակներ գնել: Սրանք բարակ ապակյա գլաններ են, շատ հարմար են բազմաթիվ փորձերի համար, կարելի չէ ուղղակի կրակի վրա պահել, քայց կրակից չեն ճեղքվում: Ամեն տիպի ամանեղեն, ինչպես և փորձանակները պիտի աստիճանաբար մտցնել կրակի մեջ և անընդհատ շարժել, վոր համաչափ տաքանա: Արժե ունենալ յերկու չափի փորձանակներ 1<sup>1</sup>/<sub>2</sub> և 2 սանտիմետր չերկարությամբ:

Բացի փորձանակներից պետք են և տափակ հատակով կլորաներ: Սրանց ել կարելի չէ ուղղակի կրակի վրա տաքացնել, սակայն ավելի լավ է զգուշության համար դնել պղնձե կամ չերկաթե ցտնցի վրա: Յանկալի չէ, վոր ցանցի միջին մասը ազբեստով (լեռնավուշ) պատված լինի: Ամենագործածական չափերն են — 250 և 400 խորանարդ սանտիմետրանոցները: Առանց կլորաների կարելի չէ բոլոր փորձերը կատարել:

Յերբեմն ցանկալի չէ լինում հեղուկի յեռացումը լաչն ամանի մեջ կատարել այնպես, վոր կարելի լինի տեսնել, թե ներսն ինչ է կատարվում: Այս դեպքում շատ հարմար են քիմիական բաժակները: Սրանք ել նույն ապակուց են շինված, ինչ վոր փորձանակները և բաց կրակից չեն վախում: Սակայն արժե զգուշ լինել: Սրանց կարիքը քառամյակամ սուր չէ զգացվում:

Այնուհետև պիտի աչք դարձնել լաչնվից նյութի սլորվակներին: Յեթե հավաքածների մեջ նմանները չկան, անպայման պետք է գնել գոնե մի քանի հատ: Սրանք շատ անհրաժեշտ են: Ամենագործածական չափերն են 200 և 600 խորանարդ սանտիմետրանոցները:

Թեև շիշեր կտրելիս բազմաթիվ ձագարներ են ստացվում, բայց ավելի լավ է պատրաստի ձագարներ գործածել: Ամենագործածականները նրանք են, վորոնց անկյունը 60°, իսկ տրամագիծը 9—10 սանտիմետր է: 60°-ի անկյան դեպքում շորս տակ ծալած քամիչը նստում է ձագարի մեջ, իսկ այլ անկյան դեպքում լավ չի նստում:

Մի քանի աշխատանքների համար լավ է ունենալ 4-5 սանտիմետր տրամագծով փոքր ձագարներ, սակայն վորոնք ունեն չերկար խողովակ՝ 15—20 սանտիմետր: Նախ պիտի



Նկ. 7 Ինքնաշեն ձագար:

1) Ապակեղեն կտրելու ձեռքի մասին ВЕРХОВСКИЙ յերես 58.

ձեռք բերել այս փոքրերը, ապա քիչ վեր հիշած մեծերը: Այս փոքրերը կարելի չէ փոխարինել հետևյալ ինքնաշեն ձագարներով: Հատակն ընկած լաչն փորձանակի կամ փոքր սրվակի բերանը պարաֆինած կեղևի խցան հագցնել և խցանի մեջ 15—20 սանտիմետր չերկարության խողովակ ամրացնել: Այսպիսի ձագար պետք է որինակ ածխաթթվական գազ ստանալու դեպքում:

Գ. Ապակյա խողովակներ

Ապակյա խողովակները վորեկ աչլ առարկայով լիովին փոխարինել չի հաջողվում:

Ապակյա խողովակները զանազան տրամագծի չեն լինում: Դպրոցական լաբորատորիայի համար ամենից հարմարը 5 միլլիմետր արտաքին տրամագիծ ունեցող խողովակներն են: Ավելի լաչն խողովակը սպիրտալոցի վրա ձուլ դժվար է: Իսկ ավելի նեղը դժվար է խցանին հարմարեցնել և դրա համար ել անցանկալի չէ:


Ապակե խողովակը կտրելու համար խարտոցով մի տեղ խազում են: Ապակի խազելու համար պետք է ընտրել քառանկյունի կամ յեռանկյունի ամենալավ տեսակի մանր աստամալուր խարտոց:

Սողովակը բռնում են ձախ ձեռքով և աջով խարտոցով խազում: Անփորձները կարող են սկզբում խողովակը դնել սեղանին և խարտոցով մեկ-չերկու անգամ քսել նույն տեղում: Ետ աժուր չճնշել—կարող է ջարդվել: Հինգ միլլիմետր տրամագիծ ունեցող խողովակը կտրելու համար բավական է մեկ խազ անել: Այնուհետև չերկու ձեռքով բռնում են խողովակն այնպես, վոր բուխ մասերը խազի հակառակ կողմում լինեն հենված և կամաց կտրում են:



Նկ. 8 Ապակե խողովակ խազելը:

Կտրած ապակյա խողովակի ծայրերը չի կարելի սուր թողնել. կարող են ձեռքերը կտրել կամ խցանները և ուտինե խողովակները փչացնել: Դրա համար ծայրերը հալում են: Համարյա ուղղահայաց բռնած խողովակի ծայրը մտցնում են սպիրտալոցի բոցի մեջ և շարունակ պտտում իր առանցքի շուրջ: Աստիճանաբար յեզրերը շիկանում են, ապա հալվում են և կլորանում:




Նկ. 9 Ապակե խողովակի կտրելը:

Բոցից հանելուց հետո չի կարելի անմիջապես սեղանի վրա դնել. ապակին դանդաղ է սառում և կարող է այդ մասում փայտն այրել կամ սառ իրի կպչելով ճեղքվել: Պետք է դնել ազբեստի կամ տախտակի վրա ծայրը դուրս մինչև վոր կսառի:

Ապակյա խողովակը ձուլու համար տափակ բոց են գործածում: Յեթե խողովակի փոքր մասը տաքացնենք, ձուած մասն անկյունաձև կստացվի կամ խողովակը շատ կնեղանա: Հետագայում այդպիսի տեղերում խողովակը հեշտությամբ կկտրվի: Կանոնավոր աղեղ ստանալու համար պետք է խողովակի բավական մեծ մասը տաքացնել և աստիճանաբար ձուլ:

Սակայն այս դեպքում դժվար է նույն գծով ծուել և առաջին փորձերին միշտ մի վորոշ անկանոնություն ըստացվում է: Պիտի նկատի առնել, վոր խողովակը նախ քան բոցի մեջ տաքացնելը պիտի լավ մաքրել, լվանալ և ապա չորացնել. հակառակ դեպքում կորոզ է ձեղքվել. բացի այդ՝ խողովակը նախ բռնում են բոցից 10—15 սանտիմետր բարձր և անդադար իր առանցքի շուրջը պտտեցնելով դանդաղ իջեցնում մինչև բոցը. սա կատարվում է համաչափ տաքացնելու համար: Ապակին վատ հաղորդիչ է և ձեռքով կարելի չէ բոցին բավական մոտ բռնել: Հենց վոր խողովակն այնքան փափկի, վոր սկսի իր ծանրություն տակ ծուվել, պետք է թույլ տալ նրան ծուվել, ապա հանել բոցից և վերջնականապես ձև տալ: Մի վորոշ ժամանակ պահել ձեռքում, մինչև վոր ապակին ամրանա և ապա դնել ազբեստի վրա: Պետք է միանգամից կանոնավոր աղիղ ստանալ, վորովհետև հետո անկանոն անկյունն ուղղել չի հաջողվում:



Նկ. 10 Ապակե խողովակը ծուելը

Պողովակի վրա սուր ծայր ստանալու համար այն անդադար պտտեցնելով տաքացնում են տափակ բոցի վրա և ապա դանդաղ ձգում: Ցանկացած ձևը ստանալով բոցից հանում են: Յերբ ապակին սառչում է, համապատասխան տեղում խարտոցով խաղում են և ծայրը զգուշորեն հալում, պետք է հետևել, վոր անցքը չփակվի: Վորքան բոցը տափակ և լայն լինի այնքան հաստապատ և համաչափ սրվածք կստանաք:

Յեթե խողովակի ծայրն ենք ուզում ձգել կամ ծուել, այդ դեպքում մի այլ խողովակ ել ենք մտցնում բոցի մեջ: Յերբ չերկուսի ծայրերն ել փափկում են, իրար ենք կպցնում և բոցից աստիճանաբար հանում: Այնուհետև արդեն հեշտ է մեր ուզած ձևը տալ խողովակի ծայրին: Աշխատանքը վերջացնելուց հետո կարելի չէ ոճանգակ խողովակը հեշտություն կտրել և հեռացնել:

Առհասարակ լավ է այդ աշխատանքները նախ անպետք խողովակի կրտորների վրա կատարել և միայն լավ վարժվելուց հետո անցնել ինքնաշեն գործիքների կառուցման:

Ապակյա խողովակի ծայրը փակելու, փոքր փորձանակ պատրաստելու համար պետք է, հակառակ նախորդին, խողովակի մի փոքր մասը տաքացնել նեղ բոցի վրա և յերբ բավական հալվի՝ արագորեն ձգել: Չզած ծայրը խողովակին մոտ կտրել, հետո այդ մասը տաքացնել մինչև վոր կփակվի: Հարմար է խողովակը բոցի վրա համարյա ուղղաձիգ բռնել և շարունակ պտտեցնել: Ապա, քանի դեռ ապակին փափուկ է, խողովակի բաց ծայրից պիտի զգուշորեն փչել և հատակին կրոր ձև տալ: Ստացված ապակյա թելերը պետք է հավաքել և հեռացնել, վոր պատահմամբ ձեռքը կամ աչքը չմտնեն:

Ապակյա խողովակները պիտի պահել ուղղաձիգ կանգնած դիրքով կամ միանգամայն հարթ արկղի մեջ: Անկանոն տեղ պառկած լինելուց վորոշ ժամանակի ընթացքում նրանք ծուվում են:

### Գ. Ռեֆինե խողովակներ

Բավական յերկար ժամանակ կարելի չէ լարորատորական տնտեսությունը վարել առանց ուստինս խողովակների: Սակայն մի շարք աշխատանքների համար նրանք շատ հարմար են. առհասարակ նրանց բացը հաճախ նկատվում է: Նրանք ձգվող են, առաձգական, չեն կոտրվում, պետք յեղած դեպքում կտորները կարելի չէ ապակյա խողովակների կտորներով միացնել և յերկար խողովակ կազմել: Ամենալավ չափն է, արտաքին տրամագիծը հինգ միլլիմետր:

Առհասարակ ուստինս իրերը (խողովակները, խցանները և այլն) ժամանակի ընթացքում փչանում են՝ կարծրանում են, կորցնում են ձգվողությունը, առաձգականությունը և դառնում են փխրուն ու հեշտ կոտրվող: Յերկար պահելու և գործածելու համար պետք է վորոշ խնամք տանել.

1. Ռեֆինե խողովակները պիտի գրված լինեն ազատ, առանց ճրխվելու և ծալվելու: Փաթաթել շրջանաձև և կտորով կապել:
2. Պահել մութ ամանի մեջ կամ մութ տեղ. լույսի տակ նրանք շատ արագ են փչանում:
3. Վոչ մի դեպքում ձյութոտ փայտից պատրաստված արկղի մեջ չը պահել (որինակ չեղևնու փայտից): Շատ հարմար է թիթեղյա արկղի կամ ալիլի լավ և կավե կճուճի մեջ պահել:
4. Պահել հով տեղ. ջերմությունը նպաստում է արագ փչանալուն:
5. Ամենալավ և մատչելի ձևը հետևյալն է: Բոլոր ուստինս իրերը լեցնել կավե ամանի կամ նյութի սրվակի մեջ առանց ծալելու և ամուր կապելու, ապա ամանի մեջ ջուր ածել և մի քիչ ֆորմալին ալիլացնել, վոր ջուրը չնեխի: Ամանը դնել մութ և հով տեղ (նկուղում): Նման պայմաններում, ուստինս իրերը յերկար գործածելի լին մնում և շուտ չեն ամրանում, փխրանում կամ ձգելիս ծակվում ու պատռվում: Գործածելիս ամանից պիտի հանել, մաքուր ջրով լվանալ, վոր ֆորմալինի հետք չմնա և ապա ցամաքեցնել և գործի դնել:

Ապակյա խողովակի վրա հազցնելիս յերեք պայման պիտի ի նկատի ունենալ. նախ՝ խողովակի ծայրը հալեցրած պիտի լինի. յերկրորդ՝ ապակյա խողովակը վորքան կարելի չէ ծայրին մոտ պիտի բռնել, վոր ճնշումից չկոտրվի և ձեռքերը չվիրավորի. յերրորդ՝ ապակյա խողովակի վրա պիտի կողքից հազցնել, վոր յեզրերը շուտ չպատռվեն. յեթե դժվար է մտնում, կարելի չէ ջրով կամ գլիցերինով թրջել: Վազելին և յուղ չի կարելի գործածել, ուստինը փչացնում են:



Նկ. 11 Ռեֆինե խողովակն ապակու վրա հազցնել:

### Ե. Խ ց ա ն ն ե ր

Լարորատորիաներում գործածական են յերկու տիպի խցաններ՝ կեղևի և ուստինս: Աշխատանքներից մի քանիսի համար անհրաժեշտ է ունենալ այնպիսի խցաններ, վորոնք սեղմ խցում են ամանը: Իրա համար պիտի գնել ընտրովի կեղևի կամ ուստինս խցաններ: Առհասարակ խցաններ ձեռք բերելու խնդրում չպետք է խնայել: Յերբեմն փորձը կամ նույնիսկ փորձերի մի ամբողջ շարք մեկ կամ յերկու լավ խցանից են կախված:

Լավ կեղևի խցանը հարթ մակերես պիտի ունենա և մամլելիս ձեղքեր չպիտի տա: Իհարկե ամեն խցան ել ունի մեծ կամ փոքր թվով խոռոչներ: Յեթե այդ խոռոչների թիվը մեծ չէ, խցանը չի կարելի վատ համարել, սակայն, չերը խցանն ունի ամբողջ չերկարությամբ անցնող խոռոչներ կամ ձեղքեր, նա անպետք է: Այդպիսի խցաններով գազերի վերաբերյալ փորձեր կատարել չի կարելի:

Ծախու խցանը ունենում է հատած կոնի ձև. պատվիրելիս պիտի նշել ցածի ծալրի տրամագիծը, վորը խցվող շշի բերանի տրամագծից 1-2 միլլիմետր ավել պիտի լինի:

Սեղմ խցելու համար անհրաժեշտ է խցանը մշակել: Գազը լավ «պահելու» համար պիտի այնպիսի խցան ընտրել, վոր մամլելուց հետո սեղմ ծածկի անոթի անցքը և նրա մեջ մտնի վոչ ավել քան իր չերկարության կիսի չափ:


Մամլելը մի անհրաժեշտ գործողություն է. նրա նպատակն է խցանը ձկուն և փափուկ դարձնել: Իրա հարար կան մամլիչներ: Սակայն հաջողությամբ կարելի չէ ոգտվել և հասարակ տախտակից: Իրա համար խցանը պառկեցնում են սեղանի կամ մի այլ հարթ մակերես ունեցող առարկայի վրա, ապա տախտակը վրան դնելով չերկու ծալրից բռնում և թույլ սեղմելով խցանը չեա ու առաջ են թավալում: Սակայն հին և մանավանդ անցք ունեցող խցաններն անպատիժ կերպով չի կարելի այդպես թավալել, կձեղքվեն: Այս դեպքում խցանը փափկացնելու համար 2—3 րոպե պահում են յեռացրած ջրի մեջ. այս դեպքում նա ավելի լավ և համաչափ է փափկում քան նախորդ դեպքում:

Ընտրած և մամլած խցանը պիտի լավ և սեղմ մտնի սրվակի բերանը: Իժվարությամբ մտած խցանը ժամանակի ընթացքում բավական արագ փչանում է և անպետքանում, իսկ թույլ խցանն ել լավ չի պահում և ոգ է անցկացնում:

Ոցանը հագցնելիս չպետք է զուռել, այլ դանդաղ վոլորելով (պտուտակի նման) մտցնել: Յեթե ամանը բարակ պատեր ունի, որինակ կոլբա չէ, չի կարելի հենել սեղանի վրա. կարող է ջարդվել և ձեռքերը վերավորել: Առհասարակ ապակյա ամանները և մանավանդ բարակ պատեր ունեցողները խցանելիս պետք է վորքան կարելի չէ վզեն մոտ բռնել: Յեթե խցանը մամլելուց հետո չել մեծ է և կարող է ամանը ձեղքել, պետք խարտոցով կողքերը զգուշորեն խարտել:

Այնուհետև չեթե պետք է, ընտրած և մամլած խցանի մեջ անցք են բացում: Պիտի աշխատել, վոր անցքը թեք չը

գնա այլ լինի խցանի առանցքով կամ առանցքին գուգահեռ, վոր ներսի մակերեսը ըստ կարելուհի հարթ լինի և անցքի վերի և ցածի յեզրերը կըտրտված չլինեն: Իրա համար կան հատուկ խցան մակելու բուրդիներ: Սակայն կարելի չէ և առանց այդ բուրդիների տանելի անցք պատրաստել: Իրա համար պետք է ունենալ 4 միլլիմետր տրամագծով կլոր խարտոց: Նախ խարտոցի սուր ծալրով նշած տեղում անցք են բացում, ապա ատամնավոր



Նկ. 12 Ոցան մակելը

ծալրը մտցնելով խարտելով հարթում են: Ստեպ-ստեպ խողովակով պիտի անցքի լայնությունը փորձել:

Կարելի չէ նախապես տաքացրած մեխով անցք բացել և հետո միայն խարտելով հարմարեցնել խողովակին: Սողովակը մի փոքր ճնշմամբ պիտի մտնի խցանի անցք: Այս դեպքում ևս խողովակը պիտի խցանից վորքան կարելի չէ մոտ բռնել և պտտեցնելով մտցնել:

Գործածելուց հետո խցանը գործիքի վրա չպիտի թողնել. սեղմված մը-



Նկ. 13 Ոցանը խողովակին հագցնել

նալով նա իր առաձգականությունը կորցնում է և հետագայում լավ չի «պահում»: Յեթե խցանը հնանում և պնդանում է, պետք է յեռացրած ջրում 2—3 րոպե լեփել:

Վորոչ դեպքերում պետք է լինում խցանը պարաֆինել: Մաքուր պարաֆին չունեցած դեպքում կարելի չէ հատակի մոմ գործածել, վոր նույնպես պարաֆին է: Պարաֆինը կարելի չէ փոխարինել ստեարինով (ըսպիտակ մոմ) կամ մեղրամոմով:

Յեթե ամանում խոնավություն և կամ անխաթմվական գազ կլանող նյութ կա, պիտի ամանի բերանը պարաֆին լցնել: Իրա համար խցանը խոր ներս են հրում 1—3 միլլիմետր ամանի յեզրից ցած և վրան հալած պարաֆին լեցնում: Պարաֆինը ապակուն լավ կպչում, և չերը վերջինս տաք է և չոր: Իրա համար, նախքան պարաֆին լեցնել, ամանի պատերը լավ չորացնում են և սպիրտալորոցի վրա զգուշորեն տաքացնում: Ի հարկե խցանը նույնպես պիտի չոր լինի:



Պարաֆինը հալում են պահածոյի տուփից պատրաստած ամանի մեջ:

Պարաֆինով ծածկած խցանը հանում են խարտու- Նկ. 14 Պարաֆին հա- ցի սուր ծալրով առանց պարաֆինը հեռացնելու: լելու աման

Սրվակը նորից մակելով, բերանը մի փոքր տաքացնում են սպիրտալորոցի վրա, պարաֆինը հալվում է և անցքերը լցնում: Ավելի հարմար է պարաֆինը տաքացրած չերկաթի շերտով կամ անպետք դանակով հալել ու հարթել: Գործածվող լավ դանակը չտաքացնել, կփչանա: Չանազան նյութեր (ոթինակ ծծմբաթթու) քայքայում են խցանը: Այսպիսի նյութերը պիտի պահել ապակյա խցանով սրվակի մեջ կամ գոնե կեղևի խցանը պետք

ե պարաֆիննի: Պարաֆիննիու համար խցանը ամրացնում են չերկաթաթելի սրած ծայրին և մտցնում հալած պարաֆինի մեջ: (Պարաֆինն այնքան չտաքացնել, վոր գոլորշիներ բարձրանան. նրանք շնչառության համար վրտանգափոր են): Յերկաթաթելը նրա համար ե, վոր խցանը միշտ պարաֆինի մեջ պահենք. հակառակ դեպքում խցանը, վորպես թեթև առարկա, վեր ե բարձրանում և լավ չի պարաֆինվում: Պետք ե այնքան պահել, վոր խցանի խոռոչներից դուրս չեկող պղպջակները սպառվեն, ապա հանել, սըրբել և սուզել սառ ջրի մեջ: Իհարկե կանխապես ընտրած չոր խցաններ պիտի վերցնել:

Պարաֆինած խցանը մամլել կարելի չե, բայց խարտոցով հարթել չի կարելի: Սովորաբար պարաֆինած խցանը լավ չի նստում խցանի վզին և դուրս ե սահում: Դրա առաջն առնելու համար պետք ե խցանի վրա փոշի ցանել (կավիճ, մագնեզիա, ծծումբ, ատամի փոշի): Պարաֆինի հետ գործ ունենալիս բաց տեղ աշխատել (դուրսը, պատշգամբում) կամ վառարանի մոտ, ուր ողի հոսանք կա:

Ռետինե խցանները շնորհիվ մեծ առաձգականության ավելի լավ են «պահում» քան կեղևի խցանները և շատ հարմար են զազերի վերաբերյալ փորձերի ժամանակ: Նրանք անփոխարինելի չեն մանավանդ յերբ պետք ե սրագ գործիք հավաքել: Բացի այդ՝ ռետինե խցանը թույլ թթուներից քիչ ե ազդվում, քան կեղևի խցանը:

Ռետինե խցանները պետք ե գնել ամաններին հարմար և համապատասխան անցքերով. թե անցք հանելը և թե խարտոցով տաշելն այս դեպքում ավելի դժվար ե ն հեշտությամբ կարելի չե խցանը բոլորովին փչացնել: Ավելի լավ ե 1 կամ 2 անցքով խցաններ գնել, ուզած դեպքում միշտ կարելի չե անցքը ապակյա ձողով կամ ծայրը փակ խողովակով խցել: Խողովակն անցկացնելիս ջրով կամ գլիցերինով թրջել և պտտեցնելով մտցնել: Փորձից հետո պիտի հանել խցանը և պահել այնպես, ինչպես ռետինե խողովակներն են պահում: Յեթե ռետինե խցանը չերկար ժամանակ թողնենք ամանի բերանին կամ խողովակը՝ խցանի մեջ, իվերջո նրանք կկպչեն խցանին և դժվարությամբ կպոկվեն: Դրա առաջն առնելու համար, չեթե ի հարկե միաք ունենք խցանը յերկար ժամանակով ամանի վզին թողնել կամ խողովակը խցանի մեջ, պետք ե ռետինի մակերեսը գլիցերինով օծել:

2. Չափելու գործիքներ

Լաբորատորական պրակտիկայում անհրաժեշտ ե ունենալ յերկարությունը, ծավալը և կշիռը չափելու գործիքներ:

Յերկարության չափերը կարելի չե բավական նուրբ կերպով ինքնաշեն պատրաստել: Դրա համար միայն պիտի ունենալ բարակ տախտակ, դանակ, խարտոց կամ մեխ և պատրաստի մետր՝ բուժանված դեղիմետրերի, սանտիմետրերի և միլիմետրերի: Վերցնում են 3-4 սանտիմետր լայնությամբ հղկած տախտակ, կես կամ մեկ մետրի չափ զնում են պատրաստի մետրանոցի կողքին և ընդորինակում: Փոքրիկ միլիմետրանոց քանոններ կարելի չե պատրաստել նաև 2 կամ 3 տակ ծաված թղթից: Կարելի չե գործածել նաև մոմլաթ:

Ծավալը չափելու համար անհրաժեշտ ե մենզուր ունենալ: Ամենահար-

մարն ե 100 խորանարդ սանտիմետրանոցը, վորը սանտիմետրերի չե բաժանված: Դրա միջոցով կարելի չե պատրաստել նաև ծավալի այլ չափեր: Որինակ լիտր ստանալու համար թիթեղյա ամանի մեջ լեցնում են 10 անգամ 100 խ. ս. և ջրի մակերեսի մոտ մեխով գծում: Այսպիսով ստացվում ե լիտր: Յեթե ուզում ենք մի այնպիսի մարմնի ծավալ չափել, վոր մենզուրի մեջ չի մտնի՝ դրա համար մի լայն աման լեցնում ենք ջրով, ապա տվյալ մարմինը թելով կապած ընկղմում ենք ջրի մեջ: Ավելցուկ ջուրը հավաքում ենք ամանի տակ դրած ավսեյի մեջ, ապա ածում մենզուրի մեջ և հաշվում:


Ինքնաշեն մենզուր պատրաստելու համար վերցնում են ապակե գլան, փորձանակ կամ նեղ բաժակ և մի կողքը կարբորուելումով, նաժդակով կամ թաց ավազով քերում, մինչև վոր ապակին լուսատվի: Ապա մենզուրով ջուրը չափում ենք, ածում ինքնաշենի մեջ և սև մատիտով մակերեսի մոտ գիծ քաշում ու թիվ նշանակում: Գծերը և թվերը չջնջվելու համար պետք ե սովորական հյուսնական սպիտակ լակով ծածկել:

Ամեն դպրոց և մանավանդ ամեն դպրոցական լաբորատորիա պիտի կշիռ ունենա: Շատ հարմար ե Ռոբերվալի կշեռքը: Ճիշտ ե, սա մի փոքր թանկ ե, բայց հեշտ գործածելի չե: Սրա վրա կարելի չե բավական զգայուն և արագ կշռումներ կատարել: Հավաքելը և տեղափոխելն ել հեշտ ե: Բավական ե ունենալ մինչև կես կամ մեկ կիլո կշռող կշեռք:

Բավական զգայուն ե և յեղջուրե նժարներով դեղատնային փոքր կշեռքը:

Յեթե դրանցից և վոչ մեկը չկա, պիտի դիմել ինքնաշեն կշեռքի կառուցման: Այս գործի մեջ ամենադժվարը և պատասխանատուն լծակ շինելն ե:

Պետք ե վերցնել չերկու միլլիմետր հաստությամբ, չերեք սանտիմետր լայնությամբ և 50-60 սանտիմետր յերկարությամբ մի տաշած տախտակ կամ ավելի լավ ե ուղղակի քանոն: Ամենայն ճըշտությամբ վորոշել այդ լծակի մեջ տեղը, այդտեղ լայնությամբ գիծ քաշել: Այդ գծի մեջտեղը մի սլուք ամրացնել



Նկ. 15 Ինքնաշեն կշեռք

իսկ չերկու ծայրերին մոտ ծակել և պինդ թել ամրացնել կախելու հարմար:

Մեջտեղի գծից խտորեն հավասար հեռավորության վրա լայնքի մեջտեղն անցքեր բանալ նժարների համար: Վերջիններս կարելի չե շինել կողի ներկի տուփերից կամ նրանց կափարիչներից: Նժարները պիտի հավասար կշռեն: Պատրաստած կշեռքն ամրացնել մի պատվանդանի վրա այնպես, վոր նժարները սեղանից հինգ սանտիմետր բարձր կանգնեն: Յեթե պետք հավասարակշռված չե, կարելի չի լծակի ծանր կողմի թևից թեթև տաշել:

Ինքնաշեն կշեռքը կարող է բավական զգայուն լինել, յեթե կառուցողը խիստ հետևի, վոր:

1. Լծակի փայտը չոր և ամուր լինի:
2. Լծակի հենման կետերը ճիշտ մեջտեղը լինեն և սլաքի կետի հետ մի գիծ կազմեն: Վերջին գիծը պիտի լծակի չերկայնքին ուղղահայաց լինի:
3. Լծակի թևերը, ավելի ճիշտ մեջտեղի գծից մինչև նժարների կախելու կետերը յեղած տարածությունները խստորեն հավասար լինեն:
4. Լծակի տախտակը յերկու միլլիմետրից հաստ չլինի և առանց նժարների կարողանա հավասարակշռվել:

Վորքան լծակի հենման կետը (կամ գիծը) բարձր է նժարների կախման կետերը միացնող գծից այնքան լծակը կայուն է և կշեռքի զգայունությունը քիչ: Վերոհիշյալ տարածությունը փոքրացնելիս կշեռքը դառնում է ավելի զգայուն ու ավելի անկայուն: Յեթե կշեռքն անկայուն է, պետք է սլաքի ցածի ծայրին մի փոքր ծանրոց կապել:

Կշեռքը ստուգելու համար վորեն ծանրոց կշառքարերով կամ մի այլ ծանրոցով հավասարակշռում են, հետո ծանրոցները մեկը մյուսի անոց դընում՝ յեթե այս դեպքում էլ կշեռքը հավասարակշռված մնա՝ կշանակի լըծակի թեվերը հավասար են, հետևապես և կշեռքը ճիշտ է:

Ոգտվելուց առաջ ամեն անգամ պետք է կշեռքը ստուգել: Կշառքարերը նույնպես կարելի չէ պատրաստել դեն գցովի նյութերից՝ զանազան մետաղների կտորներից, թելերից:

Առանձնապես ճկուն նյութ է կապարը, վոր կարելի չէ դանակով կրտրել, տաշել, պետք յեղած դեպքում մուրճով նորից միացնել, վրան մեխով թվեր նշանակել: Իհարկե կշառքարեր պատրաստելիս ձեռքի տակ պատրաստիներ պետք է ունենալ գոնե ժամանակավորապես և նրանց հետ համեմատել ինքնաշեն քարերը: Միանգամայն բավական է 1—200 գրամի սահմաններում կշռել: Դրա համար պետք է ունենալ հետևյալ կշառքարերը.

|           |        |        |        |        |
|-----------|--------|--------|--------|--------|
| 100 գրամ. | 50 գր. | 20 գր. | 20 գր. | 10 գր. |
|           | 5 գր.  | 2 գր.  | 2 գր.  | 1 գր.  |


Գրամի մասերը պատրաստելու համար պետք է մի գրամ բարակ լար կշռել (ելեքտրական լար), ապա այն կխել, չորս մաս անել, հինգ մաս անել, և այլն:

### Ե. Պասվանդաններ յեվ ԵՏԱՏԻՎՆԵՐ

Վորպես պատվանդան կարող են ծառայել զանազան մեծություն ունեցած փայտի կտորներ: Յեթե այդ փայտերի մեջ բներ ել լինեն կարելի չէ և փորձանակներ տեղավորել:


Փորձանակների համար շտատիվ պատրաստելու համար պետք է վերցնել սովորաբար կամ բարակ տախտակի տուփ և կողքին անցքեր անել այնքան, վոր հազիվ փորձանակը մտնի: Անցքը կարելի չէ բացել և հարմարեցնել գրչահատով կամ կլոր խարտոցով: Հարմար է բարակ տախտակներից կառուցել 5—6 բուն ունեցող շտատիվ:

Ֆիլտրելու (հեղուկը քամելու) կամ վորեն աման տաքացնելու համար շատ հարմար են մետաղյա շտատիվները: Պետք է ձեռք բերել 2 ողակ և 1 բունիչ ունեցող շտատիվներ:



Նկ. 16 Փորձանակների շտատիվ

Աշխատանքներից մեծ մասը կարելի չէ առանց այդ մետաղյա շտատիվի ոգնություն ել կատարել: Այս դեպքում պետք է մի քանի գործիքներ ձեռք բերել և կառուցել փայտյա շտատիվ: Նախ ընտրում են հաստ տախտակի մի կտոր, մի տեղ անցք բացում և անցքում ամրացնում նախապես պատրաստած փայտե ձողը (մոտ յերկու սանտիմետր տրամագծով): Ողակը կարելի չէ պատրաստել յերկաթաթելից. նույնպես և բունիչները կարելի չէ փոխարինել այրած յերկաթաթելով, վոր հեշտություն կարելի չէ ծալել ու բացել:



Նկ. 17 Փայտե շտատիվ.

Վորեն հեղուկ տաքացնելիս ավելի լավ է թիթեղյա կամ յերկաթե յեռոտանի գործ ածել: Այդպիսի յեռոտանիներ հեշտություն կարելի չէ պատրաստել թիթեղյա տուփերից և կամ յերկաթաթելերից: Թիթեղի կտրած մասերը չհեռացնել, այլ կեսը մի և կեսը մյուս կողմը ծալել. այս դեպքում վորքերը ամուր կլինեն: Թիթեղի հատակը պետք է վոչ թե կտրել այլ մեխով ծակոտել. կատացվի ինքնաշեն մետաղյա



Նկ. 18 Յեռոտանի

յանց: Այս աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ են մի քանի ատաղձագործական գործիքներ, տափակ բերան և սուր բերան ունեղիներ, թիթեղ կտրելու մկրատ (վերջինս կարելի չէ փոխարինել գործածությունից գուրս յեկած սովորական հին մկրատով):

### Ը. Այլ պարագաներ

Կան մի շարք իրեր, վորոնք լաբորատորական պրակտիկայում ամեն քաջափոխին պետք են գալիս: Դրանցից ամենակարևորներն են.

1. Յերկաթե ունելի (քիմիական). սա գործ են ածում տաք իրերը վերցնելու համար: Ինքնաշեն պատրաստելը դժվար է, կարելի չէ յերբեմն փոխարինել տափակաշուրթ ունելիով:
2. Սեղմիչ. օետին խոզովակները փակելու համար: Ամենագործածականը Մորի Նեյմիչն է, վոր և աժան է և հեշտ և ճարվում: Կարելի չէ փոխարինել փայտյա ինքնաշեն սեղմիչով: Սա փայտյա

փոքր քառանկյունի շրջանակ և, վորի ներսի մի կողմը սրած է: Շրջանակի մեջ հագցրած է բրգաձև փայտի կտոր, վորով խողովակը սեղմում են սուր կողի վրա և անցքը փակում:

Կարելի չե ավելի պարզը շինել. կտր անցքով տախտակի կտոր և տախտակի փոքր կոն:



Նկ. 19 Մոր սեղմիչ

3. Յերկաթե կամ թուջե տապակ ունենալը ևս լավ է (վորեն բան ուժեղ տաքացնելու համար). սակայն կարելի չե փոխարինել թիթեղյա արկղի կափարիչով:

4. Ատաղձագործական և թիթեղագործական գործիքներն ավելի անհրաժեշտ են քան վերը հիշած իրերը: Սրանք են՝ կացին, ուրագ, մուրճ, մեխահան, բիզ, դանակ, սղոց, ռանդա, բուրդիներ, հեսանաքար, տափակաշուրթ, կտրաշուրթ և սրաշուրթ ունելիներ, խարտոցներ, պտուտակահան (отвертка):

5. Սոգանակներ, փորձանակներ և այլ ամաններ մաքրելու համար: Կարելի չե պատրաստել խողի մագից և յերկաթաթելից: Կարելի չե գործածել նաև փետուրներ կամ ծալրին բամբակ կապած փայտի ձող:

5. Բռնիչների փորձանակների և կոլբաների համար, վոր տաքացնելիս ձեռքերը չսուրվեն, կարելի չե գործածել լվացքի բոնիչ, լավ է ծալրին նախապես մի ձող ամրացնել: Կարելի չե և ուղղակի ծալած թղթով բռնել:


7. Դույլ կամ շշեր մաքուր ջրի համար:

8. Դույլ կեղտոտ ջրի համար:


9. Կավե մեծ աման զանազան թափթփուկներ և մարոզ նյութեր ամելու համար:

10. Սրբիչներ փոշու և ձեռքի: Պետք է մաքուր, պահել վոր յերկար դիմանան: Թթու կամ կծու հեղուկի կամ նյութի կպչելիս, անմիջապես մեծ քանակ ջրով վողողել:

10 Թեք ձողեր լվացած ամանեղենը կախելու ու չորացնելու համար պատրաստել փայտից: Ամանները հագցնում են ձողերի վրա՝ բերանները վար: Կարելի չե և ուղղակի կողովի մեջ կողք կողքի դարսել ի հարկե բերանները վար:



Նկ. 20 Խորնաշեն սեղմիչ



Նկ. 21 Ֆիլտր պատրաստելը

11 Քամիչ թուղթը նույնպես անհրաժեշտ իր է և բավական արագ ծախսվում է: Քամիչ պատրաստելու ձևը պարզ է բերված նկարից:

Կարելի չե վորոշ դեպքերում բամբակով փոխարինել, բայց վերջինս միշտ ավելի վատ է քամում քան քամիչ թուղթը:

12. Դեղեր և վիրակապական պարագաները լարսրատորիայում աչքի ընկնող տեղ պետք է դրված լինեն:

Անհրաժեշտ են՝ չողի լուծույթ, բորաթթվի լուծույթ, ուտելու սողաչի լուծույթ, քացախ, ախտահանած բամբակ (գնել անպայման դեղատնից), ախտահանած թանգրիֆ (մարլյա): Բոլոր վիրակապական պարագաները պահել լայն բերան և լավ խցած սրվակների մեջ, վոր չկեղտոտվեն և արյան վարակում և այլ բարդություններ չտաճացնեն:

## II. ԳՈՐԾԻՔ ՀԱՎԱՔԵԼԸ ՅԵՎ ԱՏՈՒԳԵԼԸ

Անհրաժեշտ ամանեղենը, խցանները, խողովակները և այլ պարագաներն ունենալով ձեռքի տակ ըստ տվյալ խնդրի կարելի չե գործիք հավաքել:

Նախ պիտի ընտրել համապատասխան անոթներ: Որինակ, ամխաթթվական գազ ստանալու համար անոթ ընտրելիս պիտի նկատի ունենանք, վոր այդ անոթի մեջ կրայարի կամ կավճի կտորներ պիտի տեղավորվեն, 2 կամ 1 անցքանի խցան պիտի հաղցվի: Պարզ է, վոր անոթի վիզն ունեցած խցաններից լայն չպետք է լինի, բայց այնքան էլ նեղ չպիտի լինի, վոր կրաքարի կտորները չանցնեն: Բացի այդ՝ ըստ ունեցած նյութերի և տվյալ փորձի պիտի ընտրել և համապատասխան մեծութան (տարողութան) անոթ: Յեթև կրաքարը կամ թթուն քիչ է, ի հարկե անմտության կլինի շատ մեծ անոթ վերցնել. ստացվող գազը հազիվ անոթը կլեցնի և բուն նպատակի համար ոգտագործելու չի բավի: Իհարկե, կարելի չե և կրաքարը ջարդել, մանր մասերի վերածել:

Անոթից հետո ընտրում են խցանը: Նրա փոքր տրամագիծը շշի վրդից մի փոքր ավել պիտի լինի և մամլիլուց հետո միայն պիտի սեղմ նստի վրի մեջ և խցի բերանը:

Այնուհետև նախապես ընտրած խողովակին հարմար ծակում են, խողովակն անցկացնում և հետո միայն սրվակի վրին սարքում:

Հաճախ պատահում է, վոր գազերի վերաբերյալ փորձեր կատարելիս հավաքած գործիքը չի «պահում», այսինքն ող և անցկացնում: Այդ դեպքում արատը անկասկած գտնվում է խցանի կամ այլ մասերի միացման տեղում: Այդ պատճառով էլ նախքան փորձին անցնելը անհրաժեշտ է հավաքած գործիքը ստուգել: Ամեն դեպքում հատուկ ձևով են վարվում: Որինակ, ամխաթթվական գազ ստանալու գործիքն այսպես են ստուգում. ձագարով ջուր են ամում անոթի մեջ, հետո խողովակով փչում և մատով ծածկում: Զուրը բնականաբար անոթի ողի ճնշումից ձագարի մեջ բարձրանում է այնուհետև չեթե արագ իջնում է, կնշանակե խցանը մի տեղ անց է կացնում. պետք է պարաֆին լեցնել կամ խցանը փոխել: Իսկ յեթև յերկար ժամանակ նա վորոշ բարձրության վրա ֆնում և կնշանակե գործիքը բավարար է:

Մի անցք և մի խողովակ ունեցող գործիքը կարելի չե այսպես փորձել: խողովակի ծալրը գնում են ջրի մեջ և յերկու ձեռքով ամանը տաքացնում, պետք է խողովակի ծալրից ողի պղպղակներ գուրս գան: Յեթև չեն գուրս գալիս, ուրեմն գործիքը չի «պահում»:

Լավ պահող գործիքի մեջ խողովակով անընդհատ չի կարելի փչել, վորոշ չափից դեն թոքերն ել չեն գորում: Բերանը հեռացնելիս այդպիսի սրվակից ճնշած ողբ փշշալով դուրս ե գալիս: Իսկ յեթե անընդհատ փչվում ե, պարզ ե վոր մի տեղ «տանում ե». պետք ե պարաֆին լեցնել կամ սվաղել:

Այստեղ պետք ե շեշտել, վոր ուսուցիչը նախ քան վորձը ցուցադրելը կամ աշակերտներին հանձնարարելը ինքը լավ պիտի ուսումնասիրած ե տիրապետած լինի:

Հաճախ, վարժված փորձարարներն իսկ այս կամ այն դեպքում իսկույն չեն գտնում փորձի անհաջողության պատճառը: Այդ պատճառով ել նախ քան դասարան մտնելը զեկավարը պետք ե փորձը կատարի զանազան ձևերով ե մի քանի անգամ: Որինակ, ածխաթթվական գազ ստանալու գործիքը կարելի չե պատրաստել լայն վիզ սրվակով ե 2 անցքանի խողովակով, կարելի չե նեղ վիզ սրվակով ե մի անցքանի խցանով, կարելի չե չերկվիզ վուլֆրան սրվակով, կարելի չե առանց ձազարի, ձազարով, փայտե սեղմիչով, Մորի սեղմիչով ե մի քանի տասնյակ ձևով՝ նույն թե ինչպիսի հնարավորություններ կան զպրոցի տրամադրությունն տակ: Փորձարարը պիտի կարողանա առանց հիմնական գաղափարն աչքաթող անելու, մանրամասնությունների մեջ փոփոխություններ մտցնել ե առաջարկած ձևվը իր պայմաններին համապատասխան ձևափոխել: Այստեղից պարզ ե, վոր փորձարարը, վոշ միայն տեխնիկային պիտի տիրապետի, այլ ե տեսականին:

Փորձի ասպարիզում փորձարարը պիտի իրեն զգա ինչպես ձուկը ջրում: Միայն այս դեպքում բոլոր փորձերը կհաջողվեն ե գործնական աշխատանքներն արդյունավետ կլինեն:

### III. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ

Քառամյակի լաբորատորական պրակտիկայի համար անհրաժեշտ նյութերից շատերը կարելի չե ձարել տներից, որինակ՝ չոլ, քացախ, կիր, մետաղներ: Թվենք մի քանի ամենաանհրաժեշտները ե ամենագործածականները.

1. **Աղաքրուհ** անհրաժեշտ ե ածխաթթվական գազ ստանալու, վոսկրի հանքային մասը լուծելու ե այլ աշխատանքների համար: Պետք ե ունենալ 10—15 տոկոսանոց. դրա համար ծախու աղաթթուն յերկու անգամ նոսրացնում են ջրով՝ մեկ ծավալ աղաթթվի հետ խառնում են մեկ ծավալ ջուր: Պահել ապակե խցանով սրվակի մեջ, կամ չեթե այդպիսին չունենք՝ գոնե պարաֆինած խցան գործածել: Սրվակի վրա թուղթ կպցնել, վորի վրա խոշոր տառերով գրել «Աղաթթու», տակը մանր տառերով «նոսրացրած»: Աղաթթուն կարելի չե փոխարինել ծծմբաթթվով, թունդ քացախով կամ այլ թթուներով: Ծախու թանձր ծծմբաթթուն պետք ե 5—6 անգամ ջրով նոսրացնել: Պետք ե հիշել, վոր խիտ ծծմբաթթուն մեծ յեռանդով ջրի հետ միանում ե ուժեղ տաքանում: Դժբախտ դեպքերի առաջ առնելու համար պետք ե հետևյալ կանոնները խստորեն գործադրել. ա) թթուն ածել ջրի մեջ ե վոշ ընդհատակը. բ) թթուն բոլորը միանգամից չածել ջրի մեջ, այլ մաս մաս ե ապակյա ձողով խառնել:

Յեթե ջուրն ածենք թթվի մեջ վերջինս կարող ե շաղ գալ ե շորերը, դեմքն ու ձեռքերն այրել:

Թանձր ծծմբաթթուն արագ քայքայում ե որգանական նյութերը ե ածխացնում. զգուշանալ սեղանի, շորերի, մարմնի վրա թափելուց: Թանձր ծծմբաթթվի ամանը կեղևի կամ ուտինե խցանով չծածկել, այլ միայն ապակյա խանով: Բերանը միշտ լավ խցած պահել:

Քացախն ել կարելի չե գործածել իբր թթու, սակայն պիտի ձարել ամենաթունդը:

2. **Կրաջուր** պետք ե միշտ ունենալ ձեռքի տակ: Դրան պիտի տրամադրել մի մեծ սրվակ կամ շիշ. տակը ածել 3—4 սանտիմետր հաստություն մը հանպցրած թարմ կիր (փոշի), ապա վրան ջուր ե լավ խառնել: Անոթը լավ խցանել ե դնել դարակի վրա, մինչև վոր լավ պարզվի: Մի քանի որից հետո, յերբ հեղուկը միանգամայն կը պարզվի, պետք ե զգուշությամբ պարզածը քամիչով կամ ուղղակի ածել մի մաքուր սրվակի մեջ, իսկ նրստվածքի վրա նորից ջուր ածել ե խառնել: Այսպիսով կարելի չե այնքան անհրաժեշտ կրաջուրը միշտ ձեռքի տակ ունենալ: Կարելի չե ե ջրով բաց անելուց հետո անմիջապես քանել ե գործածել, բաց դա շատ թուլ կլինի: ջուրը կրով հագեցնելու համար ժամանակ ե պետք:

Մաքուր կրաջուր լի սրվակը միշտ պիտի խցած պահել, վոր ողի ածխաթթվական գազը մուտք չգործի ե կրաջուրը չը փչացնի: Սակայն ինչպես ել պահելու լինենք, այնուամենայնիվ ողի ածխաթթվական գազը ներս ե մտնում, միանում ե լուծված կրի հետ ե տալիս կրաքար. վերջինս կամ նստում ե պատերին ու հատակին կամ հեղուկի յերեսին փառ կապում: Այդ նշաններն ակնհայտնի ապացույց են, վոր կրաջուրը փչացել ե կամ փչանալու վրա չե: Յեթե վերջնականապես դեռ չի փչացել, քամել ե գործածել (փորձել արառչնչելով): Սակայն կիրը աժան բան ե ե ավելի լավ ե հին կրաջուրը թափել, ամանը կրաքարից ազատել (լուծել մի քանի կաթիլ աղաթթվով), լավ լվանալ ե նոր կրաջուրով լեցնել:

Կրաջրի ամանի վրա ես պիտի թուղթ լինի կպած, վրան գրած «Կրաջուր». իսկ տակը՝ պատրաստելու կամ սրվակը լցնելու ժամանակը (ամսաթիվ, ամիս, տարի):

3. **Կրաքար** շատ տարածված հանք ե ե համեմատաբար հեշտ ե ձեռք բերվում: Կարելի չե հեշտություն մը ճանաչել. դրա համար պետք ե կրաքար կարժվածի վրա քիչ թթու կաթեցնել ե տեսնել յեռում ե թե վոշ չեթե յեռա, ուրեմն կրաքար ե:

Կրաքարը կարելի չե կավճով կամ մարմարով փոխարինել: Սովորաբար զպրոցում գործածվող կավիճը մաքուր կրաքար չի լինում, այլ խառ գանազան այլ նյութերի հետ. ձեռնտու չե գործածել: Մարմարն ել ավելի դժվար ե ձարվում քան կրաքարն ու կավիճը:

4. **Չհանգած կիր** ել յերբեմն պետք ե գալիս, սակայն սրա պահելը դժվար ե. նա ողից ջուր ե ածխաթթվական գազ ե կլանում ե կրաքարի փոխարկվում: Չհանգած կիրը թթվից չի յեռում, այլ ջրից տաքանում ե ե մի քանի բոպչելում վեր ե ածվում սպիտակ փոշու (հանգած կիր): Պետք ե չհանգած կիր պարունակող անոթը լավ խցել ե վրայից ել անպայման պարաֆին լեցնել:

5. **Բերրոլեսյան** ազը պետք ե թթվածին ստանալու համար: Սարա-

վական գործածական աղ և. սովորաբար կոկորդը վողողելու համար են գործածում: Կարելի չե գնել ամեն մի դեղատանը: Նա պայթուցիկ նյութ և. պետք է կրակից հեռու պահել և ուժեղ շփումների չյնթարկել: Բերթոլետյան աղն անպայման մաքուր պիտի լինի. յեթե հետը որգանական նյութեր լինեն խառը, տաքացնելիս նախ կայծեր կտա, ապա կարող է պայթիլ:

6. Մանկանի պերոքսիդը սև ծանր փոշի չե: Յեթե մեծ մեծ կտորներով է ձեռք բերված, պետք է մուրճով մանրացնել: Խառնում են բերթոլետյան աղի հետ. նպաստում է թթվածնի անջատվելուն՝ ավելի ցածր ջերմաստիճանի ժամանակ: Մանգանի պերոքսիդը պետք է մաքուր լինի և որգանական մասեր կամ ածուխ չպարունակի. հակառակ դեպքում բերթոլետյան աղի հետ տաքացնելիս պայթյուն կառաջանա: Այդ բանը կանխելու համար պետք է մանգանի պերոքսիդն ածել թիթեղի վրա և ուժեղ կրակի վրա տաքացնել. որգանական մասերը և ածուխը կայրվեն, կմնա չաչրվող մասը:

Մանգանի պերոքսիդը կարելի չե լավ լվացած մանր ավազով փոխարինել. սա նույնպես որգանական մասեր կամ ածուխ չպետք է պարունակի:

7. Յոգի սպիրտային լուծույթը վոչ միայն իրրե պեղ գործադրել, այլ և իրր լաբորատորական նյութ ուլան հայտնաբերելու համար: Պետք է ունենալ նաե ծծ ու մ ք իրր փոշի կամ կտորներով:

8. Մե ս ա դ ե ե թ ի ց անհրաժեշտ են՝ կապար, կլայել (անագ), ցինկ, պղինձ, չերկաթ, ալյումին, սնդիկ և այլն: Մնդիկի գոլորշին որգանիզմի համար թույն է, պետք է անոթը միշտ խցած պահել: Անհրաժեշտ է գոնե մեկ կիլո (ծանրաչափ պատրաստելու համար):

9. Զ ա ճ ա զ ա ն աղ եր՝ սեղանի աղ, պղնձե արջասպ, շիբ, սալպետր (բորակ) պետք է ունենալ լուծելու, բյուրեղացնելու և այլ փորձերի համար: պահել խցանած անոթների մեջ: Սրանք շատ գործածական աղեր են: Կարելի չե ճարել դեղատանը, կոոպերատիվում կամ ազրոկայանում:

10. Ս պ ի ռ Տ Յ անփոխարինելի չե վառելու համար: Սակայն պետք է հիշել, վոր նա արագ գոլորշիանում է, պետք է պահել ամուր խցած շշերում և կրակից հեռու պահել: Սպիրտը գործածել զանազան կենդանիներ ու բույսեր պահելու համար:

Գնել վոչ պակաս քան 70 տատիճանի սպիրտ:

### IV. ՇԵՏԱԶՈՏՄԱՆ ՆՅՈՒԹԻ ՄԹԵՐՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՇԵԼԸ

Հետազոտական մեթոդը թշնամի չե բոլոր տեսակի կոկած, դմսած և կնքած իրերի: Այդ իրերով կարելի չե միայն հիանալ, նրանց վրա զարմանալ և կամ լավագույն դեպքում տեսնել: Սակայն այդ «գիտողութունը» զանազան գզալուծյունների հարուստ զուգորդումներից գուրկ է, հետևապես և թերի:

Իբր պեժ է սալ յեբխալի ձեռք—այս է հետազոտական մեթոդի «ալրը»: Սա չե ամենահիմնական պայմանը և դրանից գուրս հետազոտական մեթոդը կիրառվել չի կարող, նա անփոզնաշար և հմոցիոնալ յերանգավարումից կամ ինչպես ժողովուրդն և ասում՝ համ ու հոտից գուրկ կլինի:

Այս պայմանից չլինելով պետք է ամեն տեսակի իրից բաղմաթիվ ուրինակներ ամբարել: Յեթե լաբորատորիա կառուցելը վորոշ չափով կախում ունի նյութական միջոցներից, ապա այստեղ նրանք բոլորովին անտեղի չեն՝ գնովի հետազոտելի իրը նույն իսկ կրթականորեն ցանկալի չե: Նա յերեխայի միջավայրի արտահայտիչը չե, կրում է իր վրա արհեստականության, սարքած լինելու կնիք և վերջապես թանկ է նստում՝ առանց իր վրա դրած հույսերն արդարացնելու: Թե դիդակտիկական և թե տնտեսական պայմաններին միանգամայն բավարարում է իրենց՝ աշակերտների հավաքած հում նյութը: Այդ հավաքելը կազմակերպված և պլանային դարձնելու համար ուսուցիչը նախորոք պիտի մտածի և իր տարեկան աշխատանքների մեջ մտցնի:

Աշխատանքի տարեկան պլանը կազմելիս նա հատուկ սյունակում կամ մի առանձին թղթի վրա պետք է նշանակի բոլոր յինթագրվելիք աշխատանքները և նրանց համար անհրաժեշտ հետազոտելի նյութը: Ապա այդ ցուցակը ձեռքի տակ ունենալով՝ նա կարող է աստիճանաբար հավաքել անհրաժեշտ իրերը: Այս բանում շատ կոծանդակեն բնագիտական և արտադրական եկսկուրսիաները: Ամբողջ աշխատանքը պիտի անեն և կանեն յերեխաները. պետք է միայն նրանց հետաքրքրել, հրապուրել այդ աշխատանքով, վոգևորել և յւրախուսել: Հավաքած 30 կամ 40-ական որինակ իրերը՝ գրանիտ, թերթաքար, կրաքար, ծաղիկներ, բղիզներ, տեքստիլ կամ պղնձե գործարանից ստացած նմուշները, սերմերի տեսակները, պտուղների հավաքածուները պիտի ըստ տեսակի դասավորել աբղիների մեջ, համարակալել, ցուցակագրել և ալնպիսի տեղ պահել, վոր անտեղի չփչանան:

Ահուհետև կարելի չե ըստ կարիքի հանել այս կամ այն արկղի նյութը, բաժանել յերեխաներին և նորմալ պարապմունքի անցնել: Դիցուք պարապմունքի թեման է կավը, պետք է հանել № 14 արկղը և նյութը բաժանել յերեխաներին: Աշխատանքից հետո նորից հավաքել և պահել:

Դժվարը գործը սկսելն է և առաջին տարին հավաքելն է. հետո կարելի չե ամեն տարի միայն փչացածները լրացնել կամ նոր տեսակի նյութեր ձեռք բերել:

Ի հարկե կան աշխատանքներ, վոր այժմ հնարավոր չեն աշակերտի ձեռքը տալ, որինակ ծանրաչափ պատրաստել, կամ ջերմաչափի վերոն փորձել: Այսպիսի դեպքերում ակամա պիտի ցուցադրման դիմել Սակայն պետք է հո.սալ, վոր դա ևս ժամանակավոր յերևույթ է և շատ հեռու չե ալն որը, յերբ նման թանգարժեք իրերն ել կարելի չե առատորեն ձեռք բերել և տալ աշակերտների ձեռքը:

### V. ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ

Դպրոցական պարապմունքների շրջանի մի խոշոր մասն ընկնում է ձմեռը, յերբ կենդանի բնությունը դիտել բավական դժվար է: Այդ բացը մի փոքր մեղմելու, հետազոտելու համար կենդանի նյութ ունենալու համար պիտի կազմակերպվել կենդանի տնկյուն՝ ծաղկամաններ, ծլած սերմեր, կանաչեցրած ուռենու կամ բարդու ճյուղեր:

Դրանց կողքին կարելի չե և մի ակվարիում ավելացնել, վոր միշտ շարժում է յերեխաների հետաքրքրությունը: Ակվարիում պատրաստելու հա-

մար պետք է ունենալ մի մեծ ապակցա անոթ. քառանկյունի կամ կլոր (քաղցրեղենի բանկա) ապակցա աման՝ մի քանի մետր տարածութեամբ: Հատակին ածել 2—3 սանտիմետր հաստութեամբ գետի բլացած ավազ: Տնկել մի քանի ջրաբույսեր. վերցնել դանդաղ հոսող առուներից կամ լճերից: Հետո ամանը ջրով լցնել 3--5 սանտիմետր լեզրից պակաս և մեջը գցել մանր ձկներ, ջրալին խզուկներ, գարնանը՝ շերեփուկներ: Դնել վոչ շատ լույս տեղ: Մեկ կամ չերկու շաբաթը մեկ անգամ ջուրը փոխել: Տաք ամաններից կարելի չէ ակվարիումի բնակչութեունը հարստացնել նորանոր բույսերով և կենդանիներով:

### VI. ՅԱՆԳԱՐԱՆ

Թանգարանի իսկական տեղը կրթական սիստեմի մեջ վորոշելու համար պետք է հիշել «թանգարան սարքելու» դիրակտիվական հիմնավորումը: Խնդիրը մոտիկից և խոր քննելով կարելի չէ համոզվել, վոր վոչ այնքան ինքը թանգարանն ունի կրթական մեծ արժեք, վորքան թանգարան կազմելու գործողությունը: Այս տեսակետից թանգարանը վոչ մի դեպքում կրթական սիստեմի առանցք լինելու հավանությունը ունենալ չի կարող:

Սակայն կան մի շարք պայմաններ, վորոնք թանգարանի արժեքը բարձրացնում են և վորոշ տեսակետից նրան անփոխարինելի չեն դարձնում: Թվենք այդ պայմանները.

1) Յանկալի չէ, վոր չերեխան վոչ միայն դեռ ու ըմբռնի իր շրջապատը, այլ և կարողանա կատարած դիտողությունը կամ փորձն իրականում ձևավորել և ամբացնել: Դիցուք չերեխան դեռ է, վոր մորեխները չոր խոտի մեջ անասանների չեն դառնում: Պետք է առաջադրել նրա պրեպարատ պատրաստել՝ չորացնել մորեխը, հավաքել այդ չոր խոտերից և այդ բոլորը բնականի նման սարքել արկղի մեջ կամ ստվարաթղթի վրա: Այդ աշխատանքը կարելի չէ կատարել տալ և դեպի նա հետաքրքրությունը կարթեցնել, չեթե այդ պրեպարատի տեղը թանգարանում ապահովվի:

2) Մի հոգեբանական մոմենտ էս կա, վոր չերեխայի համար խոշոր նշանակություն ունի: Յեթե նա տեսի, վոր իր պատրաստած իրը դեն են ձգում, ապա նա կսառի դեպի իր պարապմունքները: Նրա աշխատանքը գնահատելով, արդյունքը խնամքով պահելով միայն կարելի չէ խրախուսել դեպի աշխատանք և նորանոր նվաճումներ: Նա կաշխատի պահվող իրը շինել ուշագրությունը, մաքուր, ակկուրատ և գեղեցիկ: Ուսուցչին էլ հենց այդ է պետք. թանգարանն այս տեսակետից խրախուսական միջոց է:

3) Թանգարանը հաշվետու ցուցահանդեսը դարձնում է տարեկան աշխատանքների իսկական արտացոլող, բազմադան և բովանդակալի: Պատահում է, վոր ամբողջ տարին չերեխաները վոչ մի աշխատանք չեն կատարում, կամ կատարածները մի բանի նման չեն լինում: Սակայն հենց վոր տարեվերջը մոտենում, է մի քանի որում նկարում, գծում, տաշում, սարքում են և ցուցահանդես ստեղծում: Այսպիսի ցուցահանդեսը իրական չի և իր նպատակին չի ծառայում: Միայն տարվա ընթացքում կատարած բազմակողմանի աշխատանքների հավաքածուն կարող է այնպիսի ցուցահանդես համարվել, վոր խոր կրթական և հասարակական արժեք ունի և կարող է հիմք ծառայել հին սխալներից լեզնելով դպրոցական սիստեմի մեջ բարե-

նորոգումներ մտցնելու: Այլ տիպի ցուցահանդես խորհրդալին դպրոցին մազաչափ անգամ չի ոգնի: Թանգարանն է այն տեղը, ուր խնամքով խմբվում և պահվում են տարեկան իսկական ցուցահանդեսի առարկաները:

4) Ցուցահանդեսը փակվելուց հետո լավագույն և տիպիկ աշխատանքները պիտի պահել թանգարանում՝ նշելով վրան տարին, ամիսը, խումբը և աշակերտի անունն ու ազգանունը: Մի քանի տարվա հավաքված նյութերը պարզորեն ցույց կտան, թե ինչ գծով են զարգացել դպրոցական ծրագրերը, մեթոդները, առարկաները, հաջացքները: Սա մի արխիվ կլինի, սակայն վոչ սոսկ ստուգիչ հանձնաժողովների ու անհատների համար, այլ՝ լայն մասալի: Այս տեսակետից դպրոցը ժողովրդին մոտ պահելու ձևերից մեկն էլ թանգարանն է:

5) Վերջապես չպետք է մոռանալ, վոր չերեխաների ձեռքով սարքած գավառագիտական նշանակություն ունեցող իրերը հասարակական դասախոսությունների ժամանակ կարող են իրը ցուցադրման նյութ ծառայել:

Գյուղատնտեսը իր գրույցների ժամանակ ոգտվում է դպրոցական թանգարանի իրերից, ծնողները սովորում են իրենց չերեխաների պատրաստած իրերի վրա: Դպրոցի արժեքը մասսայի աչքում բարձրանում է. վերջինս տրամադրվում է ավելի մեծ աջակցություն ցույց տալ դպրոցին և նրա նոր ձևի աշխատանքներին ընդառաջելու:

Այս կետում թագնվում է զարգացման մի այնպիսի հուժկու ֆակտոր, հասարակական մի այնպիսի խոշոր մոմենտ, վոր գլխովին հատուցում է դպրոցի, ուսուցչի, աշակերտի, ծնողի և դպրոցական բարեկամի տարիների անդուլ աշխատանքները: Մեղանում դպրոցը կարող է զարգանալ միայն հասարակորեն և հասարակության հետ: Այս տեսակետից թանգարանի դերը հսկայական է:

6) Յեթե մենք շարունակենք թանգարանի շուրջը խորհել՝ մեծ մեղք գործած կլինենք չեթե չշեշտենք և գավառագիտական նյութ ամբարելու վրա: Ընդունա սասած մեր դպրոցի և մանավանդ նրանց ցածր խմբերի ծրագրերը հիմնվում է գլխավորապես, չերեխի էլ բացառապես, «գավառագիտական» նյութի վրա. այստեղ հանդես են գալիս չերեխայի ապրած վայրը, նրա շրջակայքը, անտեսությունը, կուլտուրան, նիստ ու կացը, իրենց ձորը, դեռը, անտառը, ծաղիկներն ու թիթեռները: Կարծես կարիք չկա մի ավելորդ անգամ շեշտել, թե գավառագիտական նյութ պետք է ամբարել: Սակայն դրա կարիքը կա, վորովհետև մինչ այժմ մեր ասածների մեջ գավառագիտական թանգարանը իրը կրթական ինքնամփոփ մի գործոն չեր հանդիսանում:

Պատկերացրեք մի ուսուցիչ, վոր նոր անձ է տվյալ շրջանում: Նրան տառադրված է դպրոցական ծրագրի հիման վրա կազմել աշխատանքների տարեկան պլանը: Սա մի լուրջ և խոր աշխատանք է. տարեկան պլանի հաջող կազմելուց է կախված և դպրոցական պարապմունքների արդյունավետությունը բավական զգալի տոկոսը: Սակայն մեր նոր նշանակված ընկերը դեռ ծանոթ չէ շրջանին. համապատասխան նյութ էլ չկա: Ի՞նչ պիտի անի նա: Կամ պիտի պլան բոլորովին չկազմի և բախտի բերմամբ ծրագրի աված նյութը վերցնի՝ առանց ավյալ շրջանի սպեցիֆիկ պայմաններին համաձայնեցնելու. սա ամենակարճ բայց և ամենաանցանկա-

լի ճանապարհն է: Կամ, յեթի նա բարեխիղճ քաղաքացի չէ, պիտի կաշվից դուրս գա և տանելի պլան կազմի, բայց այդ պլանն անողայման զգալի բացեր կունենա: Այսպիսի պատասխանատու դեպքերում նրան զժվար կացութիւնից կարող է հանել միայն գովառուցիտական թանգարանը: Երջանում գործածվող հին ու նոր փեթակների մոդելները, բամբակի մշակման շուրջը զանազան մոդելներ, նկարներ, նմուշներ և այլ իրեր, նրան հարուստ նյութ կտան իրական և բովանդակալի տարեկան պլան կազմելու: Գովառուցիտական թանգարանն ինքնամփոփ մի կազմակերպութիւն է իր հատուկ նպատակներով: Այդ նպատակները դպրոցական գործի խորացմանը մեծապես նպաստում են: Յեթի մենք ընդունում ենք, վոր դպրոցը կառուցողներ և պատրաստում, ապա նրանք քաջ պիտի ծանոթ լինեն այն միջավայրին, վորի մեջ ապրելու և գործելու չեն: Սա բացառիկ նշանակութիւն ունեցող մի պայման է, վորի կիրառելովը մեր շինարարական տեմպը զգալի կարագանա: (Իզուր չեն ստում՝ վնչ այն ժողովրդին, վոր իր յերկիրը չի ճանաչում:)

Շատ տեղերում դպրոցն է միակ կուլտուրական վայրը, ուր կարող է ապաստան գտնել գովառուցիտական թանգարանը և սերտ կապվել դպրոցական ընթացիկ աշխատանքների հետ: Անկախ դրանից, յեթի նույնիսկ ավյալ վայրում հատուկ գովառուցիտական թանգարան էլ կա, այնուամենայնիվ դպրոցը պետք է իր աշխատանքները այդ գծով կազմակերպի և թանգարանը լրացնի գովառուցիտական նյութերով: Զանազան մոդելների ու նմուշների կողքին պետք է պահել և ֆենոլոգիկ դիտողութիւնների ցուցակներ, դիագրամներ, ստատիստիկ տվյալներ, քարտեզներ, հատակագծեր, հագուստի տարազներ և այլն:

Լավ կազմակերպված գովառուցիտական թանգարանը ցույց կտա, թե՛ ա) Ինչ արտադրական ուժեր կան շրջանում (հող, անտառ, մարգագետին, ձահրճ, գետ, թափվող ջուր, հանքեր, կենդանիներ և այլն:)

բ. Ինչպես են այդ շրջանում մարդիկ կովում բնութիւն դեմ ու նվաճում նրա ուժերը (տեխնիկայի զարգացումը, մեքենաներ, պարարտացում, անտառի ոգտագործումն, ցանքսաշրջանութիւն և այլն):

գ. Ինչպես տեխնիկայի զարգացման հետ փոխվում են տնտեսութիւն ձևերը և մարդկանց կենցաղը (պատմական, տնտեսական և ազգագրական նյութ):

Գովառուցիտական թանգարանը կամ ավելի ճիշտ գովառուցիտական թեքումը դպրոցական թանգարանում կարող է իր զարգացման փուլերն ունենալ: Նա կսկսի դպրոցից և նրա մոտի շրջակայքից, կանցնի գյուղին, ապա գյուղի գաշտերին և այլ հողատեսքերին, ապա հարևան գյուղերին, ամբողջ շրջանին և ի վերջո գովառուին:

Իհարկէ այստեղ դպրոցի աշակերտութիւնն ուսուցչի հետ միասին կարող է իր թանգարանը հարստացնել՝ կրկնակի իրերը փոխանակելով այլ տեղերի թանգարանների հետ: Սա կբարձրացնի հետաքրքրութիւնը դեպի թանգարանական աշխատանքը, դեպի գովառու ուսումնասիրութիւնը, տարբեր դպրոցներ ու թանգարաններ կենդանի կերպով իրար հետ կկապի:

Գործը լավ կազմակերպելու դեպքում կարելի չէ մեծ ոժանդակութիւն ստանալ գյուղատնտեսի, իժշկի, բուժակի, խորհրդի ու գործկոմի անդամների և այլ հասարակական գործիչների կողմից:

Գովառուցիտութիւնը դպրոցական թանգարանի այն մակերեսն է, վորով դպրոցը ձուլվում է կյանքի՝ բնութիւն ու հասարակութիւն բազմակողմանի արտահայտութիւնների հետ:

Այս ուղղութիւմը մենք դեռ սկսնակ ենք և անելու շատ բան ունենք:

**ԳՆՈՎԻ ԻՐԵՐԻ ՆՎՍՁՍԳՈՒՅՆ ՅՈՒՅՍԿ**

(Հաշված 30 աշակերտի համար, վորոնք աշխատում են յերեքական հողի մի խմբակ կազմած)

| № № | Առարկայի անուն  | Քանակ     | Գին      | Գումար   | Ծանոթ. |
|-----|---|-----------|----------|----------|--------|
| 1.  | Ջերմաչափ . . . . .  | 1 հատ     | 2 «—4»   | 2 «—4»   |        |
| 2.  | Կողմնացուլց . . . . .                                     | 1 »       | 3 » 36 » | 3 » 36 » |        |
| 3.  | Մագնիս (պայտածև) . . . . .                                | 1 »       | 4 » 20 » | 4 » 20 » |        |
| 4.  | Փորձանակներ 1 <sup>1</sup> / <sub>2</sub> սանտ. տրամագծով | 40 »      | — 6 »    | 2 » 40 » |        |
| 5.  | » » 2 սանտ. »   | 20 »      | — 9 »    | 1 » 80 » |        |
| 6.  | Ոցաններ . . . . .   | 30 »      | — 3 »    | — 90 »   |        |
| 7.  | Ոոդովակներ ապակյա 5 միլիմետր տրամ.                        | 1 կիլո    | 3 » 36 » | 3 » 36 » |        |
| 8.  | Ոոդովակ ռետինե » »  | 3 մետր    | — 40 »   | 1 » 20 » |        |
| 9.  | Մենզուր 100 խոր. սանտ.                                    | 1 »       | 2 » 30 » | 2 » 30 » |        |
| 10. | Աղաթ թու թանձր . . . . .                                  | 0, 5 կիլո | 2 » 50 » | 1 » 25 » |        |
| 11. | Բերթոլետյան աղ . . . . .                                  | 0, 5 »    | 1 » 12 » | — » 56 » |        |
| 12. | Սպիրտ . . . . .   | 3 շիշ.    | 1 » 54 » | 4 » 62 » |        |

Ընդամենը՝ — — 27ս. 95կ.

Ծանոթ. Գները նշանակված են ըստ Լ. Ժ. Կ.-ին կից դպրոցական պիտույքների մատակարարման բազայի ցուցակների:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

|   |    |
|---|----|
| Ա. ԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ . . . . .                                    | 62 |
| Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ . . . . .                                    | 3  |
| Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԵՎԵՐ . . . . .                                      | 5  |
| I. Լաբորատորական դաս . . . . .                                    | 17 |
| II. Ցուցադրական դաս . . . . .                                     | »  |
| III. Եքսկուրսիա . . . . .   | 21 |
| IV. Արտադրական աշխատանք . . . . .                                 | 22 |
| V. Կյանքի և բնության մեջ նյութեր հավաքելու աշխատանք . . . . .     | 25 |
| VI. Ջրույց . . . . .  | 26 |
| VII. Կապակցական պատմություն . . . . .                             | 27 |
| VIII. Պատկեր և նկար . . . . .                                     | 28 |
| IX. Որագիր . . . . .  | 29 |
| X. Դպրոցական նաժարագրություն . . . . .                            | »  |
| Գ. ԴԱՍԱՐԱՆ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՓՈՐՁԻ ՏԵԽՆԻԿԱՆ . . . . . | 30 |
| I. Անհրաժեշտ իրերը և նրանց հետ վարվելու ձևերը . . . . .           | 32 |
| ա. Սպիրտայրոց . . . . .   | 34 |
| բ. Ամանեղեն . . . . .   | »  |
| գ. Ապակյա խողովակներ . . . . .                                    | 37 |
| դ. Ռետինե խողովակներ . . . . .                                    | 39 |
| ե. Խցաններ . . . . .  | 41 |
| զ. Չափելու գործիքներ . . . . .                                    | 41 |
| է. Պատվանդաններ և շտապիփներ . . . . .                             | 44 |
| ը. Այլ պարագաներ . . . . .  | 46 |
| II. ԳՈՐԾԻՔ ՀԱՎԱՔԵԼԸ ՅԵՎ ՍՏՈՒԳԵԼԸ . . . . .                        | 47 |
| III. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ . . . . .                                  | 49 |
| IV. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԹԵՐՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՀԵԼԸ . . . . .            | 50 |
| V. ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ . . . . .                                      | 52 |
| VI. ԹԱՆԳԱՐԱՆ . . . . .  | 53 |
| Գնովի իրերի նվազագույն ցուցակ . . . . .                           | 51 |
|   | 57 |



<< Ազգային գրադարան



NL0243712

28

### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ

Մ. Զառաբլյան.— Մարզ. համառոտ կազմախոսութիւնն և  
 Բնախոսութիւնն 60 է.  
 Մ. Զառաբլյան և Ա. Աբարաբյան. — ԲՆՈՒԹՅՈՒՆ 1 ս. 50 է.  
 Ն. Ի. Լվով.— ԿԵՆՏՐՈՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
 Բ. գիրք թարգ. Մ. Զ. 1 ս. 40 է.

### ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

Մ. Զառաբլյան և Ա. Աբարաբյան. — «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆԻՔ»  
 Աշխատանքի գիրք աշակերտ-  
 ների համար  
 Մ. Զառաբլյան և Ա. Աբարաբյան.— «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆԻՔ».  
 Աշխատանքի գրքին սմանգակ  
 գրադարան կազմված 22 հատ  
 գրքույիներից.  
 Ն. Ի. Լվով.— ԿԵՆՏՐՈՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ —  
 Ա. գիրք. թարգ. Մ. Զ.

